

ԵՐԵՎԱՆԻ «ԳԼԱԶՈՐ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՎԵՏԻՔ ՀՈՎԱԿԻՄԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ
ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Ը. 00. 02. «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում»
մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի
հայցման համար

ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Վարդան Բաբկենի Բոստանջյան

ԵՐԵՎԱՆ – 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3

Գլուխ 1. Գործարարության ու ձեռնարկատիրության դերը տնտեսական համակարգում և դրա տեսամեթոդաբանական արդի հիմնահարցերը.....10

1.1 Գործարարության և ձեռնարկատիրության ժամանակակից դրսևորումներն ու մեկնաբանությունները.....10

1.2 Գործարարության ծրագրի դերն ու նշանակությունը ժամանակակից տնտեսավարման պայմաններում.....23

1.3. Փոքր և միջին ձեռնարկատիրության կազմակերպման բնորոշ առանձնահատկությունները ՀՀ-ում և միջազգային պրակտիկայում33

Գլուխ 2. Փոքր և միջին ձեռնարկատիրության առանձնահատկությունները և զարգացման դինամիկան ՀՀ-ում49

2.1. Ձեռնարկատիրության և մասնավորեցման զարգացման էվոլյուցիան 20-րդ դարում՝ անցումային տնտեսություն ունեցող երկրներում.....49

2.2. Փոքր և միջին ձեռնարկատիրությունը բնութագրող հիմնական ցուցանիշների վերլուծությունը ՀՀ-ում.....66

2.3. Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի համեմատական վերլուծության առանձնահատկությունները.....80

Գլուխ 3. Փոքր և միջին ձեռնարկատիրության կառավարման արդյունավետության բարձրացման արդի գերակայությունները ՀՀ-ում.....88

3.1. Փոքր և միջին ձեռնարկատիրության կարգավորման կատարելագործման հիմնուղիները ՀՀ-ում և միջազգային պրակտիկայում.....88

3.2. Փոքր և միջին ձեռնարկատիրության արտահանման խրախուսման քաղաքականության բարելավման ուղիները.....99

3.3. Փոքր և միջին ձեռնարկատիրության ծավալման խթանման գերակայությունները ՀՀ-ում121

Եզրակացություն.....137

Օգտագործված գրականության ցանկ.....144

Ներածություն

Արենախոսության թեմայի արդիականությունը: Հայաստանի Հանրապետությունում շուկայական բարեփոխումները թևակոխել են վճռական փուլ, որի արդյունքում որոշակի պայմաններ են ստեղծվել մասնավոր սեփականության ինստիտուտի ամբողջական համալիր կայացման ու գործարարության և ձեռնարկատիրության ծավալման համար:

Փոքր և միջին ձեռնարկությունները յուրաքանչյուր երկրի քաղաքական, տնտեսական և սոցիալական կայունության կարևորագույն երաշխիքներից են: Ժամանակակից տնտեսավարման պրակտիկայում փոքր և միջին ձեռնարկատիրության հետևողական զարգացումը դրսևորվում է որպես շուկայական հարաբերությունների արմատավորման և տնտեսական ու գիտատեխնիկական առաջընթացի հիմնական երաշխիք: Փոքր և միջին բիզնեսի զարգացումն աջակցում է սեփականատերերի քանակի մեծացմանը, տնտեսապես ակտիվ բնակչության բաժնի մեծացմանը և նոր աշխատատեղերի ստեղծմանը: Այսօր հենց փոքր և միջին բիզնեսը կարող է կատարել այն հնարավոր միջավայրի դերը, որի զարգացման միջոցով ՀՀ տնտեսությունը կգնա դեպի ապագա գլոբալ զարգացում և կստանա իր ուրույն տեղը միջազգային շուկաներում:

Կարևորելով փոքր և միջին ձեռնարկատիրության դերը երկրի տնտեսության հետագա կայուն զարգացման, նոր աշխատատեղերի ստեղծման, բնակչության կենսամակարդակի բարձրացման, հասարակության միջին խավի ձևավորման, հայրենական արտադրողի շահերի պաշտպանության, գործարար և տնտեսական օրենսդրության հետագա կատարելագործման, միջազգային գործարար համագործակցության զարգացման երկրում սոցիալական-տնտեսական և քաղաքական կայունության ապահովման գործում՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը շարունակական քայլեր է ձեռնարկում ՓՄՁ-ին պետական աջակցության ուղղությամբ, ինչը ներկայումս ՀՀ Կառավարության տնտեսական քաղաքականության ռազմավարական և գերակա ուղղություններից մեկն է:¹

¹ Փոքր և միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության 2011թ. ծրագիր /ՀՀ Կառավարության 2011թ. հունվարի 13-ի N 80-Ն որոշում

Հատկապես վերջին 10 տարիների ընթացքում ձևավորվել է գործարարության և ձեռնարկատիրության ծավալման բավականին բարենպաստ իրավական դաշտ, ստեղծվել են համապատասխան լիազորված կառավարման մարմիններ, հատկացվում են ֆինանսական միջոցներ ոչ միայն օտարերկրյա ֆինանսական կազմակերպությունների կողմից, այլ նաև պետական բյուջեից: Սկսած 2002 թվականից մշակվում և իրականացվում են փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության ծրագրեր, որն իրականացնող հիմնական կառույցը «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամն է: Բարեփոխումներ են իրականացվել և շարունակվում են իրականացվել նաև հարկային և մաքսային դաշտում, ինչպես նաև ՓՄՁ սուբյեկտների վարկավորման բնագավառում: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է փոքր և միջին գործարարությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտներին հարկման արտոնյալ դաշտ տեղափոխելուն և սկսնակ գործարարներին արտոնյալ պայմաններով վարկերի տրամադրման գործընթացի նախապատրաստմանը: Վերոնշյալ բարեփոխումների, ինչպես նաև համապատասխան ինստիտուտների ու կառույցների առկայությունը ձևավորել է մի միջավայր, որը նպաստում և աջակցում է ձեռնարկատիրության զարգացմանը:

Կարևորելով փոքր և միջին ձեռնարկատիրության դերը երկրի տնտեսության զարգացման գործում՝ ՀՀ կառավարությունը փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը համարելով Հայաստանի տնտեսության զարգացման գերակա ուղղություններից մեկը՝ շարունակական քայլեր է ձեռնարկում ոլորտի պետական աջակցության և զարգացման ուղղությամբ:

Արտահանման խրախուսման գործում փոքր և միջին ձեռնարկատիրության դերի ուսումնասիրությունը շատ արդիական է այսօր՝ ելնելով այն փաստից, որ փոքր և միջին բիզնեսի զարգացումը ընկած է մեր երկրի հետագա տնտեսական զարգացման հիմքում:

Այդուհանդերձ, Հայաստանի Հանրապետությունում գործարարության և ձեռնարկատիրության ծավալման համակարգը ամբողջապես կայացած համարել չի կարելի և շատ հիմնախնդիրներ հրատապ լուծման, իսկ տնտեսական բազմաթիվ խթանները՝ կատարելագործման կարիք ունեն:

ՀՀ-ում փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի զարգացման միտումների հետ մեկտեղ ՓՄՁ սուբյեկտները դեռ շարունակում են բախվել մի շարք հիմնախնդիրների, որոնք պայմանավորված են, մասնավորապես, նրանց համար ֆինանսական (վարկային) միջոցների անմատչելիությամբ, գործարար տեղեկատվության, խորհրդատվության տրամադրման ու կադրերի մասնագիտական ուսուցման հարցերում առկա դժվարություններով, ՀՀ մի շարք տարածաշրջաններում փոքր և միջին ձեռնարկատիրությանն աջակցող ենթակառուցվածքների բացակայությամբ և (կամ) դրանց անբավարար գործունեությամբ, գործարարության ծավալման հարկային և վարկային խթանների կատարելագործման անհրաժեշտությամբ, մարզերում գործարարության և ձեռնարկատիրության անհամաչափ զարգացման հիմնախնդիրների առկայությամբ, սկսնակ գործարարների համար ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու հնարավորությունների սահմանափակմամբ, և հատկապես, փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտների արտադրանքի՝ շուկաներ առաջմղման և արտահանման հետ կապված խնդիրներով:

Այդ ամենը պայմանավորում է ՀՀ-ում փոքր և միջին ձեռնարկատիրության կատարելագործման անհրաժեշտությունը, ինչով էլ պայմանավորված է սույն ատենախոսության արդիականությունը:

Ատենախոսության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակը ՀՀ փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման արդի հիմնախնդիրների համակարգային ուսումնասիրության ու վերլուծության հիման վրա ՓՄՁ գործընթացների կատարելագործման հիմնարար ուղիների ու հանձնարարականների մշակումն է: Այդ նպատակի իրականացման համար ատենախոսության հիմքում դրվել են հետևյալ խնդիրները.

- գործարարության և ձեռնարկատիրության ժամանակակից դրսևորումների և մեկնաբանությունների ուսումնասիրություն,
- ՀՀ-ում և միջազգային պրակտիկայում փոքր և միջին ձեռնարկատիրության կազմակերպման բնորոշ առանձնահատկությունների ուսումնասիրություն,
- ձեռնարկատիրության և մասնավորեցման զարգացման էվոլյուցիայի ուսումնասիրություն,

- ՀՀ-ում փոքր և միջին ձեռնարկատիրությունը բնութագրող հիմնական ցուցանիշների վերլուծություն,
- Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի համեմատական վերլուծություն,
- ՀՀ-ում և միջազգային պրակտիկայում փոքր և միջին ձեռնարկատիրության կարգավորման կատարելագործման հիմնուղիների բացահայտում,
- Փոքր և միջին ձեռնարկատիրության արտահանման խրախուսման քաղաքականության բարելավման ուղիների մշակում,
- ՀՀ-ում փոքր և միջին ձեռնարկատիրության ծավալման խթանման հիմնարար ուղղությունների բացահայտում
- ՀՀ փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի կառավարման կատարելագործման արդի գերակայությունների բացահայտում և կառուցակարգերի մշակում:

Ուսումնասիրության առարկան և օբյեկտը: Ուսումնասիրության առարկան ՀՀ փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի գործունեության առանձնահատկությունների ու ոլորտի բարելավման հիմնարար ուղղությունների համակողմանի վերլուծությունն ու գնահատումն է՝ ՓՄՁ ոլորտի կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով:

Ուսումնասիրության օբյեկտը ՀՀ փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտն է:

Արենախոսության տեսական/թողարանական հիմքը և տեղեկատվական ապահովումը: Հետազոտությունը կատարվել է կառավարման տեսության, ինչպես նաև գործարարությանն ու ձեռնարկատիրությանը վերաբերող հայրենական և արտասահմանյան հեղինակների աշխատությունների և գիտական հոդվածների ուսումնասիրման և համակարգված վերլուծության հիման վրա: Հետազոտության համար անհրաժեշտ տեղեկատվությունը ստացվել է հայրենական և արտասահմանյան մասնագիտական գրականության աղբյուրներից, գործարարության և ձեռնարկատիրական գործունեությունը կարգավորող ՀՀ օրենքներից և ենթաօրենսդրական ակտերից, ՀՀ ազգային վիճակագրության ծառայության, Զարգացման Հայկական գործակալության, Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) Միության, Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության

զարգացման ազգային կենտրոնի, ՀՀ էկոնոմիկայի նախարարության պաշտոնական տեղեկագրերից, ԻՆՏԵՐՆԵՏ տեղեկատվական ցանցից:

Հետազոտության ընթացքում կիրառվել են տնտեսավիճակագրական, մաթեմատիկական և գրաֆիկական մի շարք մեթոդներ:

Հետազոտության հիմնական գիտական արդյունքները և նորույթը:

Ատենախոսության հիմնական գիտական արդյունքներն ու նորույթը կայանում են հետևյալում:

1. Տրվել է գործարարության և ձեռնարկատիրության նոր մեկնաբանություն՝ ելնելով տնտեսավարման ժամանակակից պրակտիկայից և ՓՄՁ սուբյեկտների գործունեության առանձնահատկություններից, իսկ վերոբերյալ 2 հասկացությունների միջև սահմանագիծը ներկայացնելու նպատակով ներկայացվել է դրանց բնորոշ տարբերիչ առանձնահատկությունները:
2. Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով և ՀՀ ՓՄՁ ոլորտի SWOT վերլուծության արդյունքում՝ օգտագործելով ուժեղ կողմերն ու հնարավորությունները՝ մշակվել են ՀՀ-ում փոքր և միջին ձեռնարկատիրական գործունեության արդյունավետության բարձրացման հայեցակարգային և իրավիճակային մոտեցումներ՝ ՀՀ-ում փոքր և միջին ձեռնարկատիրական գործունեության ոլորտի հետագա զարգացման, գործարարների և ձեռնարկատերերի որակավորման աստիճանի բարձրացման, գիտատեխնիկական նվաճումների գործարկման, ինտեգրացիոն գործընթացների արդյունավետ կառավարման, բնական մրցակցության մակարդակի բարձրացման և փոքր ու միջին ձեռնարկատիրական գործունեության կայուն զարգացման տեսանկյունից:
3. ՀՀ տնտեսական, սոցիալական և քաղաքական զարգացման գործում փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի ներուժի լիարժեք օգտագործման, կայուն տնտեսական աճի ապահովման, բնակչության կենսամակարդակի բարձրացման և ՓՄՁ ոլորտի պետական կարգավորման կատարելագործման նպատակով բացահայտվել են այն միտումներն ու կառուցակարգերը, որոնք կարող են էապես նպաստել ոլորտի հետագա բարգավաճմանը՝ ձեռնարկատիրական գործունեու-

թյան նկատմամբ վարչակազմակերպական ներգործության թուլացման և տնտեսական ազատության տրամադրման, ձեռնարկատիրական գործունեության օժանդակության բազմատեսակացման, սպառողների իրավունքների և շահերի պաշտպանության համակարգի կատարելագործման, ինչպես նաև գործարարության կորպորատիվ կուլտուրայի և էթիկայի կանոնների պահպանման տեսանկյունից:

4. Փոքր և միջին ձեռնարկատիրության արտահանման ծավալների ընդլայնման ու խթանման ծրագրի մշակման ու գործարկման նպատակով բացահայտվել են այդ ոլորտում առկա հիմնախնդիրները՝ ՓՄՁ արտահանման ներուժի բացահայտման, արտահանմանը խոչընդոտող վարչարարական և տեխնիկական արգելքների վերացման, արտաքին առևտրի ֆինանսավորման ու ապահովագրման համակարգի կատարելագործման, ՀՀ-ում արտահանման-ներմուծման ապահովագրական բանկի /EximBank/ ստեղծման, արտերկրում ՀՀ առևտրային ներկայացուցչության /կցորդների/ ինստիտուտի ստեղծման անհրաժեշտության տեսանկյունից:
5. Փոքր և միջին ձեռնարկատիրության արտաքին առևտրի աջակցության և խրախուսման պետական քաղաքականության, ինչպես նաև փոքր և միջին բիզնեսի կողմից արտադրվող ապրանքների արտահանումը խրախուսելու նպատակով նպատակահարմար է ներդնել արտահանման վարկերի համակարգ՝ տարեկան մինչև հինգ տոկոս տոկոսադրույքով՝ հիմնվելով արտահանման մասին պայմանագրի և հաշիվ-ապրանքագրի վրա, ապահովել արտահանման պոտենցիալ ունեցող ապրանքատեսակների սերտիֆիկացումը և գովազդը արտաքին շուկաներում, ինչպես նաև յուրաքանչյուր դիվանագիտական ներկայացուցչության աշխատանքի գնահատման կարևորագույն չափանիշ սահմանել տվյալ տարածաշրջանում կամ երկրում Հայաստանից արտահանման ծավալների ավելացումը, հայկական կազմակերպությունների՝ հատկապես փոքր և միջին ձեռնարկությունների շահերի պաշտպանությունը, ինչպես նաև տվյալ երկրից դեպի Հայաստան ներդրումների աճը:

Հետազոտության արդյունքների կիրառումը և գործնական նշանակությունը:

Աշխատանքում ընդհանրացված տեսական մեկնաբանումները կարող են կիրառվել փոքր և միջին ձեռնարկատիրական գործունեության հետազոտմանը վերաբերվող ատենախոսություններում ու աշխատություններում: Ատենախոսության մեջ մշակված առաջարկությունները կարող են գործնական միջոց հանդիսանալ ՀՀ ՓՄՁ ոլորտի գործունեության արդյունավետության բարձրացման, ՀՀ տնտեսական, սոցիալական և քաղաքական զարգացման գործում փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի ներուժի լիարժեք օգտագործման և ՓՄՁ ոլորտի կառավարման կատարելագործման ուղղությամբ:

Հետազոտության փորձարկումը և հրապարակումները:

Հետազոտության հիմնական դրույթները քննարկվել են Երևանի «Գլաձոր» համալսարանում և Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում կազմակերպված պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ասպիրանտների գիտական նստաշրջաններում: Ատենախոսության հիմնական արդյունքները հրապարակվել են գիտական երեք հոդվածներում:

Արենախոսության կառուցվածքը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքը շարադրված է 152 էջի վրա, ներառյալ գրականության ցանկը:

Գլուխ 1. Գործարարության ու ձեռնարկատիրության դերը տնտեսական համակարգում և դրա տեսամեթոդաբանական արդի հիմնահարցերը

1.1 Գործարարության և ձեռնարկատիրության ժամանակակից դրսևորումներն ու մեկնաբանությունները

Յուրաքանչյուր երկրի զարգացվածության և կենսամակարդակի մասին կարող է պատկերացում տալ այդ երկրում բիզնեսի զարգացվածության մակարդակը, դրա մրցունակ լինելը: Փորձենք հասկանալ՝ ինչ ասել է «բիզնես» կամ որ նույնն է՝ գործարարություն և «ձեռնարկատիրական գործունեություն»:

Ժամանակակից տնտեսագիտական գրականության մեջ գոյություն ունեն մի շարք տարատեսակ սահմանումներ և մեկնաբանություններ գործարարության և ձեռնարկատիրության վերաբերյալ: Որոշ հեղինակներ դրանք նույնականացնում են, իսկ որոշներն էլ՝ փորձում սահմանազատել: Ներկայացնենք դրանցից առավել տարածվածները, իսկ այդուհետև կփորձենք ներկայացնել մեր կողմից առաջարկվող սահմանումները:

Գործարարությունը տնտեսական գործունեություն է, որը բնութագրում է տնտեսավարող սուբյեկտների գործունեության ոլորտը և նրա տնտեսական շահերը, «գործունեության մեծությունը և ծավալները /փոքր, միջին, խոշոր գործարարություն/, ինչպես նաև տնտեսական սուբյեկտի զբաղմունքի որոշ մասնավոր բնութագրիչներ.. »:²

Մեկ այլ սահմանման համաձայն՝ գործարարությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ սեփական գործունեության կազմակերպումը, և կախված գործունեության բնույթից կարող է հանդես գալ արտադրական ձեռնարկության, խորհրդատվական ընկերության, բանկի, հրատարակչության կամ էլ բաժնետիրական ընկերության տեսքով:³

² Կիրակոսյան Գ., Ղուլջյան Հ., Տիգրանյան Ի. 'Տնտեսագիտական բացատրական բառարան'. Եր., 'Տնտեսագետ', 1999թ. էջ 118

³ Лапуста М." Предпринимательство", ИНФРА-М, 2004 г., էջ 25

Գործարարության հասկացության դասական ձևակերպումը տրված է Մեսկոնի «Մենեջմենթի հիմունքներ» հանրահայտ դասագրքում, որտեղ ասված է, որ բիզնեսը կամ գործարարությունը գործունեություն է, որն ուղղված է որոշակի արտադրատեսակների կամ մատուցվող ծառայությունների ստեղծման և իրացման ճանապարհով շահույթի ստացմանը:⁴

Ռուս տնտեսագետ Վ. Բուրովի կարծիքով՝ գործարարությունն ու ձեռնարկատիրությունը հանդիսանում են տնտեսական համասեռ գործունեություն, որի վերջնական նպատակը ապրանքների և ծառայությունների արտադրությունից, վաճառքից, փոխանակությունից շահույթի ստացումն է:⁵

Ուսումնասիրություններն ու վերլուծությունները ցույց են տալիս, որ զարգացած եվրոպական երկրներում գործարարներ են համարվում տնտեսավարող այն սուբյեկտները, որոնք վարում են սեփական գործը՝ շահույթի ստացման ակնկալիքով: Հետևապես, գործարարություն և ձեռնարկատիրություն հասկացությունները չեն կարող հոմանիշներ լինել, քանի որ գործարարություն հասկացությունն առավել ընդգրկուն է: Գործարարությունն իր մեջ ներառում է շուկայական տնտեսության բոլոր մասնակիցների փոխհարաբերությունները և իր մեջ ներառում է ոչ միայն ձեռնարկատերերին, այլ նաև սպառողներին, վարձու աշխատողներին, պետական մարմիններին:

Ընդհանուր առմամբ, գործարարությունը մարդու տնտեսական գործունեությունն է շուկայական հարաբերությունների պայմաններում: Գործարարության վերաբերյալ տեսությունները, պետության կողմից գործարարության կարգավորման միջոցառումները ինչպես տնտեսագետների, այնպես էլ հասարակության լայն խավերի կողմից մշտական քննարկման առարկա է դարձել: Անհրաժեշտ է նշել, որ գործարարությունը բնորոշ է մարդկային գործունեության բոլոր տեսակներին և հենց դա է պատճառը, որ գործարարություն կատեգորիան վերաբերում է բոլոր տեսակի ձեռնարկություններին՝ սկսած միավորված անձանց խմբերից, որոնք զբաղվում են ստեղծագործական, նախաձեռնողական գործունեությամբ, մինչև առևտրային կազմակերպությունները, որոնց հիմնական նպատակը շահույթի ստացումն է:

⁴ Мескон Майкл, Альберт Майкл, Хедоури Франклин. ОСНОВЫ МЕНЕДЖМЕНТА. Перевод с английского. Москва: Издательство "Дело", 1997., էջ 24

⁵ Буров, В.Ю. Основы предпринимательства: учебное пособие / В.Ю. Буров. – Чита, 2011, էջ 31-32

Հարկ է նշել, որ գործարարություն տերմինը կիրառվում է երկու հիմնական հասկացություններով.

1.Որպես տնտեսագիտական ընդհանուր տերմին, որը բնութագրում է տնտեսական սուբյեկտի գործունեության ոլորտը և նրա տնտեսական շահերը, գործունեության մեծությունը և ծավալները /փոքր, միջին, խոշոր գործարարություն/, ինչպես նաև տնտեսական սուբյեկտի զբաղմունքի որոշ մասնավոր բնութագրիչները, որոնք հաճախ դուրս են գալիս տնտեսագիտական հասկացությունների սահմաններից:

2. Որպես գործարքներ, առևտրական գործառնություններ:⁶

Գործարարության կարևորագույն մասն է կազմում ձեռնարկատիրությունը: Թեև ձեռնարկատիրությունը հանդիսանում է գործարարության ընդամենը մի մասը, այդուհանդերձ այն ունի ոչ պակաս կարևոր սոցիալական տնտեսական նշանակություն: Այս առումով ձեռնարկատերը կարելի է սահմանել որպես նախաձեռնող անձ, որը ցուցաբերում է որոշակի գծեր, ստանդարտներ ու մտածելակերպ գործարար կյանքի բնագավառում: Այլ կերպ ասած, դա միջազգային պրակտիկայում արտադրության արդյունավետ կազմակերպման միջոց է, որի գործունեությունը հանդիսանում է շուկայի գործունեության պարտադիր պայման:

Ինչ վերաբերում է ձեռնարկատիրական գործունեության էությանը, ապա ժամանակակից տնտեսական պատմությունը սահմանում է ձեռնարկատիրությունը որպես նախաձեռնողական, ինքնուրույն մարդկանց տնտեսական գործունեության տեսակ, որը նպատակաուղղված է շահույթի ստացմանը՝ կազմակերպության կողմից ռեսուրսների ռացիոնալ օգտագործման և դրանով ապրանքների արտադրության ու ծառայությունների մատուցման միջոցով: Սակայն դեռևս աշխարհում գոյություն չունի ձեռնարկատիրական գործունեության մեկ համընդհանուր սահմանում:

Մինչ այժմ գոյություն չունի համընդհանուր ընդունված և հստակ սահմանում կամ բնորոշում, թե ինչ է ձեռնարկատիրական գործունեությունը: Ձեռնարկատիրական գործունեության տեսության զարգացման գործում իր ներդրումն ունի ավստրիացի տնտեսագետ Շումպետերը: Նա պնդում էր, որ ձեռներեցը

⁶ Круглова Н. Ю. Основы бизнеса (предпринимательства): учебник / Н.Ю. Круглова. – М.: КНОРУС, 2010, էջ 85

տնտեսական զարգացման համակարգի կարևորագույն բաղկացուցիչն է, ով մշտապես ձգտում է նորարարության: Ըստ նրա՝ «ձեռներեց լինել նշանակում է անել ոչ այն, ինչ անում են ուրիշները և ոչ այնպես, ինչպես անում են ուրիշները»:⁷

Ամերիկացի գիտնական պրոֆեսոր Ռոբերտ Խիզրիչը ձեռնարկատիրական գործունեությունը բնութագրում է որպես գործընթաց, որի նպատակը ինչ որ նոր բանի ստեղծումն է, որն ունի արժեք, իսկ ձեռնարկատիրոջը՝ որպես մի մարդու, որը ծախսում է իր ամբողջ ժամանակը և ջանքերը, իր վրա է վերցնում ֆինանսական, հոգեբանական և սոցիալական ռիսկերը՝ արդյունքում դրանիղ ստանալով փող, ինչպես նաև անձնական բավարարվածություն:⁸

Հայաստանի Հանրապետությունում ձեռնարկատիրական գործունեությունն ունի իր բնորոշումը և սահմանումը, որն իր արտացոլումն է ստացել ՀՀ Քաղաքացիական օրենսգրքում, որի համաձայն՝ ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որը նպատակաուղղված է գույքի օգտագործումից, ապրանքների վաճառքից, աշխատանքների կատարումից, ծառայությունների մատուցումից շահույթի ստացմանը:⁹ Իսկ ըստ ՀՀ ավելացված արժեքի հարկի մասին օրենքի հոդված 2-ի՝ ձեռնարկատիրական գործունեություն է համարվում շահույթ (եկամուտ) ստանալու նպատակով պարբերաբար իրականացվող տնտեսական գործունեությունը: Տնտեսական գործունեություն է համարվում ցանկացած գործունեություն, որն իրականացվում է որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց:¹⁰

Ամերիկացի տնտեսագետ Ջեյսոն Դեմերսը իր «7 դառը ճշմարտություն ձեռնարկատիրության վերաբերյալ» գիտական հոդվածում նշում է, որ գործարարությունն ու ձեռնարկատիրությունը հոմանիշներ են, ինչպես օրինակ՝ քաջն ու խիզախը, քանզի մարդկանց մեծամասնության համար դրանք նույն բաներն են:¹¹

Նույնակարծիք են նաև որոշ ռուս տնտեսագետներ, ովքեր գտնում են, որ գործարարությունը նույն ձեռնարկատիրական գործունեությունն է, որն իրակա-

⁷ Шумпетер И. “Теория экономического развития”, М. “Прогресс”, 1982թ., էջ 38, 129-130

⁸ Хизрич Р. Питере М. Предпринимательство. Вып. 1. 1991., էջ 20

⁹ ՀՀ Քաղաքացիական Օրենսգրք / Ընդունված Ազգային ժողովի կողմից 1998 թվականի մայիսի 5-ին/, Հոդված 2

¹⁰ ՀՀ օրենքը ԱԱՀ-ի մասին, /ընդունված 1997թ. հունիս/, հոդված 2

¹¹ Jayson Demers. 7 Dark Truths About Entrepreneurship. Founder and CEO, AudienceBloom. 2016. <http://www.entrepreneur.com/article/245640>

նացվում է շուկայական տնտեսության սուբյեկտների և պետական իշխանության մարմինների կողմից՝ սեփական և փոխառու միջոցների հաշվին՝ շահույթ ստանալու նպատակով:¹²

Նշենք, որ մենք համակարծիք չենք վերոհիշյալ մեկնաբանություններին և փորձենք յուրովի ներկայացնել գործարարության և ձեռնարկատիրական գործունեության սահմանումներն ու դրանց միջև եղած բնորոշ տարբերությունները:

Գործարարությունը /Business/ շահույթ կամ սոցիալական արդյունք ստանալու նպատակով ֆիզիկական անձանց և տնտեսավարող սուբյեկտների գործունեության ցանկացած ուղղություն է հասարակական արտադրության և ծառայությունների ոլորտում՝ նպատակաուղղված սպառողների պահանջմունքների և պահանջակի ըստ ամենայնի բավարարմանը՝ գործող օրենսդրության պահանջներին համապատասխան:

Ձեռնարկատիրությունը կամ ձեռնարկատիրական գործունեությունը /Entrepreneurship/ շահույթ ստանալու նպատակով, բացառապես սեփական պատասխանատվությամբ մարդկային ինքնուրույն բարձր ռիսկային գործունեություն է՝ գործող օրենսդրության պահանջներին համապատասխան որը հիմնված է ինքնուրույն նախաձեռնության, պատասխանատվության և նորամուծական ձեռներեցական գաղափարի վրա:

Վերոբերյալ 2 հասկացությունների միջև սահմանագիծը ներկայացնելու նպատակով անդրադառնանք դրանց բնորոշ հետևյալ 4 տարբերիչ առանձնահատկություններին:

1. Այն դեպքում, երբ խոշոր գործարարությունը կարող է դրսևորվել որպես ժամանակակից տնտեսության առանցքային հիմքերից մեկը, ապա ձեռնարկատիրական գործունեությունը լավագույն դեպքում կարող է դիտարկվել որպես տնտեսության զարգացման կարևոր ցուցանիշներից մեկը:
2. Ձեռնարկատիրության սահմանմանը համաձայն՝ այն ձեռնարկատիրոջ սեփական միջոցների հաշվին իրականացվող գործունեություն է բարձր ռիսկային դաշ-

¹² Самарина В.П. Основы предпринимательства: учеб.пособие / В.П. Самарина. – М.: КНОРУС,2009, էջ 11

տում, հետևապես՝ ձեռնարկատիրությունը կարելի է համարել որպես գործարարության հիմք:

3. Քննարկելով ձեռնարկատիրության տնտեսական ասպեկտները, դժվար չէ նկատել, որ այն բացառապես կապված է նորաստեղծության ոլորտի հետ, իսկ գործարարությունը կարող է հաջողությամբ կրկնվել:
4. Ի վերջո, գործարարությունը ձեռնարկատիրությունից տարբերվում է նրանով, որ վերջինս գտնվում է, ընդհանուր առամբ, պետության կողմից վարվող տնտեսական քաղաքականության ազդեցության ներքո:

Ի հավելումն վերոհիշյալի, ավելացնենք նաև, որ անհրաժեշտ է տարբերակել «պետական գործարարություն» և «մասնավոր ձեռնարկատիրություն» հասկացությունները՝ «կառավարում» և «մենեջմենթ» հասկացություններին համապատասխան:

Հետևապես՝ ձեռնարկատիրությունը գործունեության տեսակ է, որն ուղղված է համարձակ, կարևոր և դժվար նախագծերի իրականացմանը: Արևմտյան Եվրոպայի երկրներում ժամանակակից ձեռնարկատիրությունը բնութագրվում է որպես յուրահատուկ, նորարարական, հակաբյուրոկրատական տնտեսվարության ոճ, որի հիմքում են նոր հնարավորությունների անընդհատ փնտրումը, կողմնորոշումը դեպի նորարարությունը, դրված խնդիրների լուծման համար ամենատարբեր աղբյուրներից ռեսուրսների ներգրավման և օգտագործման ունակությունը: Այդ երկրներում ձեռնարկատերերը հանդիսանում են շուկայական տնտեսության առաջատար սուբյեկտներ, որոնք զարգանում են տնտեսական օրենքների գործողության և գործունեության առարկայի ընտրության ազատության, արտադրության գործոնների շուկաների ընտրության ազատության, սպառման ազատության հիման վրա: Ձեռնարկատերերի վարքագծի ազատությունը հիմնվում է պետության կողմից նրանց գույքի պաշտպանության, արտադրության բոլոր գործոնների՝ այդ թվում նաև սեփականության բոլոր ձևերի գոյության երաշխիքի հիման վրա:¹³

¹³ Вечканов Г.С. Экономическая теория: учебное пособие / Г. С. Вечканов, Г.Р. Вечканова – М.: Эксмо, 2010, էջ 244-246

Ժամանակակից գործարարության և ձեռնարկատիրության զարգացման համար կարևորագույն նշանակություն ունեցան 17-19դ.դ տնտեսագետ-գիտնականների հետևություններն այն մասին, որ ձեռնարկատերը կապիտալի սեփականատերն է, որն ունի սեփական գործ և կառավարում է այն, հաճախ համատեղելով, հատկապես սեփական կապիտալի գործունեության սկզբնական փուլում, սեփականատիրական գործառույթները անձնական արտադրողական աշխատանքի հետ: Ըստ դասականների ձեռնարկատիրության շարժառիթը դա ապրանքների արտադրության /աշխատանքների կատարման/ և հաշվի առնելով պահանջարկը՝ դրանց իրացման միջոցով շահույթի /եկամուտի/ ստացումն է, որն էլ կարելի է դիտել որպես ձեռնարկատիրության ընդհանուր տնտեսական գործառույթների հիմք: Բացի այդ, տնտեսագիտության տեսության դասականները առաջինն էին, որ սահմանեցին ձեռնարկատիրության կարևոր հատկություններից մեկը՝ այդ գործունեության ռիսկային բնույթը:¹⁴ Ուրեմն ձեռնարկատիրական նախագծերի իրականացման ժամանակ հաջողության հասնելու համար անհրաժեշտ է կարողանալ կանխատեսել ռիսկը և նախօրոք մշակել միջոցառումներ դրա հետևանքները կանխարգելելու համար:

20-րդ դարի 30-ից 60-ական թվականներին տարբեր մասնագիտական ուղղվածություն ունեցող գիտնականներ /տնտեսագետներ, փիլիսոփաներ, հոգեբաններ, սոցիոլոգներ և այլն/ սկսեցին լուրջ ուշադրություն դարձնել ձեռնարկատիրության տեսության զարգացմանը, դրա բնութագրին, երկրների տնտեսական զարգացման մեջ դրա դերին: Լուրջ հետազոտությունների ենթարկվեցին իրենց բիզնեսում մշտապես հաջողությունների հասնող ձեռնարկատերերի անհատական բնութագրերը, անցկացվեցին միջազգային գիտաժողովներ, զարգացում ապրեց ձեռնարկատիրական կրթությունը, շատ երկրներում ավելի ամրապնդվեց պետության դերը ձեռնարկատիրության աջակցման գործում՝ հատկապես փոքր և միջին գործարարությանն ուղղված:¹⁵

20-րդ դարի կեսը շատ արևմտյան երկրներում նշանավորվեց որպես պրակտիկ, քաղաքակիրթ ձեռնարկատիրության զարգացման ժամանակաշրջան:

¹⁴ Давид Рикардо. Начала политической экономии и налогового обложения. М. 2007, էջ 45

¹⁵ Чепуренко А.Ю. Малый бизнес в рыночной среде /А. Ю. Чепуренко. – М.: Издательский дом Международного университета в Москве, 2009, էջ 158

Այդ ժամանակ այդպիսի արդիական հիմնախնդիրներով սկսեցին զբաղվել շատ նշանավոր գիտնականներ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ զարգացած շուկայական տնտեսությունում հենց բիզնեսը /ֆիրմաններն ու ընկերությունները/ տնային տնտեսությունների և պետության հետ միասին հանդիսանում են կարևորագույն տնտեսվարող սուբյեկտներ:

Այնուամենայնիվ դեռևս չկա գործարարության ձևավորված տնտեսական համապարփակ տեսություն, չնայած դրա անհրաժեշտությանը և կարևորությանը: Կա գործարարության տեսության զարգացման «երեք ալիք»:

«Առաջին ալիքը», որը ստեղծվել է 18-րդ դարում, կապված է գործարարի կամ ձեռներեցի կողմից ռիսկի կրման հետ: Ֆրանսիացի տնտեսագետ Ռ. Կանտիլյոնն առաջին անգամ առաջ քաշեց ռիսկի մասին դրույթը՝ որպես ձեռներեցության հիմնական ֆունկցիոնալ բնութագրիչ: Համաձայն Կանտիլյոնի՝ ձեռներեցը ցանկացած անհատ է, որն ունի եկամուտ ստանալու, ինչպես նաև ռիսկն իր վրա վերցնելու ցանկություն և վստահություն:¹⁶ Այս դպրոցի հետևորդներն էին 19-րդ դարի գերմանական դասական դպրոցի ներկայացուցիչներ Տյունենը և Մանգոլդտը, ինչպես նաև ամերիկացի տնտեսագետ Նայտան:

«Երկրորդ ալիքը» գործարարության և ձեռներեցության գիտական ընկալման առումով կապված է նորարարությունը որպես ձեռներեցության կարևոր բնութագրիչի ընկալման հետ: Այդ ուղղության հիմնադիրն է համաշխարհային տնտեսական մտքի խոշոր ներկայացուցիչ Յ. Շումպետերը: Շումպետերը ձեռներեցի գործունեության մեջ առանձնացնում է երեք նպատակային շարժառիթ՝ ա/ իշխանության և ազդեցության պահանջ, բ/ հաջողության հասնելու և մրցակցին ու ինքն իրեն հաղթելու ձգտում ու կամք, գ/ արարելու և ստեղծելու վայելքը, որը տալիս է սեփական գործի ինքնուրույն վարումը:¹⁷

¹⁶ Блауг М. Кантильон, Ричард // 100 великих экономистов до Кейнса = Great Economists before Keynes: An introduction to the lives & works of one hundred great economists of the past. — СПб.: Экономикс, 2008, էջ 136

¹⁷ Шумпетер И. “Теория экономического развития”, М. “Прогресс”, 1982թ., էջ 38, 124-126

Ձեռներեցության տեսության զարգացման վերոբերյալ երկու ալիքները հիմնված էին ձեռներեցության դերի միաֆունկցիոնալության վրա, ինչը հանգեցրել է ձեռներեցության հիմնահարցերի միակողմանի քննարկմանն ու մեկնաբանմանը:¹⁸

Ձեռներեցության տեսության զարգացման «Երրորդ ալիքը» կապված է ձեռներեցության դերի բազմաֆունկցիոնալության հետ՝ որպես Ռ. Շումպետերի տեսական և նոր ավստրիական դպրոցի ներկայացուցիչներ Լ. Միզեսի և Ֆ. Հայեկի տնտեսագիտական վերլուծությունների արդյունք: Ըստ նրանց՝ ձեռներեցի գործը ոչ միայն նոր տեխնոլոգիական մեթոդների փորձարկումն է, այլ բոլոր հնարավոր մեթոդներից այն ամենաարդյունավետ տարբերակի ընտրությունը, որը հնարավորություն կտա համեմատաբար ավելի էժան միջոցներով բնակչությանն ապահովել այն ամենով, ինչի կարիքը տվյալ պահին նրանք ունեն:¹⁹ Այսպիսի մոտեցումը հնարավորություն է տալիս ուշադրությունը կենտրոնացնել ոչ թե ձեռներեցի որակական բնութագրիչների վրա /որոշումների ինքնուրույն կայացում և այլն/, այլ տնտեսական համակարգում ձեռներեցության որպես կարգավորողի ու հավասարակշռողի դերի վրա:

Այսօր տեսական վերլուծությունների ժամանակ մեծ ուշադրություն է դարձվում ձեռներեցությանը ոչ միայն որպես ինքնուրույն, անկախ հիմքի վրա գործերի վարման միջոցի, այլ նաև ներձեռներեցական կառավարմանը:

Որպեսզի տնտեսական գործունեությունը ապահովի եկամուտ կամ սոցիալական արդյունք, յուրաքանչյուր գործարար պարտավոր է ունենալ գործարարության ծրագիր կամ բիզնես պլան, որը հնարավորություն է տալիս որոշելու

ա/ ինչ և որքան արտադրել,

բ/ ինչպես և ինչ գներով վաճառել արտադրանքը կամ ծառայությունը,

գ/ ինչ աղբյուրներից հայթայթել անհրաժեշտ ռեսուրսներն ու ֆինանսական միջոցները և այլն:²⁰

¹⁸ Туренко Т.А. Малое предпринимательство и его роль в устойчивом развитии экономики/Т.А. Туренко//Известия иркутской государственной экономической академии. – 2010, էջ 158

¹⁹ Мизес Л. «Всеобщее вздорожание жизни в свете теории политической экономии» — Сборник № 4 («Вздорожание жизни») под редакцией М. Туган-Барановского, 1914., էջ 124-129

²⁰ Набатников В.М. Организация предпринимательской деятельности. Учебное пособие/В.М. Набатников. – Ростов-на Д.: Феникс, 2011, էջ 144

Դրանից բացի, գործարարության հաջողությունը ուղեկցում է այն տնտեսավարող սուբյեկտին, ով ավելի լավ է հասկանում «շուկայի լեզուն», որը հնարավորություն է տալիս կանխատեսել գործունեության ապագա դաշտը իր բոլոր դրսևորումներով հանդերձ:²¹

Գործարարության ծավալումը կարևոր կենսական ու տնտեսական նշանակություն ունի ոչ միայն տնտեսավարող սուբյեկտի, այլև երկրի զարգացման, ներդրումների ավելացման ու ազգաբնակչության կենսամակարդակի բարձրացման համար:

Գործարարության դերն ու նշանակությունը կարևորվում է նաև բազմաթիվ այլ պատճառներով, այն ունի իր ձևավորման պատճառները, նախադրյալներն ու փուլերը: Ընդհանուր առմամբ՝ տնտեսագետները գործարարության զարգացումը պայմանականորեն բաժանում են հինգ փուլերի:

Առաջին փուլը հայտնի է մինչկապիտալիստական անվանմամբ, որն էլ հենց հանդիսացել է գործարարության ձևավորման հիմքը: Փոքր բիզնեսի վերաբերյալ առաջին հաղորդագրությունը ի հայտ է եկել դեռևս 4000 տարի առաջ, որում տեղեկացվում է այն մասին, թե ինչպես էին հարուստ փողատերերը որոշակի տոկոսով վարկ տրամադրում: Հարկ է նշել, որ փոքր գործարարությունը ծաղկում է ապրել համարյա բոլոր հնագույն մշակույթ ունեցող երկրներում: Այս առումով առանձնապես աչքի էին ընկնում բաբելոնացիները, արաբները, հայերը, եգիպտացիները, հույներն ու հռոմեացիները, որոնք ներգրավված էին առևտրում ոչ միայն իրենց երկրներում, այլ նաև ակտիվ տնտեսական գործունեություն էին ծավալում իրենց հարևան երկրների հետ: Սակայն դեռևս այն ժամանակներում փոքր գործարարությամբ զբաղվողների կողմից շատ հաճախ արտադրվում էին անորակ արտադրատեսակներ և մատուցվում անորակ ծառայություններ, որոնք զանգվածային բողոքների պատճառ էին դառնում գրեթե բոլոր երկրներում: Այդուհանդերձ, միջին դարերում հռոմեական կաթոլիկ եկեղեցին շարունակում էր ատելությամբ վերաբերվել գործարարներին ու ձեռներեցներին, քանի որ եկեղեցին մանրաձախ առևտրականներին համարում էր մեղսունակներ՝ պատճառաբանելով,

²¹ Круглова Н. Ю. Основы бизнеса (предпринимательства): учебник / Н.Ю. Круглова. – М.: КНОРУС, 2010, էջ 345

որ նրանք ապրանքների որակի բարելավման համար ոչինչ չանելով, դրանց վրա սահմանում են լրացուցիչ բարձր գներ, քան ապրանք արտադրողները՝ դրանով իսկ վնասելով բնակչության սոցիալական վիճակին, ինչպես նաև ազգաբնակչության ընդհանուր կենսամակարդակին: Եկեղեցին դեմ էր նաև վարկային հարաբերություններին:²²

Գործարարության զարգացման երկրորդ փուլը կապված է կապիտալիզմի ձևավորման սկզբնական ժամանակների հետ, որը սկիզբ է առել 18-րդ դարի վերջերին և շարունակվել մինչև 19-րդ դարի կեսերը: Այս փուլն ամենից առաջ կապված է ֆրանսիացի տնտեսագետ Ռ. Կանտիլյոնի աշխատությունների հետ, որոնցում առաջ է քաշվել այն տեսակետը, որ ռիսկը հանդիսանում է գործարարության հիմնական հատկանիշը: Ռ. Կանտիլյոնը նշում է մի շարք հատկանիշներ, որոնցով պետք է օժտված լինեն գործարարները: Դրանց մեջ նա հատկապես կարևորում է գործարարի ռիսկի դիմելու նախաձեռնությունը, ինչպես նաև դեպի ապագայի կողմնորոշումը՝ իր գործունեությունից եկամուտներ ստանալու հոգսով կամ վնասներ կրելու պատրաստակամությամբ:²³

Գործարարության զարգացման երրորդ փուլը ընդգրկում է 19-րդ դարի վերջից մինչև 20-րդ դարի առաջին կեսը ընկած ժամանակահատվածը: Այս փուլում առաջին անգամ դրևստրվեց գործարարության և հատկապես ձեռնարկատիրության նորաստեղծական բնույթը, որոնց թվին է դասվում տնտեսության մեջ նորամուծությունների և նորաստեղծությունների ապահովումը: Դրանց վերաբերյալ իր աշխատություններում անդրադարձել է հանրահայտ տնտեսագետ տեսաբան Ի. Շումպետերը: Ըստ նրա՝ գործարարների խնդիրը նորամուծությունների ներդրման ճանապարհով արտադրության եղանակը արմատապես բարեփոխելն է, իսկ առավել ընդհանուր իմաստով՝ նոր ապրանքների արտադրության համար նորագույն տեխնոլոգիական հնարավորությունների օգտագործումը կամ նախկին ապրանքների արտադրության համար հումքի նոր աղբյուրների և պատրաստի արտադրանքի նոր շուկաների բացահայտման շնորհիվ նորագույն մեթոդների

²² Предпринимательство: учеб. / под редакцией В.Я. Горфинкеля, Г.Б. Поляка, В.А. Швандара. – М.: ЮНИТИ-ДАНА, 2011, էջ 40

²³ Блауг М. Кантильон, Ричард // 100 великих экономистов до Кейнса = Great Economists before Keynes: An introduction to the lives & works of one hundred great economists of the past. — СПб.: Экономикс, 2008, էջ 136-144

կիրառումը: Այլ կերպ ասած, այս փուլում առավելապես կարևորվում է նոր ապրանքի կամ նոր ծառայության գաղափարը, որը հնարավոր էր իրականացնել միայն նոր տեխնոլոգիաներով:²⁴ Նոր ապրանք կամ նոր ծառայություն հասկացությունն իրենից ներկայացնում էր ոչ միայն արմատականորեն նոր ապրանքատեսակ կամ ծառայություն, այլ մի ապրանք կամ ծառայություն, որը նախորդին արմատապես կտարբերվի ինչպես իր որակական, այնպես էլ գնային հատկանիշներով: Նման ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ էր նոր տեխնոլոգիաներ և դա ամենևին պատահական չէր, քանզի այս ժամանակաշրջանը համընկնում էր արդյունաբերական հեղաշրջման հետ, որը նաև իր ազդեցությունն ունեցավ գործարարության և ձեռներեցության կայացման վրա:²⁵

Գործարարության զարգացման չորրորդ փուլը իր մեջ ներառում է 20-րդ դարի երկրորդ կեսը, որը բնութագրում է շուկայական համակարգի կարգավորման, հավասարակշռվածության վիճակի ապահովման և դրանում գործարարության դերի բարձրացման գործընթացները: Ամերիկացի տնտեսագետ Ջորջ Ակերլոֆը կարևորել է գործարարի դերը որպես հատուկ «կարգավորողի», որն ապահովում է շուկաների համապատասխան հավասարակշռությունը:²⁶ Այս փուլում առաջին պլան մղվեցին այնպիսի գաղափարներ, ինչպես գործարարի ունակությունը ռիսկի գնալու ճանապարհով՝ արձագանքելու հասարակության և տնտեսության մեջ կատարվող արմատական փոփոխություններին: Զարգացում ապրեցին նաև գործարարության և կառավարման /մենեջմենթի/ կապերը: Այս փուլը համընկավ նաև «Մեծ ճգնաժամի» հետ, և հենց այս ժամանակ էլ կարևորվեց տնտեսության պետական կարգավորման անհրաժեշտությունը, որն անմիջականորեն առնչվում էր գործարարության և ձեռներեցության հետ:

Գործարարության զարգացման ժամանակակից հինգերորդ փուլը պայմանավորված է գործարարության զարգացման խնդիրների նոր հարցադրումներով՝ կապված մարքեթինգի, մենեջմենթի, հարկային քաղաքականության, շուկայական

²⁴ Ա. Սարիբեկյան, Ա. Բեժանյան. Խորհրդատվության և վերապատրաստման դերը ՀՀ ձեռներեցության զարգացման համակարգում: Ե., ԵՊՀ, էջ 10

²⁵ Шумпетер И. “Теория экономического развития”, М. “Прогресс”, 1982թ., էջ 38, 130-132

²⁶ George Arthur Akerlof. Economics and Sociology: Redefining Their Boundaries : Conversations with Economists and Sociologists. Princeton University Press. p. 61. ISBN 9780691003764. Retrieved 2014-10-25., էջ 2

արժեթղթերի շրջանառության, բանկային գործարարության, տնտեսամաթեմատիկական մոդելավորման և այլնի հետ:

Անփոփելիվ, կարելի է կատարել այն եզրահանգումը, որ գործարարությունն ու ձեռնարկատիրությունը գործունեություն է.

- ✳ նախապես պլանավորված, հասարակության համար օգտակար, նպատակադրված ապրանքների, արտադրության, ծառայությունների մատուցման, աշխատանքների իրականացման, որը համապատասխանում է շուկայի պահանջներին,
- ✳ կազմակերպությունում իրականացվող ինչպես ոչ միջնորդական, այնպես էլ միջնորդ մասնակիցների, սեփականատերերի մասնակցությամբ,
- ✳ նպատակաուղղված անձնական և հասարակական օգուտների ներգրավման.
- ✳ բոլոր անհրաժեշտ և ճիշտ տեղեկատվության օգտագործում, ինչպես նաև ներըմբռնողություն և հավատ ձեռնարկատիրության հաջողության գործում:

Գործարարության և ձեռնարկատիրության, որպես ռեսուրսի բնորոշումից, բխում են նրա հիմնական խթանները՝ ինքնուրույն կառավարչական որոշումների կայացում, ֆինանսական միջոցների և գործընկերների ձեռքբերում, եկամտի ինքնուրույն վերահսկում ու բաշխում, իր հնարավորությունների օգտագործման և զարգացման հնարավորություն և այլն:

Ուստի, գործարարության և ձեռնարկատիրության համար պետք է ստեղծվեն համապատասխան բարենպաստ պայմաններ, որոնք էլ հենց ապահովում են ձեռնարկատիրական գործունեության ակտիվությունը, ռեսուրսներից օգտվելու թույլտվությունը, որոնք անհրաժեշտ են ապրանքների և ծառայությունների մատուցման համար:

1.2 Գործարարության ծրագրի դերն ու նշանակությունը ժամանակակից տնտեսավարման պայմաններում

Ցանկացած տնտեսության, և հատկապես անցումային և զարգացող տնտեսություն ունեցող երկրների համար ներկայումս լուրջ և կարևոր հիմնախնդիր է հանդիսանում գործարարության կայացումը ու դրա զարգացումը, որը նաև գտնվում է հասարակության լայն խավերի ուշադրության կենտրոնում: Բարեփոխումների արդյունավետ իրականացումը պետք է դառնա հիմնասյունը, գլխավոր նախապայմանը հասարակական քաղաքական, ինչպես նաև սոցիալ-տնտեսական հարաբերություններում: Դա նաև հիմք է նախապատրաստում, որպեսզի երկիրը արդյունավետ մուտք գործի շուկայական հարաբերություններ կամ եթե արդեն մուտք է գործել՝ սկսի աստիճանաբար հարմարվել շուկայի կողմից ներկայացվող պահանջներին:

Շուկայական համակարգին անցման պայմաններում ձեռնարկատիրական գործունեության կազմակերպական մեխանիզմն իրականացվում է այնպիսի սկզբունքների հիման վրա, ինչպիսին է գործունեության ազատ ընտրության հնարավորությունը, ֆիզիկական և իրավաբանական անձանց միջոցների ներգրավումը, մատակարարների ու սպառողների ընտրությունը, օրենսդրական նորմերի շրջանակներում գների սահմանումը, աշխատողների ազատ ընտրության հնարավորությունը, նյութատեխնիկական, ֆինանսական, աշխատանքային և բնական ռեսուրսների ներգրավումը և այլն:²⁷

Այս ամենով հանդերձ չպետք է մոռանալ, որ այն սկզբունքներն ու մոտեցումները, որոնք կիրառվում են ձեռնարկատիրական գործունեության բնագավառում, չպետք է բացարձակացվեն, քանի որ դրանք անընդհատ ենթարկվում են գլոբալ փոփոխությունների: Գործարարության և ձեռնարկատիրական գործունեության զարգացման համար անհրաժեշտ են որոշակի պայմաններ, որոնք հանգում են հետևյալին. օրենսդրական և մորմատիվային բազայի ստեղծում ու կատարելագործում, մրցակցային ռեժիմի ընտրություն, շուկայական ենթահամակարգի ձևավորում,

²⁷ Акимов О.Ю. Малый и средний бизнес: эволюция понятий, рыночная среда, проблемы развития. Издательство: Финансы и статистика. М. 2011, էջ 63

գործարարության խթանում: Օրենսդրական բազայի ստեղծումը պայմանավորված է այն հանգամանքով, որ դրանով տնտեսավարող սուբյեկտներին երաշխիք է տրվում նրանց սեփականության պահպանման համար, այսինքն՝ դրանով բացառվում է պետականացման հնարավորությունը:

Շուկայական ենթահամակարգի տարրերի ձևավորումը հնարավորություն է տալիս մասնակիցներին իրենց դերակատարումները ունենալ առևտրային և ֆոնդային գործարքներին, օգտվել բանկային ծառայություններից, թույլ տալ օգտվել այնպիսի ռեսուրսներից, ինչպիսիք են վարկերը, տեղեկատվությունը:²⁸

Գործարարության խթանումը ՀՀ-ում ենթադրում է ձեռնարկատիրության ընդլայնում և զարգացում, որը դրսևորվում է, նախ և առաջ՝ փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմամբ և որի համար անհրաժեշտ է ստեղծել բարենպաստ տնտեսական միջավայր, ուղղակի պետական դոտացիաների համակարգի կիրառում, ռիսկային ծրագրերի ֆինանսավորում վենչուրային ֆոնդերից, որը կրում է նորամուծական բնույթ և այլն:

Գործարարության կազմակերպման արդյունավետությունը արտադրական և առևտրային կազմակերպություններում էապես կախված է ճիշտ ծրագրավորումից, որն իր մեջ ներառում է հետևյալ բաղադրիչները.

- ✳ գործունեության ոլորտը, սպառողների շրջանակի ընտրությունը, ինչպես նաև նրանց ցանկությունների ու պահանջմունքների առավելագույն բավարարումը,
- ✳ արտադրության և ծառայությունների մատուցման տեխնոլոգիայի ճիշտ ընտրությունը և արտադրական ու առևտրային ծառայությունների ըստ ամենայնի բազմատեսակացումը /դիվերսիֆիկացումը/,
- ✳ այն մրցակիցների բացահայտումն ու վարքագծի ուսումնասիրումը, որոնք մատակարարում են ապրանքներ ու ծառայություններ հենց նույն սպառողներին,
- ✳ իրացվող ապրանքների ու ծառայությունների գնահատումը՝ ելնելով դրանց օգտակարությունից,

²⁸ Маслов Д.В., Белокоровин Э.А.; Мальный бизнес. Стратегии совершенствования на основе управления качеством. Издательство: ДМК Пресс. 2008 год, էջ 72

✳ հումքի շուկաների որոշումը ինչպես տվյալ պահի, այնպես էլ ապագայի համար և արդեն ձեռք բերված ու նվաճված շուկաների պահպանումը:²⁹

Վերոնշյալից ելնելով, կարելի է ամբողջությամբ վստահեցնել, որ գործարարությունը լինելով տնտեսական գործունեության հատուկ տեսակ, պահանջում է առանձնակի ուշադրություն, որը պետք է իրականացվի պետության կողմից: Դրա մասին է վկայում նաև շատ երկրների միջազգային փորձը, որտեղ ձեռնարկատիրությունը համարվում է տնտեսական գործունեության ամենակատարյալ տարատեսակը և իր հետևից բերում է ինքնազբաղվածություն, ինչպես նաև նոր աշխատատեղերի ստեղծում իր դրական բոլոր դրսևորումներով հանդերձ:³⁰ Այսպես օրինակ, զարգացած երկրներում գործարարությունը հանդիսանում է տնտեսության շարժիչ ուժը, իսկ շուկան հանդես է գալիս որպես արտադրության զարգացման խթան: Այստեղ պարզապես յուրաքանչյուրն իրականացնում է իր բիզնեսը՝ մի դեպքում որպես արտադրող, իսկ մյուս դեպքում՝ որպես սպառող: Այստեղ են որոշում գները և ապրանքների ու ծառայությունների ծավալները, իսկ գնորդի ու վաճառողի համաձայնության արդյունքում միաժամանակ լուծվում է նաև մյուս բոլոր խնդիրները:³¹ Գործարարը կոչված է բավարարելու որոշակի խմբի անձանց պահանջումները՝ վաճառելով իր կողմից արտադրված ապրանքը և ստանալով դրա դիմաց համապատասխան շահույթ, եկամուտ: Գործարարության վերջնական արդյունքը կարող է հանդես գալ ամենատարբեր արտադրատեսակների ու ծառայությունների տեսքով: Դրանք այն ամենն են, ինչի կարիքը զգում է սպառողը և այն ամենը, ինչը ի վիճակի է վաճառել գործարարը. շենքեր, շինություններ, մեքենաներ, սարքավորումներ, սպառողական ապրանքներ, տեղեկատվություն, փող, արտարժույթ, արժեթղթեր և այլ աշխատանքներ:³²

²⁹ Фокс Джефффри Дж. Как делать большие деньги в малом бизнесе. Неочевидные правила, которые должен знать любой владелец малого бизнеса. ; Издательство: Альпина аблшер 2008 год, էջ 124-125

³⁰ Հովհաննիսյան Հայկ. Փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում: Ը.00.02 - «Տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի համար սեղմագիր: Երևան, 2012թ. էջ 9:

³¹ Левитас А. Больше денег от вашего бизнеса. Партизанский маркетинг в действии; Издательство: Манн, Иванов и Фербер. 2014 год, էջ 44

³² Кузнецов Ю.В. Предпринимательство и развитие новых форм организаций. Сборник: Экономическое возрождение России №2 (28). Издательство: АНО «Институт проблем экономического возрождения». 2014, էջ 12-13

Ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ և մեր երկրում, գնալով ավելի ու ավելի շատ մարդիկ են ընդգրկվում մասնավոր ձեռներեցության մեջ: Դա մի բնագավառ է, որը ենթադրում է հատուկ կենսակերպ, երբ մարդը պատրաստ է ինքնուրույն որոշումներ կայացնել և դիմել ռիսկի: Բիզնեսով զբաղվելու որոշում ընդունելուց հետո, ձեռներեցը պետք է մանրակրկիտ ձևով պլանավորի նրա կազմակերպումը: Խոսքը գնում է գործարարության ծրագրի մասին: Շուկայի պայմաններում նմանատիպ պլանները անհրաժեշտ են բոլորին՝ բանկերին և պոտենցիալ ներդրողներին, ֆիրմայի աշխատակիցներին, իրենց հեռանկարները և խնդիրները գնահատել ցանկացողներին, և առաջին հերթին հենց իրենց՝ ձեռներեցներին, որոնք պետք է մանրամասնորեն վերլուծեն իրենց ծրագրերը և ստուգեն նրանց իրատեսական լինելը: Առհասարակ, առանց գործարարության ծրագրի ընդհանրապես չի կարելի սկսել ոչ մի գործունեություն, քանի որ անհաջողության հավանականությունը շատ մեծ է:³³

Յուրաքանչյուր ձեռնարկություն, սկսելով իր գործունեությունը, պարտավոր է ստույգ ներկայացնել ֆինանսական, աշխատանքային և մտավոր ռեսուրսների հեռանկարի պահանջը, դրանց ստացման աղբյուրները, ինչպես նաև կազմակերպության աշխատանքի ընթացքում պետք է կարողանա ճիշտ հաշվարկել եղած միջոցների օգտագործման արդյունավետությունը: Շուկայական տնտեսության պայմաններում ձեռներեցները չեն կարող հասնել կայուն հաջողության, եթե հստակ և արդյունավետ չալանավորեն իրենց գործունեությունը, անընդհատ չհավաքագրեն և չկուտակեն անհրաժեշտ տեղեկատվություն ինչպես նպատակային շուկայի իրավիճակի, իրենց մրցակիցների, այնպես էլ սեփական գործունեության, հեռանկարների և հնարավորությունների մասին:³⁴

Գործարարության ծրագիրն իրենից ներկայացնում է պլանավորման փաստաթուղթ, որտեղ արտացոլվում են կազմակերպության արտադրական, առևտրային և ֆինանսատնտեսական գործունեության հիմնական ուղղությունները, վեր են հանվում հնարավոր այն հիմնահարցերը, որոնց կարող է առնչվել ձեռնարկությունը,

³³ Бизнес-планирование и инвестирование: Учебник./ С.И. Головань, М.А. Спиридонов. Ростов н/Д, Феникс, 2008, էջ 18

³⁴ Дубровина И.А. Бизнес-планирование на предприятии. Учебник для бакалавров. М. Форум. 2013, էջ 34

ինչպես նաև որոշվում այն միջոցները, որոնցով կարելի է հաղթահարել այդ խնդիրները և հասնել ներկազմակերպական առաջադրանքների կատարմանը:

Գործարարության ծրագիրն անմիջականորեն կապված է ձեռնարկության դրամական հոսքերի և շահույթի պլանավորման ու բաշխման, հարկման, շրջանառու կապիտալի նկատմամբ պահանջի ձևավորման, աղբյուրների որոշման, ներդրումային միջոցների և հարկային ու վարկային հարաբերությունների հետ:³⁵

Գործարարության ծրագրի հիմնական ձևերն են՝

1. Ամբողջական գործարարության ծրագիր, որը երբեմն անվանում են նաև առևտրային մտքի կամ ներդրումային նախագիծ: Այս բիզնես-պլանը շարադրված է պոտենցիալ գործընկերոջ կամ ներդրողների համար: Այն մարքեթինգային հետազոտությունների արդյունքում հիմնված է շուկայական ռազմավարության վրա և ենթադրում է ցանկալի ֆինանսական արդյունքներ:
2. Կոնցեպտ գործարարության ծրագիր, որը հիմնված է պոտենցիալ գործընկերների և ներդրողների համար, ինչպես նախորդը, սակայն՝ այս մեկը որոշում է ներդրողների և պոտենցիալ գործընկերների հետաքրքրության աստիճանը նախագծի վերաբերյալ:
3. Ընկերության գործարարության ծրագիր, որը շարադրված է ընկերության զարգացման հեռանկարները մոտակա պլանային շրջանում, այսինքն՝ մինչև տնօրենների խորհրդի կամ բաժնետերերի ժողովից առաջ: Այս գործարարության ծրագիրը ցույց է տալիս հիմնական բյուջետային նախնական հաշվարկը, նախագծումը և տնտեսական ցուցանիշներ, որպեսզի հիմնավորվի ինվեստիցիայի չափերը:
4. Շինարարական ենթամասի բիզնես-պլան, որը կոչվում է նաև ֆինանսական պարտավորությունների կենտրոնի բիզնես-պլան: Ծավալների հիմնավորման համար ուսումնասիրվում է արտադրամասի օպերացիոն գործունեությունը և աճի մեծությունը, որը գտնվում է եկամտի ենթախմբի (խմբի) ղեկավարման ներքո:
5. Գործարարության ծրագիր առևտրային հիմքի վրա՝ վարձակալական միջոցներ ստանալու համար, այսինքն բանկերից վարկ ստանալու նպատակով:

³⁵ Е. Р. Орлова - Бизнес-план основные проблемы и ошибки, возникающие при его написании Серия: Оптимизация бизнес-процессов. Издательство: Омега-Л, 2005 г., էջ 12

6. Գործարարության ծրագիր՝ որպես դրամաշնորհի դիմում՝ պետբյուջեից կամ բարեգործական և այլ կազմակերպությունների ֆոնդերի կողմից միջոցներ ստանալու և սոցիալ քաղաքական հիմնախնդիրներ լուծելու նպատակով:
7. Գործարարության ծրագիրը՝ երկրի, պետության, տարածաշրջանի զարգացման համար:³⁶

ՀՀ-ում առայժմ գործարարության ծրագրի կազմման և ֆինանսական պլանավորման հիմնական խնդիրները սահմանափակվում են հետևյալներով.

- ✳ Ներդրումային փաթեթների նախապատրաստում՝ առևտրային բանկերից վարկ ստանալու նպատակով
- ✳ Պետական ձեռնարկությունների սեփականաշնորհման առաջարկների հիմնավորում
- ✳ Մասնավոր և խառը սեփականությամբ կազմակերպությունների ստեղծման նախագծերի հիմնավորում
- ✳ Գործունեության տնտեսական ուղղությունների ընտրություն՝ առողջացման ծրագրերի մշակում՝ դրական և ցանկալի արդյունքի հասնելու նպատակով
- ✳ Արժեթղթերի էմիսիայի նախագծերի հիմնավորում
- ✳ Ձեռնարկության զարգացման նպատակով օտարերկրյա ներդրումների ներգրավում:

Շուկայական հարաբերությունների հիմնավորմանը զուգընթաց, հետզհետե ավելի կընդլայնվեն գործարարության ծրագրի կիրառման ոլորտները և ավելի կկատարելագործվի դրանց մշակման կարգը:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ օրենսդրությամբ գործարարության ծրագրի կազմումը պարտադիր չէ, սակայն զարգացած շուկայական տնտեսություն ունեցող երկրների փորձը ցույց է տալիս, որ բիզնես պլանի կազմումը դառնում է օբյեկտիվ անհրաժեշտություն: Այստեղ տեղին է համեմատություն անցկացնել նախկինում

36 Стѣп Голяков С.М. Общий и стратегический менеджмент. Бизнес-планирование на малых и средних предприятиях. Вестник Санкт-Петербургского университета. - 2003. Сер. 8. Вып. 4 (№ 32), էջ 5, Кузнецов В.В. Методические указания для проведения деловой игры по разработке бизнес-проекта предпринимательской деятельности со студентами направлений: "Менеджмент" и "Коммерция". Ульяновск: УлГТУ, 2000., էջ 6-7

ձեռնարկությունների կողմից կազմվող կարճաժամկետ պլանավորման վճարումների օրացուցային պլանի հետ, որը հնարավորություն էր տալիս արդյունավետ կազմակերպել ֆինանսական աշխատանքները՝ կապված եկամուտների ստացման և ծախսերի կատարման հետ: Դրա կազմումը նույնպես պարտադիր չի եղել, սակայն ձեռնարկությունների մեծ մասը պլան ունեցել է մշտապես, որը նրանց հնարավորություն է տվել կանխատեսել հնարավոր ֆինանսական դժվարությունները, ժամանակին միջոցներ ձեռնարկել լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ հայթայթելու ուղղությամբ և լուծել ժամանակավոր ֆինանսական դժվարությունները:³⁷

Գործարարության ծրագիրը լուծում է ոչ միայն օպերատիվ պլանավորման հիմնահարցերը, այլև կարող է ունենալ սերտ առնչություններ արտադրական գործունեության հետ, որոնք վերաբերում են մատակարարների և սպառողների հետ կապերի հաստատմանը և ընդլայնմանը:

Այս տնտեսական հետաքրքրությունների շրջանակներում բիզնես-պլանը կարող է լուծել նաև ձեռնարկության ֆինանսավորման հետ կապված խնդիրներ: Բանկերի, ներդրումային հիմնադրամների և այլ ներդրողների հետ պայմանագրեր կնքելիս բիզնես պլանը օգնում է համոզել նրանց, որ ձեռնարկությունը ունի արտադրության զարգացման հնարավորություններ, որ գոյություն ունեն իրական և շարունակական նախադրյալներ՝ ձեռնարկատիրական գաղափարը իրականացնելու համար:

Ձեռնարկության տնտեսական գործընկերները, նախքան պայմանագրային հարաբերությունների հաստատումը, կարող են ձեռնարկության բիզնես-պլանի միջոցով համոզվել առևտրային հաջողությունների և բավականաչափ շահույթ ստանալու հնարավորությունների մեջ: Դա երաշխիք է ստեղծում արդյունավետ տնտեսական հարաբերությունների մեջ մտնել հումքի, նյութերի, սարքավորումների մատակարարների, սեփական արտադրանքի իրացման միջնորդների և բոլոր այն ձեռնարկությունների հետ, որոնք հետաքրքրություն են ներկայացնում գիտատեխնիկական, արտադրական, ներդրումային և այլ տնտեսական համագործակցության բնագավառներում:³⁸

37 Кудашев В. Основы бизнес-планирования / Отв. ред. О. Олейник. Украинская Консалтинговая Сеть., 2015, էջ 8-10

38 Халтаева С.Р., Яковлева И.А. Бизнес-планирование. Учебное пособие. Улан-Удэ: Изд-во ВСГТУ, 2005, էջ 68.

Այսպիսով՝ գործարարության ծրագիրը գործնականում հիմք է հանդիսանում ինչպես փոխառու և ներքին կապիտալի, այնպես էլ օտարերկրյա ներդրողների միջոցներ ներգրավելու, համատեղ ձեռնարկություններ կազմակերպելու և փոքր ու միջին բիզնեսը զարգացնելու համար, որի դեպքում ակնկալվում է բիզնես-պլանի միջոցով բացահայտել՝

1. Ձեռներեցի որակավորումը: Ով է ղեկավարում ֆիրման, ինչ աշխատանքի փորձ ունի նա
2. Ծրագրի արդյունավետությունը, միջոցների վերադարձման ժամկետները, եկամուտների և ծախսերի հոսքերը
3. Միջոցների վերադարձման երաշխիքները
4. Ֆինանսական գործընթացի վերահսկելիությունը:

Այդ ամենը արտահայտություն են գտնում ծրագրի հետևյալ ուղղությունների մեջ՝

- ✳ անհատ ձեռներեցի կամ ձեռնարկության նպատակների ձևավորում, քանակական և որակական ցուցանիշների պարզում.
- ✳ արտադրական, մարքեթինգային և կազմակերպական փոխկապակցված ծրագրերի մշակում, որն ապահովում է առաջադրված խնդրի կատարումը.
- ✳ ֆինանսավորման անհրաժեշտ ծավալների որոշում և դրա աղբյուրների բացահայտում.
- ✳ դժվարությունների կառավարման, մարքեթինգային, բիզնեսի իրավիճակների և հիմնահարցերի բացահայտում, որոնց հետ առճակատվում են նախագծերի կենսագործման ժամանակ.
- ✳ իրականացվող նախագծերի նկատմամբ վերահսկողության համակարգի կազմակերպում և տնտեսական հիմնավորում:

Բիզնես ծրագրի այս հինգ ուղղությունների վերլուծությունը վկայում է այն մասին, որ դա անհրաժեշտ է ձեռներեցին նույնիսկ այն դեպքում, երբ փոխատվական կապիտալի մասնակցությունը չի նախատեսվում:

Համաշխարհային պրակտիկայում գործարարության ծրագրի մշակումը տեղի է ունենում հետապնդվող նպատակին ներկայացվող պահանջներին համապատասխան: Կոնկրետ բիզնես-ծրագրի բովանդակությունը կախված է ծրագրի առանձնա-

հատկություններից և պայմանավորված է նոր աշխատանքների նախագծման, առաջադիմական տեխնոլոգիաների ներդրման ու ֆինանսական պայմանների բարելավման հետ կապված մի շարք գործոններով:³⁹

Համաձայն միջազգային ձևավորված պրակտիկայի՝ գործարարության ծրագիրը կազմելիս պետք է ունենալ կազմակերպական պլան, ներառելով հետևյալ 3 խումբ խնդիրները՝

1. Ֆինանսական վիճակի էքսպրես վերլուծություն.
2. Տնտեսական գործունեության վրա ներքին ու արտաքին գործոնների ազդեցության վերլուծություն.
3. Պլանային ժամանակաշրջանի համար քանակական ցուցանիշների և նպատակների որոշում:⁴⁰

Ֆինանսական վիճակի էքսպրես վերլուծության խնդիրն է կոնկրետ պահին գնահատել տվյալ ձեռնարկության ֆինանսական դրությունը, ուսումնասիրել հաշվեկշռի կազմը և կառուցվածքը:

Ֆինանսական դրության վերլուծության համար օգտագործվում են հետևյալ չորս խումբ ֆինանսական գործակիցները.

- ✳ Իրացվելիության գործակիցներ.
- ✳ Վճարունակության գործակիցներ.
- ✳ Գործարար ակտիվության գործակիցներ.
- ✳ Շահութաբերության գործակիցներ:

Այն թույլ է տալիս բացահայտել ձեռնարկության հնարավորությունները և զարգացման դինամիկան:⁴¹

Կազմակերպական պլանի 2-րդ բաժնի խնդիրն է վերլուծության ենթարկել ձեռնարկության ողջ տնտեսական գործունեությունը, ուսումնասիրել ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը, բացահայտել չօգտագործված պահուստները, գնահատել կազմակերպության բիզնես-պլանի հիմնավորվածության աստիճանը:

39 Шапиро Л.Д. Методическое пособие по составлению бизнес-планов с использованием программного продукта "Project Expert". Томск, 2015. էջ 45

40 Гайворонская С.А. Методы бизнес-расчётов в среде табличного процессора Excel: Учебное пособие. - Воронеж: ИПЦ ВГУ, 2007, էջ 125

41 Павлов В.А., Попов С.О. Как разработать бизнес-план и оформить документы на получение кредита. Методическое пособие для предпринимателей, действующих в Новгородской области. - Великий Новгород, 2014, էջ 75-77

Կազմակերպական պլանի 3-րդ բաժինը կազմվում է մարքեթինգային հետազոտությունների արդյունքում: Դրա միջոցով որոշվում է ձեռնարկության արտադրական և առևտրային ռազմավարությունը, պարզվում են այն հիմնական քանակային ցուցանիշները, որոնք հետագայում հիմք են ընդունվում բիզնես-պլանի և, հատկապես, ֆինանսական պլանավորման համար: Այս ցուցանիշների խմբին են դասվում ապրանքային արտադրանքի, ծառայությունների ծավալները, հնարավոր գները, հասույթը, ապրանքների արտադրության և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ նյութական, աշխատանքային ծախսումները, աշխատողների միջին աշխատավարձը և այլն:⁴²

Այսպիսով՝ գործարարության ծրագրի առկայությունը և անընդմեջ գործուն պահելը պայմանավորված է նաև ձեռնարկությունների կողմից մշտապես նախատեսվող այնպիսի միջոցառումների լուծմանը, որոնք միտված են արտադրվող արտադրատեսականու արդիականացման, ինչպես նաև այդ տեսականու ընդլայնման կարևորագույն խնդիրների լուծմանը:

Բիզնես պլանը կազմելիս պետք է անխուսափելիորեն պահպանել այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են՝ ճկունությունը, անխզելիության, կապակցվածության, խնդիրների լուծման քայլաշարային, մասնակցության և համարժեքության սկզբունքները:

Գործարարության ծրագրի կազմման ընթացքում պետք է հաշվի առնել նաև կարևորել վերջինիս առաքելությամբ որդեգրած չորս առանցքային գործառույթները.

- ա) բիզնես պլանի միջոցով է մշակվում կազմակերպության ռազմավարությունը,
- բ) բիզնես պլանը պետք է ապահովի կազմակերպության գործունեության հստակ պլանավորում,
- գ) բիզնես պլանի միջոցով է հնարավոր ներգրավել վարկային ռեսուրսներ,
- դ) բիզնես-պլանի միջոցով է հնարավոր անմիջականորեն ներգրավել պոտենցիալ ներդրողներին:⁴³

⁴² Поляков П.В., Коробов С.А. Программные инструменты разработки бизнес-планов: система Project Expert: Учебное пособие. - Волгоград: Изд-во ВолГУ, 2004, էջ 145

⁴³ Халтаева С.Р., Яковлева И.А. Бизнес-планирование. Учебное пособие. - Улан-Удэ: Изд-во ВСГТУ, 2005., էջ 34

1.3. Փոքր և միջին ձեռնարկատիրության կազմակերպման բնորոշ առանձնահատկությունները ՀՀ-ում և միջազգային պրակտիկայում

Ժամանակակից շուկայական տնտեսությունում փոքր և միջին գործարարությունը հանդիսանում է տնտեսական համակարգի կարևորագույն տարրերից մեկը, առանց որի անհնարին է տնտեսության դինամիկ զարգացումը: Այս ոլորտի զարգացումը նպաստում է տնտեսական և զբաղվածության աճին: Ձեռներեցության ավելի ճկուն համակարգ ունենալու համար՝ մեծ է փոքր և միջին բիզնեսի դերը նորաստեղծությունների գործարկման, բնակչության կարիքների բավարարման գործում և այլն:

Ձեռնարկությունների դասակարգման հիմքում ընկած են տարբեր չափանիշներ, այդուհանդերձ ըստ մեծության և չափերի՝ դրանք դասակարգվում են՝ փոքր, միջին և խոշոր: Այդուհանդերձ նշեմք, որ առ այսօր դեռևս գոյություն չունի փոքր և միջին ձեռնարկությունների դասակարգման միջազգային հստակ չափանիշներ: Ընդհանուր առմամբ, փոքր ձեռնարկությունների մասին իրենց կարծիքն արտահայտել են տարբեր տնտեսագետներ և առաջարկել ձեռնարկությունների սահմանման ժամանակ հաշվի առնել որոշ ցուցանիշներ: Համաձայն այդ սահմանումներից մեկի՝ փոքր ձեռնարկություն է համարվում անկախ և ինքնուրույն գործող, իր ոլորտում որոշակի արտոնություններ չունեցող ձեռնարկությունը, որը աշխատողների քանակով և տարեկան հասույթի չափերով չպետք է գերազանցի օրենքով սահմանված չափերը:⁴⁴

Ամերիկացի տնտեսագետներ Նորթոն Գուդվինը և Աննա Արբորը այս հարցի կապակցությամբ կատարել են այլ եզրակացություն. փոքր ձեռնարկության ոչ մի ունիվերսալ բնորոշում չի կարող բոլոր խնդիրների համար բավարար լինել: Կարևորն այն չէ, թե բոլոր խնդիրների համար կգտնվեն այնպիսի համապարփակ լուծումներ, որոնք հստակ կբաժանեն փոքր ձեռնարկությունը մեծից, այլ կարևորն այն է, որպեսզի տրվի փոքր և մեծ ձեռնարկությունների համար օգտակար

⁴⁴ Агафонов А.Ю. Тенденции развития финансовой поддержки малого бизнеса ЭПОС. – 2010. - №4. էջ 59-63

ընդհանրացումներ:⁴⁵ Սակայն շտապելով նշենք, որ նման դիրքորոշումն, անտարակույս, սխալ է, ինչին առավել հանգամանորեն կանդրադառնանք ստորև:

Փոքր ձեռնարկությունների չափը որոշելու համար շատ հաճախ օգտագործվում են այնպիսի ցուցանիշներ, ինչպես օրինակ աշխատողների քանակը, ապրանքների և ծառայությունների իրացումից ձևավորված հասույթի մեծությունը, ակտիվների հաշվեկշռային արժեքները և այլն:⁴⁶ Այս չափանիշի կիրառման հիմնական առավելությունը կայանում է նրանում, որ դրա օգտագործումը շատ հարմար է և հեշտ: Այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են շրջանառությունը կամ աշխատողների քանակը, որպես կանոն, հասանելի են հետազոտությունների համար: Փոքր ձեռնարկությունների քանակական բնորոշման հիմնական թերությունը դրանց բացարձակության, այս կամ այն ցուցանիշի ընտրության և դրա սահմանների փոփոխության տեսական բազայի բացակայության մեջ է: Եվ դա է պատճառը, որ այս ցուցանիշի օգնությամբ դժվար է կատարել համեմատական վերլուծություն:

Բնորոշման որակական տարբերակները կանխատեսում են որակական չափանիշների օգտագործում: Նման չափանիշի օգնությամբ փոքր ձեռնարկության չափի որոշումը հաճախ կրում է սուբյեկտիվ բնույթ և ըստ էության, հաշվի է առնում միայն ձեռնարկության արդյունքը: Որպես այդպիսի մոտեցման օրինակ՝ ներկայացնենք Վան Հորնի բնորոշումը /Նիդեռլանդներ 1979թ/, որի համաձայն՝ փոքր են համարվում այն ձեռնարկությունները, որոնք ունեն՝

- ✳ արտադրվող ապրանքների և մատուցվող ծառայությունների համեմատական քիչ քանակություն,
- ✳ համեմատաբար սահմանափակ ռեսուրսներ և հզորություններ,
- ✳ ձեռնարկության ռազմավարական վիճակը գնահատելու և ղեկավարելու համար ոչ բավարար կառավարման համակարգեր, ղեկավարման բլոկի կառուցվածք,
- ✳ մենեջմենթի, աշխատակազմի ղեկավարման /որակավորում, ուսուցում/ աշխատանքների թերություն,

⁴⁵ As It the Mattered: Translating Social and Economic Theory into Human Behavior // N.R. Goodwin (ed.). Ann Arbor (Mich.), 2012, էջ 32

⁴⁶ Силаев И. Малые предприятия и экономическая политика государства // Проблемы теории и практики управления. 2013 № 3., էջ 11

✳ ձեռնարկության ղեկավար պաշտոնները զբաղեցնում են հենց իրենք՝ հիմնադիրները:⁴⁷

Հիմնվելով այս չափանիշների վրա, Վան Հորնը առաջարկեց Նիդեռլանդներում «փոքր» համարել 50-500 աշխատակիցներ և մինչև 1 մլն տարեկան ֆունտ ստեռլինգ շրջանառություն ունեցող ձեռնարկությունները:

Մեկ այլ բնորոշման համաձայն՝ փոքր ձեռնարկություն է այն ձեռնարկությունը, որի ձեռնարկատերը ինքն է ուղղակիորեն մասնակցում արտադրության և կառավարման գործընթացներում:⁴⁸

Որպես կանոն, առավել ընդհանուր չափորոշիչները, որոնց հիման վրա ձեռնարկությունները բաժանվում են փոքրերի, միջինների և խոշորների, հետևյալներն են՝

- անձնակազմի թվաքանակը,
- կանոնադրական կապիտալի չափը,
- ակտիվների մեծությունը,
- շրջանառության ծավալը /շահույթի, եկամտի չափը/⁴⁹

Համաձայն Համաշխարհային բանկի տվյալների, ցուցանիշների ընդհանուր թվաքանակը, որոնց հիման վրա ձեռնարկությունները բաժանվում են խմբերի, գերազանցում է 50-ը: Սակայն առավել հաճախ կիրառվող չափորոշիչները հանդիսանում են վերոնշյալները: Գործնականում բոլոր երկրներում որոշիչ չափորոշիչ է հանդիսանում հաշվետու տարում աշխատողների թվաքանակը:

Այսպես՝ Տնտեսական համագործության և զարգացման միջազգային կազմակերպությունը, որի մեջ մտնում են տնտեսական զարգացվածության բարձր մակարդակ ունեցող երկրները, մինչև 19 աշխատող ունեցող ձեռնարկությունը սահմանվում է որպես «շատ փոքր», մինչև 99 աշխատող ունեցողները որպես «փոքր կամ մանր», 100-ից մինչև 499 աշխատող ունեցողները որպես «միջին» և 500-ից

47 Основы финансового менеджмента. Ван Хорн Дж.К., Вахович Дж.М. 12-е изд. - М.: "И.Д. Вильямс", 2008, էջ 825-826

48 Радченко Я. Проблемы рационального сочетания малых, средних и крупных предприятий в условиях перехода к рыночной экономике //Известия Академии наук СССР.-1991 .-№ 1

⁴⁹ Гребенюк Н. Законодательное регулирование предпринимательства: итоги и перспективы // Экономика и жизнь. 2015.- № 52(дек.), էջ 9

ավել աշխատող ունեցողները որպես խոշոր:⁵⁰ Իսկ համաձայն Եվրամիության վիճակագրական ծառայության՝ «աշխատողների թիվ» չափանիշի ձեռնարկությունները բաժանվում են չորս տեսակի՝

- ✳ միկրոձեռնարկություններ – 0-9 աշխատողներ,
- ✳ փոքր ձեռնարկություններ – 10-49 աշխատողներ,
- ✳ միջին ձեռնարկություններ – 50-249 աշխատողներ,
- ✳ խոշոր ձեռնարկություններ – 250-ից ավել աշխատողներ:⁵¹

2005թ. հունվարի 1-ից սկսած՝ Եվրոպական Հանձնաժողովը սահմանել է միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների դասակարգումը հետևյալ չափանիշներով

Աղյուսակ 1. Եվրոպական Հանձնաժողովի կողմից առաջարկված միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների դասակարգումը*

Չափանիշ	Միկրո	Փոքր	Միջին
Աշխատողների առավելագույն թվաքանակը	9	49	249
Առավելագույն տարեկան շրջանառությունը	2 մլն եվրո	10 մլն եվրո	50 մլն եվրո
Հաշվեկշռի առավելագույն գումարը	2 մլն եվրո	10 մլն եվրո	43 մլն եվրո
Անկախությունը	Փոքր և միջին ձեռնարկություն չհամարվող մեկ կամ մի քանի կազմակերպություններին պատկանող կապիտալի մինչև 25%-ը		

* Աղբյուրը՝ Европа. Специальный выпуск. 2004. № 8, էջ 11

Միացյան Ազգերի Կազմակերպության Տնտեսական Հանձնաժողովը առաջարկեց փոքր ձեռնարկությունների դասակարգում տարբեր չափանիշներով՝ ըստ տարբեր տարածաշրջանների: Այսպես, Աֆրիկայի երկրների համար առաջարկվեց փոքր ձեռնարկություններ մինչև 100, Լատինաամերիկյան երկրներում՝ 5-50, իսկ Հարավ-Արևելյան Ասիայի և Օկեանիայի երկրների համար՝ մինչև 50 մարդ՝ ձեռքի աշխատանքներում, իսկ մինչև 20 մարդ՝ մեքենայացված աշխատանքներում:⁵²

ԱՄՆ-ում փոքր ձեռնարկատիրության մասին օրենքով սահմանվում է, որ փոքր ձեռնարկությունը մեկ կամ մի քանի սեփականատեր, մինչև 500 աշխատող,

⁵⁰ Бухвальд Е., Виленский А. Российская модель взаимодействия малого и крупного предпринимательства // Вопросы экономики.-2006.- №12

⁵¹ http://ec.europa.eu/eurostat/statistics-explained/index.php/Resource_productivity_statistics

⁵² Нестеренко Ю.Н. Малый бизнес: тенденции и ориентиры развития в современной России. – М.: Издательский центр РГГУ, 2007., էջ 30-32

մինչև 5,000,000 ԱՄՆ դոլար ակտիվ և մինչև 2,000,000 ԱՄՆ դոլար տարեկան շահույթ ունեցող ձեռնարկությունն է: Վարձու աշխատողների թվաքանակից կախված ԱՄՆ-ում ձեռնարկությունները բաժանվում են.

- գերփոքրեր – 1-ից մինչև 24 աշխատողներ,
- փոքրեր – 25-ից մինչև 99 աշխատողներ,
- միջիններ – 100-ից մինչև 499 աշխատողներ,
- խոշորներ – 500-ից մինչև 999 աշխատողներ,
- գերխոշորներ – 1000 և ավելի աշխատողներ:⁵³

Անհրաժեշտ է նշել, որ ինչպես մյուս շատ երկրներում, այնպես էլ ԱՄՆ-ում մեծ դեր է խաղում նաև ձեռնարկության ճյուղային պատկանելությունը: Ընդ որում՝ որոշ ճյուղերում վճռորոշ դեր է խաղում աշխատողների թվաքանակը /վերամշակող և արդյունահանող արդյունաբերություն/, իսկ մյուսներում՝ շրջանառության ծավալը /շինարարություն, առևտուր, ծառայություններ/: Չափորոշիչների նորմաները ԱՄՆ տարբեր ճյուղերում աշխատող ձեռնարկությունների համար տարբեր են:

Արևմտյան երկրների տնտեսությունների կառուցվածքում փոքր և միջին ձեռնարկությունների մասնաբաժնի ակտիվ աճ նկատվեց 70-ական թվականների կեսերին և 90-ական թվականների սկզբներին: Ներկայումս Արևմտյան առավել զարգացած երկրներում փոքր և միջին ձեռնարկությունները կազմում են ձեռնարկությունների ընդհանուր թվաքանակի 70-90%-ը⁵⁴: Համեմատության համար կարելի է վերցնել օրինակ ԱՄՆ-ն, որտեղ փոքր և միջին բիզնեսում զբաղված են ընդհանուր բնակչության 49.9%-ը, Ճապոնիայում՝ 64.2%-ը և Եվրամիության երկրները, որտեղ նմանատիպ ձեռնարկություններում աշխատում է աշխատունակ բնակչության 71.92%-ը:⁵⁵

⁵³ Разумнова И., Мелкие предприятия в промышленности США, Проблемы теории и практики управления: 2001, էջ 66-68

⁵⁴ Оноприенко В. И., Мелкие предприятия: Опыт, проблемы: М. Профиздат., 2010, էջ 144

⁵⁵ Береснева А. Роль малого бизнеса в развитии экономики // ЭКО.-2014.-№8, էջ 8-9

Ընդհանուր աշխատատեղերի բաշխումն ըստ ձեռնարկությունների մեծության 2016թ. հունվարի 1-ի դրությամբ՝ արտահայտված տոկոսներով⁵⁶

ԱՄՆ	1-99 աշխատող 11.4	100-499 աշխատող 38.5	500 և ավել աշխատող 50.54
Ճապոնիա	1-99 աշխատող 17.3	100-299 աշխատող 46.9	300 և ավել աշխատող 35.8
Եվրամիություն	1-49 աշխատող 26.9	50-299 աշխատող 45.02	300 և ավել աշխատող 28.1
Աֆրիկա	1-99 աշխատող 24.4	100-199 աշխատող 48.9	200 և ավել աշխատող 26.7
Հարավ-Արևելյան Ասիա	1-49 աշխատող 26.9	50-599 աշխատող 46.8	600 և ավել աշխատող 26.3
Ավստրալիա	1-99 աշխատող 18.9	100-499 աշխատող 41.8	500 և ավել աշխատող 39.3

* Աղբյուրը՝ US Small Business Administration, Japan Industrial census – DG XXIII / Eurostat - Decision

Միայն այս թվերն արդեն խոսում են այս երկրների տնտեսությունների համար փոքր և միջին ձեռնարկությունների կարևորության մասին: Այս ընկերությունների արդյունավետության օգտին խոսում է նաև այն փաստը, որ կատարված 1 ԱՄՆ դոլար ծախսով դրանք ներդնում են 17 անգամ ավելի շատ նորարարություններ և մշակումներ, քան խոշոր ձեռնարկությունները, որոնք կյանքի են կոչում նոր տեխնոլոգիաների միայն 10%-ը, իսկ մնացած 90%-ը ներդնում են փոքր ձեռնարկությունները և անկախ գյուտարարները:⁵⁷

2007թ. հուլիսի 24-ին ՌԴ-ում ընդունված «Ռուսաստանի Դաշնությունում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման մասին» Դաշնային օրենքի համաձայն՝ ՌԴ փոքր և միջին ձեռնարկությունները ստեղծվում են հետևյալ չափանիշներով.

⁵⁶ Տես՝ US Small Business Administration, Japan Industrial census – DG XXIII / Eurostat - Decision

⁵⁷ Бахрушина М. Оценка эффективности бизнеса // Экономика и жизнь. 2013.- №11(март), էջ 12

Աղյուսակ 3. ՌԴ-ում առաջարկված միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների դասակարգումը*

Չափանիշ	Միկրո	Փոքր	Միջին
Աշխատողների առավելագույն թվաքանակը	15	16-100	101-250
Առավելագույն տարեկան շրջանառությունը	մինչև 60 մլն ռուբլի	մինչև 400 մլն ռուբլի	մինչև 1 միլիարդ ռուբլի
Անկախությունը	Փոքր և միջին ձեռնարկություն չհամարվող մեկ կամ մի քանի կազմակերպություններին պատկանող կանոնադրական կապիտալի մինչև 25%-ը		

* Աղբյուրը՝ <http://rcsme.ru/ru/statistics>

Փոքր և միջին գործարարության և ձեռնարկատիրության դերը կարևորվեց հատկապես 20-րդ դարի 60-70-կան թվականներին: Եվրոպական Միության 15 երկրներում փոքր /մինչև 250 մարդ/ և միջին /մինչև 500 մարդ/ կազմակերպություններին բաժին էր ընկնում

" ավելի քան 72 մլն մարդ,

" ՀՆԱ-ի ավելի քան 70 տոկոսը:⁵⁸

Բացի այդ, վերջին 10 տարիների ընթացքում՝ համաձայն վիճակագրական տվյալների, զբաղվածների թվաքանակը փոքր և միջին ձեռնարկություններում աճել է 4.85 տոկոսով:⁵⁹

Փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման մակարդակը որոշ երկրներում ունեցել է հետևյալ տեսքը

⁵⁸ Бахрушина М. Оценка эффективности бизнеса // Экономика и жизнь. 2013.- №11(март), էջ 12-13

⁵⁹ Королев В. Предпринимательство дело новое или хорошо забытое? // Знание.-2015.- № 1-2., էջ 6-7

Աղյուսակ 4. Փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման մակարդակը 01.01.2016թ. դրությամբ՝ ըստ որոշ երկրների*

Երկրներ	Փոքր և միջին ձեռնարկությունների քանակը /հազ./	Փոքր և միջին ձեռնարկությունների քանակը 10 հազ. բնակչի հաշվով	Փոքր և միջին ձեռնարկություններում զբաղվածների քանակը /մլն մարդ/	Փոքր և միջին ձեռնարկություններում զբաղվածների քանակը ընդհանուր զբաղվածների մեջ /%/	Փոքր և միջին ձեռնարկությունների մասնաբաժինը ՀՆԱ-ում /%/
Մեծ Բրիտանիա	3841	685	18.1	49	50-53
Գերմանիա	3158	645	21.6	46	50-52
Իտալիա	3920	680	16.8	73	57-60
Ֆրանսիա	2877	458	15.2	54	55-62
Եվրոպական Միության այլ երկրներ	20003	756	68.0	72	63-67
ԱՄՆ	19300	742	70.2	54	50-52
Ճապոնիա	6450	496	39.5	78	52-55
Ռուսաստան	2118	57	7.5	15	9-10

• Աղբյուրը՝ US Small Business Administration, Japan Industrial census – DG XXIII / Eurostat – Decision http://ec.europa.eu/eurostat/statistics-explained/index.php/File:Enterprise_size_class_analysis_of_key_indicators,_non-financial_business_economy,_EU-27,_2009.PNG

Զարգացած, կայուն և դինամիկ աճ ունեցող երկրներում այս տեսանկյունից ներքին և արտաքին շուկայում մեծ վարկանիշի հասած շատ երկրներում համախառն ներքին արդյունքի առյուծի բաժինը ձևավորվում է փոքր և միջին ձեռնարկատիրության հաշվին: Եվ դրանում զարմանալի ոչինչ չկա, քանզի հենց մանր գործարարություն է, որ մշտապես խթանում է տնտեսության, բնակչության կենսագործունեության տարաբնույթ ոլորտները: Փոքր ձեռնարկությունների ակտիվ զարգացումը սկսվեց 20-րդ դարի 90-ական թվականներին և շարունակվում է մինչև օրս: Ներկայումս առավել զարգացած Արևմտյան Եվրոպայում փոքր ձեռնարկությունները կազմում են ընդհանուր կազմակերպությունների 70-90%-ը:⁶⁰ Համեմատության համար կարելի է վերցնել օրինակ ԱՄՆ-ն, որտեղ փոքր և միջին

⁶⁰ Мишин А. Инвестиционная поддержка малого бизнеса // РЭЖ.-1998,- № 5, էջ 45

բիզնեսում զբաղված են ընդհանուր բնակչության 49.9%-ը, ճապոնիայում՝ 64.2%-ը և Եվրամիության երկրները, որտեղ նմանատիպ ձեռնարկություններում աշխատում է աշխատունակ բնակչության 71.92%-ը:⁶¹

Աղյուսակ 5.

Ընդհանուր աշխատատեղերի բաշխումն ըստ ձեռնարկությունների մեծության 2015թ.-ին արտահայտված տոկոսներով⁶²

ԱՄՆ	1-99 աշխատողներ 11.4	100-499 աշխատողներ 38.5	500 և ավել աշխատողներ 50.54
Ճապոնիա	1-99 աշխատողներ 17.3	100-299 աշխատողներ 46.9	300 և ավել աշխատողներ 35.8
Եվրամիություն	1-49 աշխատողներ 26.9	50-299 աշխատողներ 45.02	300 և ավել աշխատողներ 28.1
Աֆրիկա	1-99 աշխատողներ 21.4	100-199 աշխատողներ 46.6	200 և ավել աշխատողներ 32.0
Հարավ-Արևելյան Ասիա	1-49 աշխատողներ 31.5	50-599 աշխատողներ 38.8	600 և ավել աշխատողներ 29.7
Ավստրալիա	1-99 աշխատողներ 12.8	100-499 աշխատողներ 34.7	500 և ավել աշխատողներ 52.5

• Աղբյուրը՝ US Small Business Administration, Japan Industrial census – DG XXIII / Eurostat – Decision http://ec.europa.eu/eurostat/statistics-explained/index.php/File:Enterprise_size_class_analysis_of_key_indicators,_non-financial_business_economy,_EU-27,_2009.PNG

ՀՀ-ում փոքր և միջին բիզնեսի դասակարգումը կատարվել է դեռևս 1991թ. ՀՀ նախարարների խորհրդի հունվարի 22-ի թիվ 42 որոշմամբ, որն, ըստ էության, ձեռնարկատիրության ոլորտի կարգավորման առաջին իրավական ակտերից մեկն է, համաձայն որի՝ առաջին անգամ հանրապետությունում կատարվեց փոքր ձեռնարկությունների դասակարգում ըստ տնտեսության համապատասխան ճյուղերի ու ոլորտների՝

- ✚ արդյունաբերության և շինարարության ոլորտի համար՝ մինչև 200 մարդ,
- ✚ արտադրության այլ ճյուղերի համար՝ մինչև 50 մարդ,
- ✚ գիտության ոլորտի համար՝ մինչև 50 մարդ,
- ✚ ոչ արտադրական ոլորտի համար՝ մինչև 20 մարդ,

⁶¹ Оноприенко В. И., Мелкие предприятия: Опыт, проблемы: М. Профиздат., 2010, էջ 185

⁶² US Small Business Administration, Japan Industrial census – DG XXIII / Eurostat - Decision

✚ մանրաձախ առևտրի ոլորտի համար՝ մինչև 15 մարդ:⁶³

Մանր ձեռնարկություններում աշխատողների սահմանային թվաքանակը արտացոլվեց նաև «Ձեռնարկությունների և ձեռնարկատիրական գործունեության մասին» օրենքում (ընդունված 1992թ-ի մարտի 14-ին), որի 34-րդ հոդվածում նշվում է, որ «փոքր է կոչվում իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող այն ձեռնարկությունը, որն ունի արդյունաբերության և շինարարության ոլորտում ոչ ավելի, քան 200, նյութական արտադրության մյուս ճյուղերում՝ 50, գիտության և գիտական սպասարկման բնագավառում՝ 50 և մյուս ոլորտներում՝ 25 աշխատող»:⁶⁴

ՀՀ-ում փոքր և միջին գործարարության սուբյեկտները դասակարգվում են՝ ելնելով աշխատողների թվաքանակից՝ հիմք ընդունելով «Փոքր և միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության մասին» ՀՀ օրենքը (ընդունված 2000թ. դեկտեմբերի 28-ին): Փոքր և միջին բիզնեսի կամ ՓՄՁ-ի սուբյեկտ են համարվում այն առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը համապատասխանում է ստորև ներկայացրած աղյուսակի չափորոշիչներին:

Աղյուսակ 6
ՓՄՁ սուբյեկտների դասակարգումը՝ ըստ ՀՀ օրենսդրության⁶⁵

Դասակարգում		ՓՄՁ սուբյեկտներ	
Ոլորտ	Գերփոքր (աշխատողների թվաքանակ/մարդ)	Փոքր (աշխատողների թվաքանակ/մարդ)	Միջին (աշխատողների թվաքանակ/մարդ)
Արդյունաբերություն և նյութական արտադրության այլ ճյուղեր	5	50	100
Շինարարություն և էներգետիկա	5	25	50
Գիտություն և կրթություն	5	25	50
Տրանսպորտ, առևտուր և ծառայություններ	5	15	30

* Աղբյուրը՝ <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1952&lang=arm>

⁶³ Տես՝ ՀՀ նախարարների խորհրդի 1991թ. հունվարի 22-ի թիվ 42 որոշում

⁶⁴ Տես՝ «Ձեռնարկությունների և ձեռնարկատիրական գործունեության մասին» օրենքում (ընդունված 1992թ-ի մարտի 14-ին)

⁶⁵ Տես՝ ՀՀ օրենքը ՓՄՁ պետական աջակցության մասին, դեկտեմբերի 28 2000թ.

ՓՄՁ աջակցության ռազմավարություն. 2015-2017թթ. փաստաթղթում առավել խոշորացված տեսքով ներկայացվում է, որ ՀՀ-ում ՓՄՁ-ն սահմանվում է «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով, համաձայն որի ՓՄՁ սուբյեկտները բաժանվում են գերփոքր, փոքր եւ միջին ձեռնարկատերերի.

- **գերփոքր** են համարվում մինչև 10 աշխատող և մինչև 100 մլն ՀՀ դրամ տարեկան շրջանառություն ունեցող տնտեսվարող սուբյեկտները;
- **փոքր** են համարվում մինչև 50 աշխատող և մինչև 500 մլն ՀՀ դրամ տարեկան շրջանառություն ունեցող տնտեսվարող սուբյեկտները;
- **միջին** են համարվում մինչև 250 աշխատող և մինչև 1 500 մլն ՀՀ դրամ տարեկան շրջանառություն ունեցող տնտեսվարող սուբյեկտները:

Սակայն, ըստ հարկային օրենսդրության գաղափարախոսության և հարկային մարմինների մոտեցումների, փոքր բիզնեսը այն տնտեսվարողներն են, որոնց տարեկան շրջանառությունը չի գերազանցում 58,35 մլն դրամը, միջինը այն տնտեսվարողներն են, որոնց շրջանառությունը չի գերազանցում տարեկան 500 մլն դրամը, իսկ դրանից ավել շրջանառություն ունեցողները համարվում են խոշոր: Իհարկե այս մոտեցումները հարկային օրենսդրության մեջ ամրագրված չեն, բայց կիրառության մեջ մենք ականատես ենք լինում այս տեսակ դասակարգմանը, որն ակնհայտ տարբերվում է «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով սահմանվածից: Եվ իրականում մենք չունենք մեկ միասնական մոտեցում ՓՄՁ-ի ձևակերպման նկատմամբ:⁶⁶

Միաժամանակ մի քանի ոլորտներում գործունեություն իրականացնող կազմակերպությունների՝ որպես մանր և միջին գործարարության սուբյեկտ դասակարգվելը որոշվում է դրանց կողմից իրականացվող գործունեության հիմնական ոլորտի չափորոշիչներով: Այսպես, փոքր և միջին բիզնեսի սուբյեկտ չեն համարվում վարկային, ապահովագրական և ներդրումային կազմակերպությունները, գրավատները, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցները, խաղատները և

⁶⁶ ՓՄՁ աջակցության ռազմավարություն. 2015-2017թթ, 2014թ. դեկտեմբեր, էջ 40
<http://www.rdfund.org/sites/default/files/SME%20strategy%202015%20-%202017.pdf>

շահումով խաղերի կազմակերպման գործունեություն իրականացնող սուբյեկտները, ինչպես նաև դուստր և կախյալ տնտեսական ընկերությունները:⁶⁷

ՓՄՁ-ների համար որպես լրացուցիչ չափորոշիչ կիրառվում է նաև դրանց անկախությունը, ինչը գործնականում նշանակում է, որ բաժնետերերի ընդհանուր ժողովում ձայների կամ շահույթում չափաբաժնի 25%-ից ավելին չի պատկանում այլ խոշոր ընկերության: Օրինակ, Մեծ Բրիտանիայում ըստ «Փոքր գործարարության, ձեռնարկության և աշխատողների ակտի» /2015թ./՝ փոքր է համարվում այն ձեռնարկությունը, որն ունի անկախ սեփականատեր, գործում է անկախ և տվյալ բնագավառում չի զբաղեցնում գերիշխող դիրք, իսկ ձեռնարկությունների չափերի սահմանման ժամանակ հաշվի են առնում շրջանառու միջոցների ծավալը և աշխատողների թվաքանակը: Գերփոքր կազմակերպությունների շարքին են դասվում 1-24 աշխատող ունեցող կազմակերպությունները, իսկ փոքր են համարվում 24-99 աշխատող ունեցող ձեռնարկություններն ու կազմակերպությունները: Ընդ որում՝ վերամշակման արդյունաբերությունում փոքր կազմակերպություններ են համարվում մինչև 200 աշխատող ունեցող, ինչպես նաև 400.000 ֆունտ ստեռլինգ շրջանառություն ունեցող կազմակերպությունները:⁶⁸

Զարգացող տնտեսություն ունեցող երկրներում փոքր և միջին ձեռնարկատիրությունը հղի է բազմաթիվ վտանգներով, անկանխատեսելի հետևանքներով: Այդ իսկ նպատակով փորձենք SWOT վերլուծության ենթարկել այս ոլորտը:

⁶⁷ Տես՝ ՀՀ օրենքը ՓՄՁ պետական աջակցության մասին, դեկտեմբերի 28 2000թ. հոդված 2

⁶⁸ <http://www.legislation.gov.uk/ukpga/2015/26/contents/enacted>

Փոքր և միջին ձեռնարկատիրության՝ որպես տնտեսական գործունեության SWOT վերլուծություն

Փոքր և միջին ձեռնարկատիրության ուժեղ կողմերը	Փոքր և միջին ձեռնարկատիրության թույլ կողմերը	Փոքր և միջին ձեռնարկատիրության հնարավորությունները	Փոքր և միջին ձեռնարկատիրության վտանգները
Փոքր սկզբնական կապիտալ	Սահմանափակ շուկա	Մինչ «խոշոր» բիզնեսի աճ	Սնանկացման բարձր արագություն և հավանականություն
Ճկուն արձագանք արագ փոփոխվող պահանջարկի նկատմամբ	Աճի սահմանափակ հեռանկարներ	Հավասարակշիռ զարգացման հնարավորություն	Աճի «առաստաղի» արագ նվաճում
Կապիտալ շինարարության համեմատաբար կարճ ժամկետներ	Իրավիճակի փոփոխություններից մեծ կախվածություն	Ամուր դիրք փոքր մրցակցային շուկայում	Շուկա մտնելու՝ այլ մրցակիցների համեմատական հեշտություն
Միջոցների արագ շրջանառելիություն	Ազդեցիկ հովանավորության բացակայություն	Ստեղծագործական նախաձեռնությունների առկայություն	Ուժային ճնշման խոցելիություն և կախվածություն «աշխարհի ուժեղներից»
Կառավարման օպերատիվ ռեժիմ	Ֆինանսական ռեսուրսների սահմանափակություն		Ավտորիտար կառավարման առկայություն
Արտաքին միջավայրի փոփոխություններին արագ հարմարվելունակություն	Սահմանափակ /տեղական/ շուկաների առկայություն		
Գործազրկության մակարդակի նվազեցում	Խոշոր ձեռնարկությունների համեմատ՝ փոքր և միջին ձեռնարկությունների համեմատաբար անկայունություն		
Բնակչության սոցիալապես առավել խոցելի խմբերի աշխատանքի տեղավորման հիմնախնդրի լուծում			
Նորաստեղծական նախագծերի իրագործման դյուրինություն			
Սուր մրցակցային միջավայրի ստեղծում			

Ելնելով ներկայացված տվյալներից, փորձենք իրականացնել ՀՀ փոքր և միջին ձեռնարկատիրության SWOT վերլուծություն:

Աղյուսակ 8

ՀՀ փոքր և միջին ձեռնարկատիրության SWOT վերլուծություն

Աշխատանքի արդյունավետությունը որոշող գործոնները	Զարգացման կայունությունը որոշող գործոնները	
	Հնարավորություններ	Սպառնալիքներ
	<p>I. Նոր փոքր և միջին ձեռնարկությունների ստեղծում</p> <p>II. Գիտատեխնիկական կադրերի ներուժի ակտիվ օգտագործում</p> <p>III. Գիտատեխնիկական և գիտահետազոտական կենտրոնների ստեղծում</p> <p>IV. Փոքր և միջին ձեռնարկությունների ստեղծման ճկուն մեխանիզմների առկայություն</p>	<p>I. Գործարարության փոխադրեցության արդյունավետ մեխանիզմի բացակայություն՝ մասշտաբայնության տեսանկյունից</p> <p>II. Խոշոր ձեռնարկությունների մենաշնորհացման բարձր աստիճան</p> <p>III. Փոքր և միջին ձեռնարկությունների նկատմամբ վարվող ոչ ադեկվատ պետական քաղաքականություն</p> <p>IV. Ֆինանսավարկային հաստատությունների մոտեցումը փոքր և միջին ձեռնարկությունների նկատմամբ</p>
	Ուժեղ կողմեր-հնարավորություններ	Ուժեղ կողմեր-սպառնալիքներ
<p>Ուժեղ կողմերը</p> <ol style="list-style-type: none"> 1. Նոր աշխատատեղերի ստեղծում 2. Օժանդակ նշանակության փոքր և միջին ձեռնարկությունների ստեղծման բազայի առկայություն 3. Ձեռնարկատիրական գործունեության զարգացման խթաններ 	<ol style="list-style-type: none"> I. 1,5 II. 2,3 III. 3,8 IV. 2,6,8 V. 1,4,5,8 	<ol style="list-style-type: none"> I. 6,7,8 II. 2,6,8 III. 7,8 IV. 8
<ol style="list-style-type: none"> 4. Կողմնորոշվածություն դեպի գնողունակ պահանջարկը 5. Ձեռնարկատիրական գործունեության ազատություն 6. Արտադրական գործոնների կենտրոնացման բարձր աստիճան 7. Խոշոր ձեռնարկություններին առնչվող օրենսդրանորմատիվային որոշ ակտերի անտեսում 8. Փոքր և միջին ձեռնարկատիրության հետագա զարգացման մեխանիզմների առկայություն՝ 	<p>Եզրահանգում.</p> <p>Հնարավորությունների ուժեղ կողմերը, ինչպես նաև փոքր և միջին ձեռնարկությունների կայուն զարգացման սպառնալիքները կենտրոնացված են 8-րդ՝ փոքր և միջին ձեռնարկատիրության հետագա զարգացման մեխանիզմների վրա: Անհրաժեշտ է ընդգծել, որ փոքր և միջին ձեռնարկատիրության կայուն զարգացման համար անհրաժեշտ է հրատապ վերանայել հնացած բոլոր մեխանիզմները, իսկ անհրաժեշտության դեպքում՝ արագ մշակել և գործարկել նորերը:</p>	

Թույլ կողմերը	Թույլ կողմեր-հնարավորություններ	Թույլ կողմեր-սպառնալիքներ
I. Հանրապետության գիտատեխնիկական ներուժի ոչ բավարար օգտագործումն ու ցածր առևտրայնացումը	I. 3,4,6,9 II. 8 III. 1,3,8 IV. 2,6 V. 4,5,7	I. 2,4,6,7 II. 2 III. 1,8 IV. 3,9
II. Տնտեսության գրեթե բոլոր ոլորտներում մենաշնորհացման բարձր աստիճան		
III. Գիտատեխնիկական նվաճումների օգտագործման ցածր տեխնիկական և ֆինանսական հնարավորությունները	Եզրահանգում.	
IV. Ձեռնարկատերերի և գործարարների որակավորման համեմատաբար ցածր աստիճանը	Թույլ կողմերն ու սպառնալիքները հիմնականում կենտրոնացված են 2,3,4,6 և 8 գործոնների վրա: Վերոհիշյալ գործոնների վերացումը էապես կօժանդակի ՀՀ-ում փոքր և միջին ձեռնարկատիրական գործունեության ոլորտի հետագա զարգացմանը: Հետևապես՝ անհրաժեշտ և պարտադիր պայման է դիտարկվում գործարարների և ձեռնարկատերերի որակավորման աստիճանի բարձրացումը, ինչը հնարավորություն կընձեռի կիրառել գիտատեխնիկական նվաճումները, արդյունավետ կառավարել ինտեգրացիոն գործընթացները, ինչն էլ, իր հերթին՝ կնպաստի բնական մրցակցության մակարդակի բարձրացմանը և կհանգեցնի փոքր և միջին ձեռնարկատիրական գործունեության կայուն զարգացման:	
V. Գնողունակ պահանջարկի վերլուծության ցածր աստիճանը		
VI. Ռեսուրսների արդյունավետ բաշխման նպատակով ինտեգրացիոն գործընթացների բացակայությունը		
VII. Բյուջետային ցածր հատկացումները		
VIII. Բնական մրցակցության բացակայություն		
IX. Տեսակարար ծախքերի բարձր աստիճան		

Աղյուսակից պարզ է դառնում, որ այս ոլորտը հարուստ է բազմաթիվ հնարավորություններով և առավելություններով, սակայն նրա առջև կան նաև անթիվ դժվարություններ և «թակարդներ», այդ իսկ պատճառով փոքր և միջին ձեռնարկատիրության կայունության աստիճանը բարձր չէ, և կարծիք կա, որ փոքր և միջին ձեռնարկատիրության կյանքի միջին տևողությունը 4-5 տարի է:⁶⁹

Սակայն միայն փոքր և միջին ձեռնարկությունները կարող են փակել այն բացերը, որոնք չի կարող ծածկել խոշոր գործարարությունը: Դա առաջին հերթին հասարակությանը մատուցվող ծառայություններն են (հանգստի և զբոսաշրջության, կենցաղ-սպասարկման և այլ մանրածախ ոլորտներում) և բիզնես-ծառայությունները

⁶⁹ Лапуста М.Г., Старостин Ю.Л. Малое предпринимательство : учебник. М.: ИНФРА-М, 2007, էջ 148

(մարքեթինգ, ինժեներինգ և այլն): Երկրորդն այն է, որ առանց բիզնես ծառայությունների շուկայական մեխանիզմը կգրկվեր ձեռնարկությունները սնուցող «մազանոթներից», այդ թվում նաև մեծ ձեռնարկությունները՝ անհրաժեշտ ինֆորմացիայից, կադրերից, այլ ռեսուրսներից:⁷⁰ Քանի որ ռեսուրսների բազայում թարմացումը և համալրումը պարբերական բնույթ չի կրում, ձեռնարկությունների համար այդ ամենով զբաղվելը ձեռնտու չի լինի և ավելի մեծ ծախսեր կպահանջի: Այդ բեռն իր վրա է վերցնում փոքր և միջին բիզնեսը: Փոքր և միջին բիզնեսի զարգացումը վկայում է մրցակցության ուժեղացման մասին: Որքան զարգացած է մրցակցությունը, այնքան արդարացի կլինեն գները, այնքան փոքր են պետության կամ օլիգարխների հնարավորությունները թելադրել իրենց պայմանները, այնքան բարձր է տնտեսվարող սուբյեկտի տնտեսվարման ազատության մակարդակը:

Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը ներառում է տնտեսության բավականին լայն հատված և ներկայացնում է արտադրական և վերամշակող ձեռնարկությունները, արհեստները, առևտուրը, ֆերմերային տնտեսությունները, ծառայությունների և սպասարկման ոլորտը: Փոքր և միջին ձեռնարկատիրությունը շուկայական տնտեսության հիմնական շարժիչ ուժն է: Այն խթանում է մասնավոր սեփականությունը և ձեռնարկատիրական հմտությունները, ճկուն է փոփոխվող շուկայական տնտեսության պայմաններում, օգնում է դիֆերսիֆիկացնել տնտեսական գործունեությունը և կարող է էական ներդրում ունենալ միջազգային առևտրի, արտահանման խթանման և նոր աշխատատեղերի ստեղծման գործում, ինչպես նաև փոքր և միջին բիզնեսի զարգացումը յուրահատուկ և արդյունավետ նախադրյալ է բնակչության կենսամակարդակի բարձրացման համար: Այդ է վկայում այն հանգամանքը, որ Եվրոպական տնտեսական գոտում աշխատատեղերի 2/3-ը ապահովում են փոքր և միջին ձեռնարկությունները՝ տալով ՀՆԱ-ի 40-60%-ը:⁷¹

⁷⁰ Нестеренко Ю.Н. Малый бизнес: тенденции и ориентиры развития в современной России. – М.: Издательский центр РГГУ, 2007, էջ 274

⁷¹ Европа. Специальный выпуск. 2015. № 13/7.

Գլուխ 2. Փոքր և միջին ձեռնարկատիրության առանձնահատկությունները և զարգացման դինամիկան ՀՀ-ում

2.1. Ձեռնարկատիրության և մասնավորեցման զարգացման էվոլյուցիան 20-րդ դարում՝ անցումային տնտեսություն ունեցող երկրներում

Հայաստանի Հանրապետությունում կայուն տնտեսական աճի ապահովման քաղաքականության համատեքստում փոքր և միջին ձեռնարկատիրության (ՓՄՁ) զարգացումն է կոչված ապահովելու երկրի տնտեսական աճի կայունությունը՝ տնտեսությանը հաղորդելով նորարարական ուղղվածություն և ճկունություն:

Փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին ուղղված պետական աջակցության ծրագրերը հիմնված են Հայաստանի Հանրապետության կառավարության որդեգրած տնտեսական քաղաքականության հիմնարար սկզբունքների վրա և նպաստում են երկրի, հատկապես նրա հեռավոր և սահմանամերձ բնակավայրերի տնտեսական զարգացմանը և անհամամասնությունների հաղթահարմանը, ինչը ներկայումս ՀՀ Կառավարության տնտեսական քաղաքականության ռազմավարական և գերակա ուղղություններից մեկն է: Այս առումով փոքր և միջին ձեռնարկատիրությունն իր առանձնահատկություններով և զարգացմամբ ընձեռած հնարավորություններով այն անկյունաքարն է, որը նշանակալի ազդեցություն ունի երկրի տնտեսական զարգացման վրա՝ ապահովելով զգալի սոցիալ-տնտեսական արդյունք և տարածքային համաչափ զարգացում:⁷²

ՀՀ-ում ձեռնարկատիրության ձևավորման և հետագա զարգացման պատմական էվոլյուցիոն հիմք կարելի է համարել սեփականաշնորհման /մասնավորեցման/ գործընթացը իր առավելություններով և թերություններով:

Մասնավորեցման բովանդակությունը սահմանելու համար, առաջին հերթին, անհրաժեշտ է ներկայացնել մասնավորեցման հասկացությունների մի ամբողջ համակարգ, որը հնարավորություն կտա համատեղելու քննարկվող գործընթացի

⁷² <http://www.mineconomy.am/arm/38/gortsaruyt.html>

ինչպես «տեխնիկական», այնպես էլ՝ տնտեսագիտական ձևակերպումները: «Տեխնիկական» սահմանման շրջանակներում մասնավորեցումը նեղ իմաստով պետական գույքի (ակտիվների) լրիվ կամ մասնակի վաճառքն (փոխանցումն) է մասնավոր հատվածին (ֆիզիկական և ոչ պետական իրավաբանական անձանց):⁷³ Այս ձևակերպումը բնութագրական է նախկին ԽՍՀՄ-ի մի շարք երկրների գաղափարախոսության համար: Իր «տեխնիկական» սահմանման շրջանակներում մասնավորեցումը լայն իմաստով ներառում է նաև պետական ընկերության կառավարման համակարգի վերափոխման գործընթացը՝ առանց գույքային իրավունքների օտարման (կապալ, վարձակալություն, օգտագործման պայմանագրեր): Եթե իր նեղ հասկացությամբ մասնավորեցման օբյեկտ է պետական գույքը (մասնավորեցման «գույքային» ձևակերպում), ապա լայն հասկացությամբ այն իր մեջ ներառում է նաև պետական կառույցների կողմից իրականացվող գործունեության այս կամ այն ոլորտները (մասնավորեցման արտադրական ձևակերպում):⁷⁴

Մասնավորեցման բնագավառի հետագա բարեփոխումները կապված են այն հանգամանքի հետ, որ մասնավորեցումը պետական ունեցվածքի վաճառքից վերափոխվում է տնտեսության կառուցվածքային վերափոխումների կարևորագույն տարրի: Եթե մասնավորեցման առաջին, «տեխնիկական» փուլը բնորոշվում էր տնտեսությունում մասնավոր հատվածի ընդլայնմամբ, սեփականատերերի խավի և բազմակացությամբ տնտեսության ձեւավորմամբ, ապա երկրորդ՝ «որակական» փուլը կարելի է բնութագրել տնտեսության կառավարման համակարգերի և տնտեսավարող սուբյեկտների գործունեության ուղղությունների սկզբունքային փոփոխություններով:

Համաձայն «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ մասնավորեցումը պետական գույքի նկատմամբ սեփականության կամ պետությանը պատկանող այլ գույքային իրավունքների փոխանցումն է մասնավորեցման սուբյեկտներին:⁷⁵

⁷³ А. Подберезкин, С. Стреляев и др. Из истории приватизации в России. М., 2014, էջ 8

⁷⁴ Приватизация: государство, гражданин и право, под. ред. проф. А. Козырина. М., 2012, էջ 13-14

⁷⁵ ՀՀ օրենքը «Պետական գույքի մասնավորեցման /սեփականաշնորհման մասին» /ընդունվել է 1997թ. դեկտեմբերի 17-ին/, հոդված 3:

Գերկաշռող մասնավոր հատված ունեցող տնտեսության ստեղծման համար գոյություն ունի երկու ուղի. պետական գույքի մասնավորեցում և նոր մասնավոր ընկերությունների ստեղծում: Երկու ուղին էլ հավասարապես կարևոր են: Նոր ստեղծվող մասնավոր ընկերությունները կարող են կարճ ժամանակահատվածում շահույթ ստանալ և լուրջ ներդրում կատարել երկրի տնտեսական աճի գործում: Սակայն պետական մեծ հատված ունեցող երկրներում մասնավոր հատվածի զարգացումն առանց պետական գույքի ապապետականացման անհնար է պատկերացնել:⁷⁶

Խոսելով մասնավորեցման մասին՝ չենք կարող չանդրադառնալ նաեւ վերջինիս նպատակներին եւ կարող ենք նշել, որ պետական գույքի մասնավորեցումը հնարավորություն է տալիս հասնելու երկու հիմնական նպատակների.

Նախ, մասնավոր տնտեսական միավորների հաստատման միջոցով տնտեսության և սոցիալ-քաղաքական կառավարման համակարգի փոփոխության: Այս նպատակի կարևոր բաղադրիչներից է գործարար ոլորտի գործունեության համար պետության պատասխանատվության վերացումը և կենտրոնացումը տնտեսական գործունեության ընդհանուր պայմանների վրա: Հստակորեն, այս խնդրի իրականացման նախապայմանը պետք է լինի համակարգված վերափոխումների ամբողջական գաղափարի մշակումը և այդ գաղափարի շուրջ պետական իշխանության բոլոր մակարդակներում միակարծիք լինելը:

Երկրորդ նպատակը ազգային տնտեսության գործունեության բարելավումն է ընկերությունների գործառնական արդյունավետության բարձրացման միջոցով, ինչը կարող է ձեռք բերվել իրական սեփականատիրոջ առկայության պարագայում, որը հետաքրքրված է ընկերության ապագայով: Այս նպատակի կարևոր տարրն է մասնավորեցված ընկերություններում ներդրումների ներգրավումը:

Այս երկու նպատակները պաշտոնապես ընդունվում են որպես հիմնական նպատակներ նախկին համայնավարական այն երկրներում, որոնք իրականացնում են սեփականության վերափոխման գործընթաց:

⁷⁶ Высоков В.В. Приватизация в России – путь: к богатству?... к банкротству? ...Ростов на Дону, 1994г., էջ 15

Բացի այս երկու հիմնական նպատակներից, առկա են նաև այլ ածանցյալ նպատակներ:

Մասնավորեցման երրորդ հնարավոր նպատակը անցման գործընթացի կայունության և անշրջելիության երաշխավորումն է: Մասնավոր հատվածի զարգացումը պետք է ոչ միայն խթաններ ստեղծի տնտեսական զարգացման համար, այլ նաև ստեղծի ընդհանուր շահերով ուժեղ խմբեր, որոնք կնպաստեն շուկայական վերափոխումների շարունակմանը: Մի կողմից պետք է երաշխավորվի անցման անշրջելիությունը և մյուս կողմից անհրաժեշտ է կայուն ճնշում գործադրել որոշում ընդունող շրջանակների վրա, որպեսզի նրանք աջակցեն վերափոխումների հետագա խորացմանը և ինստիտուտների հաստատմանն ու շուկայական հարաբերությունների կառուցմանը: Այս կապակցությամբ, առաջացել է «վերափոխումների կրիտիկական զանգվածի» գաղափարը (մասնավորեցման դեպքում), որն անցնելուց հետո ազատ շուկայական պայմաններում իշխանություններն ու հաստատություններն իրենց դրսևորում են որպես ավելի ուժեղ քան նախկին կենտրոնացված պլանային համակարգը ներկայացնող իշխանություններն ու ինստիտուտները: Հենց այդ պատճառով շեղումը վերափոխումներից թվում է անհնարին:⁷⁷

Չորրորդը ավելի կոնկրետ նպատակների խումբ է, որը կարող է բնորոշվել որպես ֆիսկալ: Այն բաղկացած է երկու տարրերից: Մասնավորեցման ներկայացվող գույքի արժեքը գերազանահատվում է, սակայն գործնականում քիչ չեն նաև հակառակ երևույթները, և այդպիսով դրա վաճառքը հնարավորություն է տալիս էականորեն ավելացնել պետական գանձարանի մուտքերը: Այս եկամտի օգտագործման ուղղություններից մեկը կարող է լինել բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը՝ անցման շրջանի տնտեսական ամենաճնշող խնդիրներից մեկը: Երկրորդը, քանի որ պետական ձեռնարկությունների մասնավորեցումը բացառում է դրանց ֆինանսավորումը պետության կողմից, ապա դրա արդյունքում ազատված միջոցները կարող են ուղղվել այլ նպատակների, օրինակ սոցիալական ոլորտի ֆինանսա-

77 Ա. Մարկուսյան, Սեփականության իրավունքի ինստիտուցիոնալ հիմքերի ձևավորման առանձնահատկությունները անցումային տնտեսությամբ երկրներում (« օրինակով»), Հայաստան, Ֆինասներ և Էկոնոմիկա, 2005թ., էջ 5-6

վորմանը: Այս նպատակը առկա է անցումային տնտեսությամբ գրեթե բոլոր երկրների քաղաքականության մեջ:⁷⁸

Հինգերորդ նպատակը կապված է լայնորեն քննարկվող սոցիալական խնդիրները մասնավորեցման միջոցով լուծելու փորձերին: Սա հատկանշական է հատկապես սոցիալական ուղղվածությամբ վերափոխումներ իրականացնող երկրներին, որոնց հիմնական խնդիրը սոցիալական արդարության հաստատումն է՝ մեծամասամբ այնպիսի մեխանիզմների կիրառման միջոցով, որոնք թույլ են տալիս ողջ հասարակության կամ գոնե դրա որոշակի խմբերի միջև բաշխել մասնավորեցված գույքը: Այս նպատակը կարող է ունենալ նաև քաղաքական երանգ, եթե կառավարման նախկին համակարգի քաղաքական հիերարխիայի ձեռքից վերցվեն տնտեսական իշխանության լծակները: Միկրոտնտեսական մակարդակում մասնավորեցումը կարող է օգտագործվել որոշ սոցիալական խնդիրների լուծման նպատակով, օրինակ ազդել մասնավորեցված գույքի գնորդի վրա, կատարելու ստանձնած պարտականությունները զբաղվածության կամ աշխատավարձի գծով:⁷⁹

Գործընթացում կարող են լինել նաև հասարակությանը չառնչվող կամ երկակի հակասություններ առաջացնող մի շարք թաքնված նպատակներ, որտեղ որոշում ընդունողների իրական նպատակները չեն համընկնում նրանց կողմից հայտարարված նպատակների հետ, օրինակ թաքցնել նոր ստեղծված քաղաքական և տնտեսական վերնախավի օգտին գույքը վերաբաշխելու նպատակը:

Սովորաբար տնտեսագիտական գրականության մեջ տարբերում են երեք չափանիշների՝ գույքի բաշխման եղանակի (համընդհանուր և անհատական մասնավորեցում), վճարման մակարդակի և հնարավոր գնորդների առկայության վրա հիմնված մասնավորեցման երեք եղանակներ՝ ընդհանուր մասնավորեցում, ուղղակի վաճառք և մասնավորեցում ղեկավարության և աշխատակիցների կողմից:⁸⁰

78 Айдинов Х. Процесс приватизации в свете модернизации экономики России / Х.Айдинов, В.Гугняк // Власть. - 2013. - N 11. - էջ.28-33:

79 Анализ процессов приватизации государственной собственности в Российской Федерации за период 1993-2003 гг. Выводы и рекомендации // Российский экономический журнал. - 2005. - N 4. - էջ.9-10:

⁸⁰ Черноуцан Е. Государство и приватизация крупных компаний в отраслях высоких технологий // Мировая экономика и международ. отношения - 2002. - N 10. - էջ.47-49:

Որպես մասնավորեցման մեթոդներ կարելի է նշել՝

- Անուղղակի (կապիտալ) մասնավորեցումը, որտեղ պետական ձեռնարկությունը վերափոխվում է բաժնետիրական ընկերության (կամ, երբեմն, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության), որից հետո բաժնետոմսերը վաճառվում են մասնավոր հատվածին: Այդ պատճառով ձեռնարկության պարտավորությունները մասնավորեցման առարկա են հանդիսանում,
- Ուղղակի մասնավորեցումը, որտեղ պետական ձեռնարկությունը լուծարման է ենթարկվում իրավաբանական անձի վերածվելուց հետո, և հետագայում դրա գույքը վաճառվում է (հիմնականում ամբողջությամբ): Այդ պատճառով ձեռնարկության ակտիվները մասնավորեցվում են, որի հիման վրա ձևականորեն նոր ընկերություն է ստեղծվում կամ ակտիվները կլանվում են արդեն իսկ գործող մասնավոր ընկերության կողմից: Այս իմաստով հատուկ թեմա է սնանկության միջոցով մասնավորեցումը, երբ անվճարունակ ընկերությունը լուծարվում է և դրա գույքի առանձին տարրեր հանվում են վաճառքի:⁸¹

Կենտրոնացված պլանային համակարգից շուկայական տնտեսությանն անցման հայեցակարգային հիմնարար դրույթներից է մասնավոր սեփականության ինստիտուտի կայացումը, որը ընդունվում է, որպես տնտեսական և իրավական հարաբերությունների հիմք: Ահա թե ինչու բոլոր երկրներն էլ իրենց շուկաների վերափոխման մասին որոշում ընդունելուց հետո անմիջապես կենտրոնանում են մասնավորեցման գործընթացի վրա:

Այսպես կոչված «փոքր» մասնավորեցումը, որը տեղի է ունենում մասնավոր հատվածի կողմից առևտրի և ծառայությունների ոլորտի ձեռքբերման միջոցով, սկսվում է գրեթե ինքնաբերաբար և դրա ընթացքը ոչ մի յուրահատուկ քննարկումների առարկա չի դառնում ոչ տնտեսական և ոչ էլ՝ քաղաքական առումներով: Այսպես տեղի ունեցավ «փոքր» մասնավորեցումը, օրինակ Լեհաստանում: Հակառակ դրան, այն երկրներում, որտեղ վերափոխումներն ուղեկցող քաղաքական միջավայրը անբարենպաստ էր, «փոքր» մասնավորեցումն առաջացրեց որոշ բանավեճեր: Պետք է հիշել, որ շատ երկրներում, հատկապես նախկին ԽՍՀՄ

⁸¹ Федорова Л.В. Понятие приватизации недвижимых объектов культурного наследия // Государство и право. - 2011. - № 7. - էջ .96-97:

հանրապետություններում, «փոքր» մասնավորեցումն, որն իր բնույթով տարերային էր, ներկայացվում էր որպես պետական ակտիվների անօրինական յուրացում:⁸²

Արդյունաբերական մեծ ընկերությունների մասնավորեցումը բոլորովին այլ կարգի բարդություններ էր ենթադրում, հատկապես երբ դրանք ունենում էին տնտեսության համար կենսական նշանակություն: Հաճախ այդպիսի ընկերությունների մասնավորեցումը ունենում էր նաև քաղաքական կարևորություն տարածաշրջանային և նույնիսկ ազգային մակարդակներում:

Այս նպատակով օգտագործված մասնավորեցման եղանակները (տեսակները) կարելի է բաժանել երեք խմբի՝

1. *Ուղղակի մասնավորեցում*. որի դեպքում ընկերության բոլոր բաժնետոմսերը վաճառվում են արտաքին ներդրողին, ինչը շատ հաճախ կատարվում է որոշակի ժամանակամիջոցի ընթացքում լրացուցիչ ներդրումներ ապահովելու պայմանով:
2. *Մասնավորեցում ընկերության աշխատակիցների կողմից*. երբ ընկերության ակտիվները տրամադրվում են աշխատակիցների կողմից ստեղծված ընկերությանը՝ մեծամասամբ երկարաժամկետ վարձակալության սկզբունքով:
3. *Հավաստագրային (վաուչերային) մասնավորեցում*. որի դեպքում ընկերության ակտիվները փոխանցվում են քաղաքացիներին՝ մասնավորեցման նպատակով ստեղծված ներդրումային հիմնադրամների միջոցով մասնավորեցվող ընկերությունների բաժնետոմսերի բաշխման եղանակով:⁸³

Ստորև, աղյուսակ 9-ի միջոցով ներկայացվում է անցումային տնտեսությամբ երկրներում մասնավորեցման գործընթացի գնահատականները երեք հիմնական բնութագրիչների միջոցով:

82 Угланов А. Приватизация по-российски. Делили по-честному, обманули почти всех // Аргументы и факты. - 2004. - Дек. (N 49). - էջ 8-9:

83 Тарасов Н. Частные пруды / Записал А.Камакин // Итоги. - 2003. - N 40. - էջ 24-25:

Աղյուսակ 9. Անցումային տնտեսությամբ երկրների մասնավորեցման գործընթացի արդյունավետության գնահատումը*

Խումբ	Երկիր	Մասնավորեցման ինդեքսն ըստ Freedom House-ի	«Մեծ» մասնավորեցման ինդեքսն ըստ EBRD-ի	«Փոքր» մասնավորեցման ինդեքսն ըստ EBRD-ի	«Մեծ» մասնավորեցման եղանակները
1	Լեհաստան	2.0	3.3	4.3	Ուղղակի
1	Չեխիա	1.75	4.0	4.3	Հավաստագրային
1	Սլովակիա	3.0	4.0	4.3	Ուղղակի
1	Հունգարիա	1.5	4.0	4.3	Ուղղակի
2	Սլովենիա	2.25	3.0	4.3	Աշխատակիցների կողմից
2	Բոսնիա- Հերցոգովինա	5.0	2.3	2.6	Հավաստագրային
2	Խորվաթիա	3.5	3.0	4.3	Աշխատակիցների կողմից
2	Ռումինիա	3.75	3.3	3.6	Աշխատակիցների կողմից
2	Բուլղարիա	3.5	3.6	3.6	Ուղղակի
2	Հարավսլավիա	5.0	1.0	3.0	Աշխատակիցների կողմից
2	Մակեդոնիա	4.0	3.0	4.0	Աշխատակիցների կողմից
2	Ալբանիա	3.75	2.3	4.0	Աշխատակիցների կողմից
3	Լիտվա	2.5	3.3	4.3	Հավաստագրային
3	Լատվիա	2.5	3.0	4.3	Ուղղակի
3	Էստոնիա	1.75	4.0	4.3	Ուղղակի
4	Ռուսաստան	3.75	3.3	4.0	Հավաստագրային
4	Ուկրաինա	4.25	3.0	3.3	Հավաստագրային
4	Բելառուս	6.0	1.0	2.0	Աշխատակիցների կողմից
4	Մոլդովա	3.5	3.0	3.3	Հավաստագրային
5	Հայաստան	3.25	3.0	3.6	Ուղղակի
5	Ադրբեջան	4.75	2.0	3.3	Ուղղակի
5	Վրաստան	3.25	3.3	4.0	Հավաստագրային
6	Ղազախստան	4.25	3.0	4.0	Ուղղակի
6	Ղրղզստան	4.5	3.0	4.0	Հավաստագրային
6	Տաջիկստան	5.75	2.3	3.6	Աշխատակիցների կողմից
6	Թուրքմենստան	6.75	1.0	2.0	Աշխատակիցների կողմից
6	Ուզբեկստան	6.0	2.6	3.0	Աշխատակիցների կողմից

*- Աղբյուրը՝ Report of the Economic Forum on Transformation 2007

Մասնավորեցման եղանակի ընտրության հարցում որոշիչ գործոնը քաղաքական պայմաններն են: Հավաքական տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մասնավորեցման գործընթացի ձեռքբերումների և մասնավորեցումն իրականացնելու եղանակի ընտրության միջև գոյություն ունի հստակ կապ: Առավելագույն ձեռքբերումներ ունեցող երկրների մեծամասնությունում մասնավորեցման ընտրված եղանակը ուղղակի վաճառքն է եղել: Մեծ ընկերությունները ուղղակի վաճառքի միջոցով տրամադրվել են ռազմավարական ներդրողներին (հիմնականում օտարերկրյա): Փոքր ընկերությունները հիմնականում մասնավորեցվել են ներքին ներդրողներին:

Եվ պատահական չէ, որ իրենց ձեռքբերումներով վերջին չորս ցուցանիշներն ունեցող երկրները որպես սեփականության ձևի փոփոխության հիմնական եղանակ ընտրել էին վաճառքը աշխատակիցներին: Առավել ևս պատահական չէ, որ Սլովենիան, ըստ ցուցանիշների մեծամասնության, առաջատարների թվում է, չնայած այն հանգամանքին, որ անցման շրջանի սկզբում առկա էին որոշ խոչընդոտներ: Ըստ ՎՋԵԲ «մեծ» մասնավորեցումների ցուցանիշի՝ Սլովենիան դասակարգվում է այնպիսի երկրների շարքում ինչպիսիք են Լատվիան, Մոլդովան, Հայաստանը և Ուկրաինան:⁸⁴

Մասնավորեցման եղանակի ընտրությունը մեծապես թելադրվում է աշխատակիցների պահանջները բավարարելու ցանկությունից կամ անհրաժեշտությունից, և որոշ դեպքերում էլ՝ ելնելով պետական ձեռնարկությունների տնօրենների պահանջից, որոնք իրենց երկրներում ունեին քաղաքական ուժեղ դիրքեր: Երկրորդ՝ այլընտրանքային մոտեցում այն դեպքերում, երբ ընտրության հնարավորությունները սահմանափակ են, օրինակ քաղաքական պատճառներով հավաստագրային (վաուչերային) մասնավորեցումը, որը չափից ավելի մեծ արտոնություններ է տալիս աշխատակիցներին: Այս եղանակն ընտրվեց նախկին Խորհրդային Միության երկրների մեծամասնության կողմից:⁸⁵

Հավաստագրային (սեփականաշնորհման սերտիֆիկատների միջոցով մասնավորեցման) եղանակի ընտրությունը, մասնավորեցման գործընթացի հաջողության

⁸⁴ Сухопаров А. Приватизация: ожидания и реальность // Диалог. - 2012. - N 4. - էջ 55-57:

⁸⁵ Пчелинцев О. Приватизация против рынка // Общественные науки и современность. - 1991. - N 4. - էջ 13:

տեսանկյունից, կարծես միջանկյալ լուծում է: Սեփականաշնորհման սերտիֆիկատը նպատակային օգտագործման պետական արժեթուղթ էր և այն կարող էր օգտագործվել միայն սեփականաշնորհվող գույքի ձեռք բերման համար ըստ ներկայացնողի: Անկախ այդ սերտիֆիկատների ստացման վայրից՝ դրանք կարող էին օգտագործվել հանրապետության ամբողջ տարածքում:⁸⁶

Պետք է նշել, որ վերջնական արդյունքի տեսակետից միանշանակ պարզ է այն հանգամանքը, որ սեփականաշնորհման սերտիֆիկատի բարերար ազդեցությունը մասնավորեցման ողջ ընթացքում կայանում էր միայն այդ գործընթացի արագությանը և ինտենսիվությանը նպաստելու մեջ: Ինչ վերաբերում է սեփականատերերի լայն խավի ստեղծմանը և բնակչությանը այդ գործընթացին մասնակցության ապահովմանը, ակնհայտ է այն փաստը, որ մասնավորեցման գործընթացն ազգաբնակչության մեծ մասի շրջանում առաջ է բերել որոշակի հիասթափություն և ակնկալիքների ու մեծ սպասումների չիրականացում: Բնակչությանը բաշխված սեփականաշնորհման սերտիֆիկատները չծառայեցին դրանց ճնշող մեծամասնության համար որպես մասնավորեցմանը մասնակցելու նպատակային օգտագործման արժեթղթեր: Սեփականաշնորհման սերտիֆիկատների օգտագործման վերաբերյալ կատարված հետազոտություններից պարզվել է, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների մոտ 90%-ը վաճառել են այդ սերտիֆիկատները կանխիկ փող ձեռք բերելու և կենցաղային խնդիրները լուծելու համար: Դրանով իսկ սեփականաշնորհման սերտիֆիկատները կենտրոնանալով առանձին խումբ մարդկանց և տնտեսավարող սուբյեկտների մոտ՝ դարձան սպեկուլյացիայի և առք ու վաճառքի առարկա:

Մեկ այլ խնդիր է մասնավորեցման ազդեցությունը ընկերության կառավարման որակի և տնտեսական դրության վրա: Մեծ թվով հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ ընդհանուր առմամբ մասնավորեցումը դրական ազդեցություն է ունենում ընկերությունների գործունեության և արդյունավետության վրա: Այդ ազդեցությունը շատ ավելի մեծ է այն երկրներում, որտեղ շուկայական

⁸⁶ Приватизация. Вопросы и ответы. - М., 2001., էջ 58:

ինստիտուտներն ավելի լավ են զարգացած և որտեղ պետության մասնակցությունը տնտեսության մեջ խստորեն սահմանափակված է:⁸⁷

Մասնավորեցման գործընթացի հաջողությունն ապահովող գործոնների թվում են մասնավորեցված ընկերությունների մենեջմենթի որակը և սեփականատերերի շահերի պաշտպանության մեխանիզմների արդյունավետությունը: Սրանով թերևս կարելի է բացատրել հաջողություններն այն երկրներում, որոնք ընտրել էին հիմնականում վաճառքի ուղղակի եղանակը, քանի որ այդ պարագայում սեփականատիրոջ իրավունքների պաշտպանությունն առավելագույնս դյուրին է դառնում, եթե հստակորեն սահմանված են մասնավոր սեփականության սկզբունքները:

Միկրո մակարդակում իրականացված հետազոտություններ միանշանակ փաստարկներ չեն ներկայացնում ընկերությունների տնտեսական դրության՝ մասնավորեցման եղանակից կախվածության վերաբերյալ: Հավանաբար դա տեղի է ունենում այն պատճառով, որ ընկերության գործունեության արդյունավետությունը ավելի մեծ չափով կախված է ինստիտուցիոնալ և մակրոտնտեսական միջավայրից, որտեղ ընկերությունը գործում է, քան այն եղանակներից, որոնց միջոցով այն մասնավորեցվել է, թեև ինչպես նկատվեց վերևում, մասնավորեցման հիմնական եղանակի ընտրությունը մեծապես կախված է միջավայրից: Որոշ դեպքերում տեղի ունի նաեւ հակադարձ կախվածություն. մասնավորեցման հիմնական ուղղվածության ընտրությունը կարող է որոշիչ լինել երկրի տնտեսական միջավայրի ձևավորման գործընթացում:⁸⁸

Մասնավորեցման ցանկացած ծրագրի դրական ազդեցությունը, ինչպես նաև մասնավորեցման հիմնախնդիրների բարեհաջող լուծումը հասանելի են միայն հետևյալ միջոցների ամբողջական համակարգում.

- քաղաքական կայունացում,
- ֆինանսական կայունացում,
- գների ազատականացում,

⁸⁷ Приватизация: Глобальные тенденции и национальные особенности: сб. ст. / под ред. Виноградова В.А. - М.: Наука, 2006, էջ 522-525

⁸⁸ Кудров В.М. Актуальные проблемы приватизации в России // Европа и Россия: Опыт экон. преобразований. - М., 2003., էջ 185

- արտադրության ապամենաշնորհային միջավայրի ստեղծում,
- ֆինանսական շուկայի զարգացում,
- կառուցվածքային քաղաքականության զարգացում,
- ապրանքների և կապիտալների ներմուծման և արտահանման ապահովում:

Ձեռնարկությունների գործունեության արդյունավետությունը կախված է ինչպես տնտեսավարող սուբյեկտների ներքին շահագրգռվածությունից, այնպես էլ արտաքին գործոններից: Արևմտյան երկրներում տնտեսավարման արդյունավետությունը (ինչպես պետական այնպես էլ մասնավոր հատվածներում) մեծ կախվածության մեջ է գտնվում մի կողմից արտաքին շահադրդումից, այսինքն, ապրանքների, կապիտալի և աշխատուժի շուկաներից, և մյուս կողմից, ձեռնարկության ներքին շահադրդումից, այսինքն, արտադրության միջոցների սեփականատերերի կողմից թելադրվող գործոններից:

Պետական ձեռնարկության առանձնահատկությունը կայանում է նրանում, որ տնտեսական շահադրդման ուժը (ինչպես շուկայի այնպես էլ սեփականատերերի կողմից) ինչպես տնտեսականորեն, այնպես էլ գործնականում, ավելի փոքր է, քան մասնավոր հատվածում: Շուկայի կողմից տնտեսական շահադրդման նման ազդեցությունը պետական ընկերությունների վրա բացատրվում է առաջին հերթին նրանով, որ այդ ձեռնարկություններից շատերը մենաշնորհներ են կամ զգալի մենաշնորհային դիրքեր են գրավում:

Առանձնահատուկ կարգավիճակ ունեն բյուջետային հիմնակները, որոնք, որպես կանոն, իրենց արտադրանքը շուկա չեն հանում, այլ սպասարկում են համապատասխան պետական կազմակերպությունների կարիքները: Իրենց արտադրանքի գնորդների համար (ավելի ճիշտ սպառողների հանձնումը կամ ծառայության մատուցումը նույն նախարարություններում, գերատեսչություններում պարտադիր չէ, որ կատարվի վաճառքի-գնման միջոցով) այս ձեռնարկությունները հանդես են գալիս որպես մենաշնորհներ:⁸⁹

⁸⁹ Лапыгина В.В. Методика определения стоимости приватизируемого предприятия // Финансы. - 1994. - № 9. - էջ 12-14:


Այսպիսով խոսելով մասնավորեցման՝ որպես փոքր և միջին ձեռնարկատիրության հետագա ձևավորման նախապայմանի՝ ներկայացնենք որոշ վիճակագրական տվյալներ ՀՀ-ում ընթացող մասնավորեցման գործընթացի վերաբերյալ: 2012թ. հունվարի 1-ի դրությամբ՝ ՀՀ-ում մասնավորեցվել են ընդամենը 1860 ձեռնարկություն: Ըստ ձեռնարկությունների մասնավորեցման ձևերի՝ դրանք բաշխվել են հետևյալ կերպ՝

Աղյուսակ 10. Մասնավորեցման արդյունքներն ըստ ձեռնարկությունների մասնավորեցման ձևերի (առ 01.01.2012թ.)

Ձեռնարկությունների (ընկերությունների) մասնավորեցման ձևը	Ընդամենը՝	այդ թվում՝ 2003թ.
1. Ուղղակի վաճառք	541	104
<i>այդ թվում՝ վարձակալին</i>	207	4
2. Մրցույթ	133	13
3. Աճուրդ	100	6
<i>այդ թվում՝ լուսային աճուրդ</i>	62	0
4. Պետ. բաժնետոմսերի ազատ բաժանորդագրություն	1085	1
5. Մասնագիտացված շուկաներում պետական բաժնետոմսերի վաճառք	1	0
6. Նոր բաժնետոմսերի թողարկում	0	0
<i>Ընդամենը՝</i>	1860	124

Փաստորեն վերոնշյալ աղյուսակից կարելի է նկատել, որ ընդհանուր առմամբ ՀՀ-ում մասնավորեցման ձևերից գերակշռում է պետական բաժնետոմսերի ազատ բաժանորդագրությունը: Տոկոսային հարաբերակցությամբ կունենանք հետևյալ պատկերը (նախօրոք նկատի ունենալով, որ մասնագիտացված շուկաներում պետական բաժնետոմսերի վաճառքի եւ նոր բաժնետոմսերի թողարկման տեսակարար կշիռները ընդհանուրի մեջ = 0%)՝

Գծանկար 1. Մասնավորեցման ձևերի տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ



Փոքր և միջին ձեռնարկատիրության աստիճանական զարգացումը ՀՀ-ում դրսևորվեց որպես մասնավորեցմանը զուգահեռ իրականացվող գործընթաց, որի դերը կարևորվեց երկրի տնտեսության զարգացման, նոր աշխատատեղերի ստեղծման, բնակչության կենսամակարդակի բարձրացման, հասարակության միջին խավի ձևավորման, երկրում սոցիալական և քաղաքական կայունության ապահովման գործում: ՀՀ Կառավարությունը շարունակական քայլեր էր ձեռնարկում դեռևս իր ձևավորման նախասկզբնական փուլում գտնվող ՓՄՁ-ին պետական աջակցության և դրա հետագա զարգացման ուղղությամբ:

Այսպես՝ 2000թ. դեկտեմբերի 5-ին ՀՀ ԱԺ կողմից ընդունվել է «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքը, որն առաջին անգամ սահմանեց ՀՀ-ում փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտների չափորոշիչներն ու փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության հիմնական ուղղությունները:⁹⁰ ՀՀ փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտների չափորոշիչները Եվրամիության կողմից սահմանված փոքր և միջին ձեռնարկատիրության չափորոշիչներին համապատասխանեցնելու նպատակով մշակվել և 2010թ. հոկտեմբերի 5-ին ՀՀ ԱԺ կողմից ընդունվել է «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքը:

⁹⁰ ՀՀ օրենքը «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին»՝ ընդունված է 2000թ. դեկտեմբերի 5-ին:

2001 թվականից ի վեր Հայաստանի Հանրապետությունում մշակվում և իրականացվում են փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության տարեկան ծրագրեր, որոնք նպատակաուղղված են ապահովելու «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով ամրագրված փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի զարգացումը: ՀՀ-ում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման քաղաքականության (ռազմավարության), ինչպես նաև փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի զարգացման ու պետական աջակցության տարեկան ծրագրերի մշակման իրավասությունը վերապահված է ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը, իսկ դրանք իրականացնող հիմնական կառույց է հանդիսանում «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամը (Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ), որը հիմնադրվել է ՀՀ կառավարության 2002թ. մարտի 19-ի N282 որոշմամբ՝ փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության 2002թ. ծրագրի շրջանակներում որպես ծրագրային միջոցառում:⁹¹

Հայաստանի Հանրապետությունում փոքր և միջին ձեռնարկատիրության աջակցության ժամանակակից ենթակառուցվածքները և գործուն մեխանիզմներն անհրաժեշտ նախապայմաններ են ստեղծել փոքր և միջին ձեռնարկատիրության հեռանկարային զարգացման համար՝ ուղղված գիտատար և նորարարական արտադրությունների աջակցմանը, տեխնոլոգիաների փոխանցման համար նպաստավոր պայմանների ձևավորմանն ու փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտների արտաքին տնտեսական գործունեության ընդլայնմանը:

Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ռազմավարության հիմնական նպատակն է՝ ՀՀ տնտեսական, սոցիալական և քաղաքական զարգացման գործում փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի ներուժի լիարժեք օգտագործումը և նրա դերի բարձրացումը, կայուն տնտեսական աճի ապահովումը և բնակչության կենսամակարդակի բարձրացումը: Այս առումով ՓՄՁ-ն իր առանձնահատկություններով և զարգացմամբ ընձեռած հնարավորություններով այն անկյունաքարն է, որը նշանակալի ազդեցություն ունի երկրի տնտեսական զարգացման վրա՝ ապահովելով զգալի սոցիալ-տնտեսական արդյունք և տարածքա-

⁹¹ <http://www.mineconomy.am/arm/38/gortsaruyt.html>

յին համաչափ զարգացում: Հայաստանի Հանրապետությունում կայուն տնտեսական աճի ապահովման քաղաքականության համատեքստում ՓՄՁ-ի զարգացումն է կոչված ապահովելու երկրի տնտեսական աճի կայունությունը՝ տնտեսությանը հաղորդելով նորարարական ուղղվածություն և ճկունություն:⁹²

ՀՀ փոքր և միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության 2011 թվականի ծրագրի մշակման և իրականացման հիմքը «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքն է:

Ծրագրի մշակման համար հիմք են հանդիսացել նաև՝

1) ՀՀ Կառավարության 2008 թվականի ապրիլի 28-ի N 380-Ա որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիրը.

2) Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման քաղաքականության և ռազմավարության հիմնադրույթները (Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի օգոստոսի 3-ի նիստի N 32 արձանագրության 3-րդ կետ).

3) Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N 1207-Ն որոշմամբ հաստատված՝ Կայուն զարգացման ծրագիրը.

4) Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» N 1523-Ն որոշումը.

5) Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 21-ի N 54-Ն որոշմամբ հաստատված՝ Փոքր և միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության 2010 թվականի ծրագիրը.

6) ՀՀ Կառավարության 2008 թվականի հուլիսի 24-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008-2012 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 878-Ն որոշումը:⁹³

⁹² Փոքր և միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության 2010թ. ծրագիր /ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 21-ի N 54 - Ն որոշման:

⁹³ Փոքր և միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության 2011թ. ծրագիր /ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 13-ի N 80 - Ն որոշման:

2011 թ-ին Հայաստանի Փոքր և Միջին Ձեռնարկատիրության Ջարգացման Ազգային կետրոնը (ՓՄՁ ՋԱԿ) մշակեց ՓՄՁ զարգացման համալիր ռազմավարություն, որը սկսեց իրագործվել վերջին երկու տարիների ընթացքում: Ռազմավարությունը ներառում էր նաև կանանց ձեռներեցությանը վերաբերող մաս: Նախատեսված էր, որ վերջինս պետք է լրամշակվեր և դառնար ՓՄՁ զարգացման ամբողջական ռազմավարության հարակից դրույթ: Ասիական Ջարգացման Բանկի (ԱԶԲ) “Կանանց ձեռներեցության աջակցման ոլորտի զարգացման ծրագրի” (RRP ARM 45230) օժանդակությամբ 2013 թ-ին սկսեց մշակվել կանանց ձեռներեցության զարգացման առավել համապարփակ ռազմավարություն:⁹⁴ Այդ ծրագրի վերջնական նպատակն է մեծացնել կանանց մասնակցության բաժնեմասը Հայաստանի տնտեսության զարգացման գործում: Տնտեսության մեջ կանանց ավելի մեծ մասնակցությունը մեծ դերակատարություն կունենա գալիք սերունդների համար, ինչպես նաև Հայաստանում կապահովի զարգացման հավասար պայմաններ կանանց և տղամարդկանց համար: ՓՄՁ-ների՝ որպես Հայաստանի տնտեսության հիմնասյուն, ձևավորման հարցում շատ կարևոր գործոն կլինի ձեռնարկատիրական ոլորտ ավելի շատ կանանց ներգրավումը՝ որպես որակավորված աշխատակիցներ կամ ձեռներեցներ:

2014 թվականի ապրիլից Գերմանիայի Միջազգային Համագործակցության կազմակերպության աջակցությամբ նախաձեռնվեց ՓՄՁ նոր ռազմավարության մշակման գործընթացը: Ռազմավարության առանձին բաժինների վրա աշխատեցին տեղական և միջազգային փորձագետներ՝ ներգրավելով գործարարների և քաղաքական որոշումներ կայացնողների, ոլորտին աջակից տեղական և միջազգային կազմակերպությունների: Եթե նախորդ ռազմավարությունը ավելի շատ կենտրոնացած էր ՓՄՁ- ների քանակական աճի և ռեսուրսների հասանելիության վրա, ապա առաջիկա տարիներին շեշտը դրվելու է գիտելիքի, որակի և մրցունակության վրա:⁹⁵

⁹⁴ <http://www.smednc.am/files/pdfs/attachments/original/4a5020242d.pdf>

⁹⁵ <http://www.rdfund.org/sites/default/files/SME%20strategy%202015%20-%202017.pdf>

2.2. Փոքր և միջին ձեռնարկատիրությունը բնութագրող հիմնական ցուցանիշների վերլուծությունը ՀՀ-ում

Ժամանակակից պայմաններում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման անհրաժեշտությունը ՀՀ տնտեսության գլխավոր հրամայականներից մեկն է: Այն հանդիսանում է շուկայական հարաբերությունների արմատավորման և տնտեսական առաջընթացի հիմնական երաշխիք:

Հայաստանում 2001թ. ի վեր մշակվում և իրականացվում են ՓՄՁ պետական աջակցության տարեկան ծրագրեր, որոնք նպատակաուղղված են իրականացնելու «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով ամրագրված ՓՄՁ ոլորտի պետական աջակցության հիմնական ուղղությունները: Այսպես՝ Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրության վերաբերյալ միասնական տեսքով վիճակագրության ամփոփման և վերլուծություն առաջին փորձը հանդիսանում է Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից «ՓՄՁ ոլորտը Հայաստանում 2003-2004թթ.», «ՓՄՁ ոլորտը Հայաստանում 2004-2005թթ.», «ՓՄՁ ոլորտը Հայաստանում 2005-2006թթ.», «ՓՄՁ ոլորտը Հայաստանում 2007-2009թթ.», «ՓՄՁ ոլորտը Հայաստանում 2010-2012թթ.» տարեգրքերի և «ՓՄՁ զարգացման 2016-2018թթ. ռազմավարությունը» հրատարակությունը:⁹⁶

Հայաստանում ՓՄՁ ոլորտի նկարագրման և ՀՀ տնտեսությունում դրա ունեցած դերը ամփոփ ձևով ներկայացնելու համար առանձնացնենք հետևյալ հիմնարար ուղղությունները.

1. Համախառն ներքին արդյունքում (ՀՆԱ) ՓՄՁ ոլորտի մասնակցությունը,
2. ՓՄՁ սուբյեկտների թվաքանակը,
3. Զբաղվածությունը ՓՄՁ սուբյեկտներում,
4. ՓՄՁ սուբյեկտների մասնակցությունը արտաքին առևտրում,
5. Օտարերկրյա ներդրումները ՓՄՁ սուբյեկտներում,
6. ՓՄՁ սուբյեկտների կողմից վճարված հարկերը,
7. ՓՄՁ զարգացման ինդեքսը:

⁹⁶ http://www.smednc.am/am/content/sme_state_support/

1. ՀՆԱ-ում ՓՄՁ ոլորտի մասնակցությունը: Երկրի տնտեսական զարգացման մակարդակը բնութագրող կարևորագույն ցուցանիշի՝ համախառն ներքին արդյունքի մակարդակը 2013 թվականին վերականգնվեց: 2013 թվականին ծառայությունների իրական աճը կազմել է 5.6 տոկոս՝ ապահովելով տնտեսական աճի 2.2 տոկոսային կետը, գյուղատնտեսության իրական աճը կազմել է 7.2 տոկոս՝ ավահովելով՝ տնտեսական աճի 1.4 տոկոսային կետը, արդյունաբերությունն աճել է 5.4 տոկոսով՝ 0.9 տոկոսային կետով դրական նպաստում ունենալով տնտեսական աճին, իսկ շինարարությունը նվազել է 10.8 տոկոսով՝ 1.3 տոկոսային կետով բացասական նպաստում ունենալով տնտեսական աճին: 2014 թվականին ներքին տնտեսական զարգացման միտումները և համաշխարհային տնտեսությունում աճի տեմպերի դանդաղեցման վերաբերյալ կանխատեսումները հիմք են հանդիսացել 2014 թվականին 3.3% տնտեսական աճի տեմպի կանխատեսման համար: 2015 թվականի համար իրական ՀՆԱ-ի աճը կանխատեսվում էր ավելի բարձր 2014 թվականի համեմատությամբ՝ 4.1 տոկոսի չափով, որին հիմնականում պետք է նպաստեին ծառայությունների, գյուղատնտեսության և արդյունաբերության ճյուղերի աճերը: Աճի կանխատեսումը հիմնված էր նաև արտահանման հնարավորությունների ընդլայնման, գործարար միջավայրի բարելավման, մասնավոր և օտարերկրյա ներդրումների ներգրավման ենթադրությունների վրա:⁹⁷

Համախառն ներքին արդյունքի արտադրության ծավալն ընթացիկ գներով ՀՀ-ում 2011թ.-ին կազմել է 3817.3 մլրդ ՀՀ դրամ, 2010թ.-ի 3501.6 մլրդ ՀՀ դրամի, 2009թ.-ի 3165.5 մլրդ ՀՀ դրամի, 2008թ. 3646.1 մլրդ ՀՀ դրամի և 2007թ. 3149.3 մլրդ ՀՀ դրամի դիմաց: ՀՆԱ իրական ծավալի ինդեքսը 2011թ. կազմել է 104.6%, 2010թ. 102.1%-ի, 2009թ. 85.6%-ի, 2008թ. 106.8%-ի և 2007թ. 113.7%-ի դիմաց:

Հայաստանի ՀՆԱ-ի ծավալը 2015 թ.-ին կազմել է 5047.4 մլրդ դրամ կամ շուրջ 10,56 մլրդ դոլար (2015 թ.-ին գրանցված դոլարի փոխարժեքի դեպքում՝ 477,92 դրամ): Հարկ է նշել, որ նախորդ տարին երրորդն էր, երբ Հայաստանին չհաջողվեց հասնել պետբյուջեով նախատեսված աճի ցուցանիշին, մասնավորապես, 2013 թ.-ին ՀՆԱ-ի աճը 3,3 տոկոսի էր՝ բյուջեում ամրագրված 6,2 տոկոսի դեպքում, 2014 թ.-ին՝ 3,5 տոկոս՝ 5,2 տոկոսի փոխարեն:

⁹⁷ Հայաստանի Հանրապետության 2015թ. պետական բյուջեի նախագծի ամփոփ նկարագիր: Երևան 2016, էջ 3:

ՀՀ ԱՎԾ-ի տվյալներով՝ ՀՆԱ-ի ծավալը 2014 թ.-ի չորրորդ եռամսյակում կազմել է 1 547 մլրդ դրամ՝ 2014 թ.-ի նույն ժամանակահատվածի համեմատ ավելանալով 1,9 տոկոսով: Միաժամանակ Հայաստանի ՀՆԱ-ի աճն առաջին եռամսյակում կազմել է 2,5 տոկոս (873,1 մլրդ դրամ), երկրորդ եռամսյակում՝ 4,5 տոկոս (1 110,1 մլրդ դրամ), երրորդ եռամսյակում՝ 3,2 տոկոս (1 517 մլրդ դրամ):

Հայաստանի տնտեսության աճը 2015 թ.-ին, հիմնականում, պայմանավորված է գյուղատնտեսական և անտառային տնտեսության և ձկնորսության ոլորտներում գրանցված 11,4 տոկոսանոց աճով, ինչպես նաև էներգետիկայի ոլորտում գրանցված 6,3 տոկոսանոց աճով:

Բացի այդ, ՀՆԱ-ն բնակչության հաշվով 2015 թ.-ին կազմել է 1 679 920 դրամ (3 515 դոլար)՝ 1 501 667 դրամի համեմատ (3 610 դոլար):⁹⁸

Որպեսզի ըմբռնենք ՓՄՁ-ի դերն ու նշանակությունը տնտեսության մեջ, հարկավոր է պարզել, թե ՀՆԱ-ի որ մասն է ապահովում ՓՄՁ ոլորտը:

Աղյուսակ 11.

2013-2015թթ. ՀՆԱ-ի կառուցվածքը ըստ ՓՄՁ սուբյեկտների և խոշոր կազմակերպությունների /%/ 2015թ.

Ճյուղ	2013թ.		2014թ.		2015թ.	
	ՓՄՁ	խոշոր	ՓՄՁ	խոշոր	ՓՄՁ	խոշոր
Արդյունաբերություն	28.9	71.1	30.6	69.4	31.0	69.0
Շինարարություն	51.4	48.6	50.1	48.9	49.8	50.2
Առևտուր	49.8	50.2	51.1	48.9	51.3	48.7
Տրանսպորտ և կապ	28.8	71.2	28.7	71.3	28.9	71.1
Ծառայություններ	45.2	54.8	44.6	55.4	45.8	54.2
Ընդամենը՝ ՀՆԱ	42.8	57.2	42.5	57.5	42.7	57.3


Աղյուսակից պարզ է դառնում, որ ՓՄՁ սուբյեկտների տեսակարար կշիռը տարեց տարի ավելանում է հատկապես արդյունաբերության, առևտրի և ծառայությունների ոլորտում, ինչը վկայում է այն մասին, որ ՓՄՁ ոլորտը զարգանում է՝ ավելացնելով իր տեսակարար կշիռը ՀՆԱ մեջ: Սա խոսում է այն մասին, որ ավելի բարենպաստ դաշտ է ստղծվում փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման

⁹⁸ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայքէջ. www.armstat.am, <http://newsarmenia.am/am/news/economy/-Hayastani-tntesutyuny-2015-t-in-/>

համար, որոնք դիտարկվում են որպես տնտեսության հիմնական շարժիչ ուժ: Աղյուսակում ներկայացված է տնտեսության ՀՆԱ-ի կառուցվածքն ըստ ՓՄՁ սուբյեկտների և խոշոր կազմակերպությունների: Գնահատականում հաշվի չի առնվում գյուղատնտեսության և զուտ հարկերի բաշխվածքն ըստ ՓՄՁ սուբյեկտների և խոշոր կազմակերպությունների, պայմանավորված նշված ոլորտներում ճշգրիտ գնահատականների բացակայությամբ: Ընդ որում, եթե հարկերի դեպքում կարելի է ընդունել այն մոտեցումը, որ դրանք բաշխվում են ավելացված արժեքի բաշխմանը համապատասխան /որի դեպքում ստացված տոկոսները փաստորեն չեն փոխվում/, ապա գյուղատնտեսության դեպքում գնահատման որևէ մոտավոր չափանիշ չկա, չնայած ակնհայտ է, որ այն առավելապես ուղղված պետք է լինի ՓՄՁ սուբյեկտներին:

Անդրադառնանք ՀՆԱ-ի մեջ ՓՄՁ մասնաբաժնի ձևավորման գործում ՓՄՁ տարբեր բաղադրիչների /գերփոքր, փոքր, միջին/ դերակատարություններին:

Գծանկար 2. Գերփոքր, փոքր և միջին կազմակերպությունների տեսակարար կշիռների դինամիկան ՀՆԱ-ի մեջ 2007-2015թթ.*




* Աղբյուրը՝ Փոքր և միջին ձեռնարկատիրությունը բնութագրող հիմնական ցուցանիշները Հայաստանում 2007-2015թթ. http://www.smednc.am/am/content/sme_state_support/

Գծապատկեր 2-ից ակնհայտ է դառնում, որ 2007-2015թթ. ՓՄՁ ավելացված արժեքի ստեղծման մեջ գերակշռող դեր ունեցել են փոքր կազմակերպությունները, միջին կազմակերպությունների տեսակարար կշիռը գրեթե մնացել է անփոփոխ, իսկ գերփոքր կազմակերպությունների մոտ նվազման միտում է նկատվում. վերջիններիս տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ ՓՄՁ մասնաբաժնի ձևավորման գործում վերոնշյալ ժամանակահատվածում նվազել է 1.2 տոկոսային կետով:


Գծանկար 3.

Գերփոքր, փոքր և միջին կազմակերպությունների տեսակարար կշիռն ըստ ՀՆԱ-ի արտադրության տնտեսության տարբեր ճյուղերում 2013-2015թթ.*



* Աղբյուրը՝ Փոքր և միջին ձեռնարկատիրությունը բնութագրող հիմնական ցուցանիշները Հայաստանում 2007-2015թթ. http://www.smednc.am/am/content/sme_state_support/

2016թ. հունվարի 1-ի դրությամբ ՓՄՁ սուբյեկտների բաշխվածն ըստ մարզերի կարելի է տեսնել գծանկար 4-ում:



Ինչպես երևում է 4-րդ գծանկարից՝ ՓՄՁ սուբյեկտների գրեթե կեսը՝ 46.5%, կենտրոնացված են Երևանում:

2. ՓՄՁ սուբյեկտների թվաքանակը: 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ Հայաստանում գործունեություն է իրականացրել 76,885 ՓՄՁ, ինչը կազմում է ակտիվ գործունեություն իրականացնող տնտեսվարողների ընդհանուր թվաքանակի 98.3%-ը: 2015թ. ընթացքում ՓՄՁ-ների քանակը 2014թ.-ի համեմատ՝ ավելացել է մոտ 12.5%-ով: 2015թ. ՓՄՁ-ների 92% եղել է գերփոքր կազմակերպություն, իսկ միջինների տեսակարար կշիռը չի գերազանցել 1.2%: 2012-2015թթ. ՓՄՁ-ների ընդհանուր քանակի աճը 95%-ով պայմանավորված է եղել գերփոքրերի աճով, իսկ միջինների քանակը 2015-ին 2014-ի համեմատ նվազել է 4-ով:

2015թ. ՓՄՁ-ների 57.2 % ներգրավված է մեծածախ և մանրածախ առևտրում, ընդ որում՝ այդ ձեռնարկությունների 94.5%-ը գերփոքր սուբյեկտներ են: Մշակող արդյունաբերության մեջ 2015թ. եղել է 6,118 ՓՄՁ կամ ընդհանուր քանակի 8.3%-ը: 2015թ. արդյունքներով մշակող արդյունաբերության ՓՄՁ-ների շուրջ 40%-ը ներգրավված է պարենային, իսկ 60%-ը՝ ոչ պարենային արտադրության մեջ:

⁹⁹ Տես՝ ՓՄՁ ոլորտը Հայաստանում 2013-2015թթ. Տեղեկագիր, 2016թ. http://www.smednc.am/am/content/sme_state_support/

2012թ. ՓՄՁ-ներում զբաղվածների թիվը կազմել է 290.388 մարդ՝ գերազանցելով 2014թ. նույն ցուցանիշը 31,769-ով կամ 12.3%-ով:¹⁰⁰ Տեղեկատվության ոչ պաշտոնական աղբյուրների համաձայն՝ 2015թ. ՓՄՁ-ներում զբաղվածների թիվը կազմել է շուրջ 300.000 մարդ:

ՓՄՁ-ներում զբաղվածների 61 %-ը կենտրոնացված է Երևանում, մարզերից առաջատարներն են Կոտայքը՝ 7 %, Լոռին և Շիրակը՝ 6% յուրաքանչյուրում, ամենացածր ցուցանիշները Վայոց Ձորի, Տավուշի և Արագածոտնի մարզերում են: 2015թ. ընթացքում ՓՄՁ-ների ընդհանուր շրջանառությունը կազմել 1,554,679 մլն դրամ՝ գերազանցելով 2014թ. նույն ցուցանիշը 237,471 մլն դրամով կամ 18%-ով: 2015թ. ՓՄՁ-ները բոլոր տեսակների հարկերը, տուրքերը և պարտադիր վճարները ներառյալ՝ ՀՀ պետական բյուջե են վճարել 234,877 մլն դրամ՝ գերազանցելով 2014 նույն ցուցանիշը 37,037 մլն դրամով կամ 18%-ով:

Իրականացված ուսումնասիրության և կատարված փորձագիտական գնահատման համաձայն ՀՀ օրենսդրությանը համապատասխան տնտեսական գործունեության իրավունք ունեցող առևտրային իրավաբանական անձանց շուրջ 97.4%-ը¹⁰¹ և ԱՁ-ների 98%¹⁰²-ը ՓՄՁ սուբյեկտներ են:

Ուսումնասիրելով Ազգային վիճակագրության ծառայության կողմից ՓՄՁ-ների քանակի մասին հրապարակված վերջին տարիների ցուցանիշները, կարող ենք եզրակացնել, որ դրանց թիվը մեր երկրում ավելացել է: ՓՄՁ-ների փակումը նորմալ երևույթ է, որը առկա է բազմաթիվ երկրներում, և ունի իր օբյեկտիվ պատճառները: Ներկայացնենք վերջին երեք տարվա ցուցանիշները: 2013թվ. Հայաստանում բացվել է 15,501 և փակվել 11,167 ՓՄՁ: Դրական տարբերությունը կազմում է 4334: Մեկ տարի անց՝ 2014 թվ. դրական հարաբերակցությունը ավելացավ: Մասնավորապես, այդ տարում բացվեց 16,967 և լուծարվեց 9454 ՓՄՁ: Այս հարաբերակցությունում ավելացած ՓՄՁ-ների թիվը 7513 էր: 2015թ. առաջին ինը ամիսներին մեր երկրում բացվեց 13,131 և փակվեց 7639 ՓՄՁ: Ընդհանուր առմամբ վերջին հինգ տարիների հարաբերակցությամբ, ՓՄՁ-ները ավելացել են 24,636-ով:¹⁰³

¹⁰⁰ <http://armenpress.am/arm/news/752672/>


¹⁰¹ Տվյալ ցուցանիշը հաշվարկվել է վիճակագրական բացառման մեթոդի կիրառմամբ՝ հաշվի առնելով խոշոր առևտրային կազմակերպությունների քանակը:

¹⁰² Տվյալ ցուցանիշը հաշվարկվել է ընտրանքային դիտարկման վիճակագրական մեթոդի կիրառմամբ:

¹⁰³ <http://blog.mediamall.am/?id=57928>

3. Ջրաղվածությունը ՓՄՁ սուբյեկտներում: Նշենք, որ 2007թ. ՓՄՁ սուբյեկտներում զբաղվածների տեսակարար կշիռը տնտեսության մեջ զբաղված տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակում եղել է 40.7%, 2008թ.` 42.1%, 2009թ` 42.2%, 2010թ` 42.7%, 2011թ.` 42.9%, 2012թ.` 41.6%, 2013թ.` 42.2%, 2014թ.` 42.9%, 2015թ.` 43.0%: 2012-2015թթ. գերփոքր, փոքր և միջին կազմակերպություններում աշխատողների թվաքանակի բաշխվածքը ունեցել է հետևյալ տեսքը /տես՝ գծանկար 5/.

Գծանկար 5. Գերփոքր, փոքր և միջին կազմակերպություններում աշխատողների թվաքանակի բաշխվածքը*



* Աղբյուրը՝ Փոքր և միջին ձեռնարկատիրությունը բնութագրող հիմնական ցուցանիշները Հայաստանում 2007-2015թթ. http://www.smednc.am/am/content/sme_state_support/

Գծանկարից պարզ է դառնում, որ աշխատատեղերի մեծ մասն ապահովել են փոքր և միջին կազմակերպությունները:

4. ՓՄՁ սուբյեկտների մասնակցությունը արտաքին առևտրում:

Հայաստանի արտաքին առևտրաշրջանառության ծավալը 2016թ. հունվարին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է 30,4%-ով և 272,5 մլն դոլար կազմել՝ համաձայն ՀՀ ազգային վիճակագրական ծառայության պաշտո-

նական տվյալների:¹⁰⁴ 2015 թվականի հունվարին արտահանման ծավալը նվազել է 21,9%-ով և կազմել 75,6 մլն դոլար, ներկրման ծավալը՝ նվազել է 33,2%-ով և կազմել 196,9 մլն դոլար: Արդյունքում, արտաքին առևտրային հավասարակշռության բացասական սալդոն կազմել է 121,3 մլն դոլար:¹⁰⁵

Ազգային վիճակագրական ծառայության տվյալներով՝ Հայաստանի արտաքին առևտրաշրջանառությունն ԱՊՀ երկրների հետ կազմել է 85 մլն դոլար (31,2 տոկոս մասնաբաժին, 29,6% անկում), ընդ որում Ռուսաստանի հետ առևտուրը կամել է 73 մլն դոլար (31 տոկոս անկում), Ուկրաինայի հետ՝ 8.3 մլն դոլար (27,8 տոկոս անկում), Բելառուսի հետ՝ 1 002,9 մլն դոլար (67,7% աճ), իսկ Ղազախստանի հետ գրեթե առևտրաշրջանառություն չի իրականացվել: ԵՄ երկրների հետ առևտուրը 2015 թվականի հունվարին կազմել է 64,8 դոլար (23,8 տոկոս մասնաբաժին, 39.2% անկում), իսկ այլ երկրների հետ՝ 122,7 մլն դոլար (45 տոկոս մասնաբաժին, 25,3% անկում):

Աղյուսակ 12.

Արտաքին առևտրաշրջանառության ծավալների դինամիկան 2013-2015թթ.
ըստ ՓՄՁ սուբյեկտների և խոշոր կազմակերպությունների*

Ճյուղ	2013թ.		2014թ.		2015թ.	
	ՓՄՁ	խոշոր	ՓՄՁ	խոշոր	ՓՄՁ	խոշոր
Արտահանում	17.9	82.1	18.2	81.8	18.1	81.9
Ներմուծում	31.2	68.8	32.2	67.8	28.4	71.6

* Աղբյուրը՝ Փոքր և միջին ձեռնարկատիրությունը բնութագրող հիմնական ցուցանիշները Հայաստանում 2007-2015թթ. http://www.smednc.am/am/content/sme_state_support/

Աղյուսակում ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ ՓՄՁ ոլորտի մասնաբաժինը երկրի արտաքին առևտրաշրջանառության մեջ դեռևս համեմատաբար ցածր է¹⁰⁶. արտահանման մեջ այն կազմում է 18.1, իսկ ներմուծման մեջ՝ 28.4 տոկոս 2015թ. համար: Վերլուծության ենթարկելով երկրի արտաքին առևտրաշրջանառության մեջ, մասնավորապես արտահանման ծավալում, ՓՄՁ

¹⁰⁴ Տես ՀՀ Ազգային վիճակագրության ծառայության պաշտոնական կայքէջը՝ www.armstat.am


¹⁰⁵ Տես ՀՀ Ազգային վիճակագրության ծառայության պաշտոնական կայքէջը՝ www.armstat.am

¹⁰⁶ Համաձայն OECD և UNECE տվյալների ՓՄՁ տեսակարար կշիռը արտահանման ծավալում Չեխիայում կազմում է 36,2%, Ֆրանսիայում՝ 30,0%, Վրաստանում՝ 10,7%:


ոլորտի համեմատաբար փոքր մասնակցությունը՝ կարելի է եզրահանգել, որ ՓՄՁ սուբյեկտները ներկայումս հիմնականում իրենց համար թիրախային են համարում ներքին շուկան, չեն կարողանում բավարարել արտաքին շուկայի կողմից ներկայացված պահանջները և արտահանման ընթացքում հանդիպում են խոչընդոտների կամ երկրի ներսում, կամ էլ արտաքին շուկայում իրենց արտադրանքը ներկայացնելիս:

ՓՄՁ-ների և խոշոր կազմակերպությունների տեսակարար կշիռն արտահանման ու ներմուծման ծավալներում 2013-2015թթ. կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

Գծանկար 6. ՓՄՁ -ների և խոշոր կազմակերպությունների տեսակարար կշիռն արտահանման ծավալներում 2013-2015թթ.*



Գծանկար 7. ՓՄՁ -ների և խոշոր կազմակերպությունների տեսակարար կշիռը ներմուծման ծավալներում 2013-2015թթ.**



* ** Աղբյուրը՝ Փոքր և միջին ձեռնարկատիրությունը բնութագրող հիմնական ցուցանիշները Հայաստանում 2007-2015թթ. http://www.smednc.am/am/content/sme_state_support/

5. Օտարերկրյա ներդրումները ՓՄՁ սուբյեկտներում:

Վերջին տարիներին օտարերկրյա ներդրումների աճի դինամիկան Հայաստանում խրախուսիչ է և իրականացվող օտարերկրյա ներդրումների ծավալների տարեց տարի մեծ աճ է արձանագրվում: Ըստ պաշտոնական վիճակագրության՝ 2015 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին ՀՀ տնտեսության իրական հատվածում իրականացված օտարերկրյա ներդրումների զուտ հոսքերը կազմել են 296.3 մլն ԱՄՆ դոլար: ՕՌԻՆ-ի զուտ հոսքերը 2015թ. առաջին 9 ամիսներին ընթացքում կազմել են 262 մլն ԱՄՆ դոլար: 2015 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին ՀՀ տնտեսության իրական հատվածում կատարված օտարերկրյա ներդրումները հիմնականում իրականացվել են՝ Շվեյցարիայից (93.4 մլն ԱՄՆ դոլար), Գերմանիայից (62.2 մլն ԱՄՆ դոլար), Լյուքսեմբուրգից (59.0 մլն ԱՄՆ դոլար), Ռուսաստանից (29.8 մլն ԱՄՆ դոլար), Արաբական Միացյալ Էմիրություններից (21.0 մլն ԱՄՆ դոլար) և Ֆրանսիայից (20.5 մլն.ԱՄՆ դոլար): Վերոնշյալ ներդրումները գլխավորապես ուղղվել են տնտեսության հետևյալ ոլորտներ՝ հանքագործական արդյունաբերություն՝ (137.2 մլն ԱՄՆ դոլար), էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում (78.1 մլն ԱՄՆ դոլար), մշակող արդյունաբերություն (64.3 մլն ԱՄՆ դոլար), մանրածախ և մեծածախ առևտուր՝ (33.1 մլն ԱՄՆ դոլար) և տեղեկատվություն և կապ (23.9 մլն ԱՄՆ դոլար):¹⁰⁷

Միաժամանակ, 2015թ. ՀՀ-ում գրանցված է օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ շուրջ 6000 ձեռնարկություն:

Հեղինակավոր «Հերիթեյջ» հիմնադրամի կողմից թողարկվող Տնտեսական ազատության ինդեքսի 2015թ. արդյունքներով՝ Հայաստանը ԱՊՀ երկրների ցանկում առաջատարն է և աշխարհում զբաղեցնում է 41-րդ հորիզոնականը (68.9 միավորով) 187 երկրների շարքում:¹⁰⁸


Համաձայն փորձագիտական գնահատականների՝ 2007-2015թթ. օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ ՓՄՁ սուբյեկտների կողմից տնտեսության իրական հատվածում իրականացված օտարերկրյա ներդրումների ծավալները, այդ թվում՝

¹⁰⁷ Տես ՀՀ էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքէջը՝ <http://www.mineconomy.am/arm/55/text.html>

¹⁰⁸ <http://www.heritage.org/index/country/armenia>

ուղղակի ներդրումները բացարձակ թվերով տարեց տարի կտրուկ աճել են¹⁰⁹: Միաժամանակ, ՓՄՁ սուբյեկտների կողմից իրականացված օտարերկրյա ներդրումները տոկոսային մասնաբաժնով՝ ընդհանուր օտարերկրյա ներդրումների ծավալում գրեթե նույն մասնաբաժինն են կազմում, իսկ ուղղակի ներդրումների պարագայում փոքր-ինչ նվազման միտում ունեն: Նույն մեթոդով փորձագիտական գնահատականի համաձայն՝ 2013-2015թթ. Հայաստանում հիմնադրվել է օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ 1135 ընկերություն, որոնց գերակշռող մեծամասնությունը (մոտ 95%) ՓՄՁ սուբյեկտներ են:

Գծանկար 8. Օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ ՓՄՁ -ներում իրականացված օտարերկրյա ներդրումների մասնաբաժինների դինամիկան 2004-2015թթ., մլն ԱՄՆ դոլար*



* Աղբյուրը՝ Փոքր և միջին ձեռնարկատիրությունը բնութագրող հիմնական ցուցանիշները Հայաստանում 2007-2015թթ. http://www.smednc.am/am/content/sme_state_support/

6. ՓՄՁ սուբյեկտների կողմից վճարված հարկեր: ՓՄՁ սուբյեկտների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի, տուրքերի և պարտադիր այլ վճարների¹¹⁰ մասով վերջին տարիներին արձանագրվել է բացարձակ գումարների աճ, ինչը վկայում է ներքոբերյալ աղյուսակը.

¹⁰⁹ Տես՝ ՓՄՁ ոլորտը Հայաստանում 2007-2015թթ. տեղեկագրերը՝ http://www.smednc.am/am/content/sme_state_support/

¹¹⁰ Առանց պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների

ՓՄՁ սուբյեկտների և խոշոր կազմակերպությունների կողմից վճարված հարկերի տեսակարար կշիռը ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների ընդհանուր գումարում, 2008-2015թթ.
/մլն դրամ/*

Դասակարգում	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.
Խոշոր	424.6	382.8	448.6	487.2	550.5	754.7	827.3	802.4
ՓՄՁ՝	174.2	139.6	145.5	166.8	198.8	245.4	236.8	278.0
Ընդամենը	598.8	522.4	594.1	654.0	749.3	1000.1	1064.1	1080.4

*Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական կայքէջը՝
<http://www.mfe.am/index.php?cat=76&lang=1>

7. ՓՄՁ զարգացման ինդեքս: Երկրի տնտեսական համակարգում ՓՄՁ դերի և նշանակության առավել ամբողջական պատկեր ստանալու հնարավորություն է ընձեռում Միացյալ Ազգերի Կազմակերպության ՓՄՁ ոլորտի վերաբերյալ իրականացված հետազոտություններում կիրառվող ագրեգացված մի ցուցանիշ, որը կոչվում է «ՓՄՁ զարգացման ինդեքս»: ՓՄՁ զարգացման ինդեքսն ընդհանրական տնտեսական ցուցանիշ է, որն իր մեջ ներառում է ամբողջ ՓՄՁ ոլորտի մասնաբաժինն ազգային տնտեսության մակարդակով և հիմնված է 3 հիմնական տնտեսական գործոնների վրա, որոնք են.

- մասնավոր հատվածի տեսակարար կշիռը երկրի տնտեսությունում,
- ՓՄՁ սուբյեկտների տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ,
- ՓՄՁ սուբյեկտներում ներգրավված աշխատուժի տեսակարար կշիռը զբաղվածների ընդհանուր թվաքանակում:¹¹¹

111 Круглова Н. Ю. Основы бизнеса (предпринимательства): учебник / Н.Ю. Круглова. – М.: КНОРУС, 2010, էջ 185

Աղյուսակ 14. ՓՄՁ զարգացման ինդեքսը ՀՀ-ում, 2002-2015թթ.*

Տարեթիվ	Մասնավոր հատվածի տեսակարար կշիռը տնտեսությունում	ՓՄՁ ոլորտի տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ (%)	ՓՄՁ սուբյեկտներում զբաղվածների տեսակարար կշիռը զբաղվածների ընդհանուր թվաքանակում (%)	1 շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի մեծությունը	ՓՄՁ զարգացման ինդեքս ($\text{ՀՆԱ-ի նկատմամբ մեկ շնչին ընկնող եկամուտների հաշվով}$)
2002	81	34.4	28.2	739.9	58.1
2003	83	36.5	31.0	873.4	82.0
2004	84	38.6	32.9	1104.4	117.8
2005	84	39.8	34.0	1513.0	172.0
2006	84	40.3	35.1	1996.0	237.2
2007	84	41.0	40.7	2844.0	396.8
2008	84	41.7	42.1	3689.0	544.0
2009	84	42.5	42.2	2686.0	404.7
2010	84	43.3	44.8	2543.0	455.8
2011	85	44.4	45.8	3420.0	512.8
2012	85	44.4	51.2	3512.0	556.6
2013	84	46.6	50.3	3680.0	558.1
2014	86	47.8	54.4	3864.0	590.4
2015	86	47.5	54.8	3860.4	600.0

* Աղբյուրը՝ Փոքր և միջին ձեռնարկատիրությունը բնութագրող հիմնական ցուցանիշները Հայաստանում 2002-2015թթ. http://www.smednc.am/am/content/sme_state_support/

ՓՄՁ զարգացման ինդեքսը կարող է արտահայտվել տոկոսներով և/կամ ՀՆԱ-ի նկատմամբ մեկ շնչին ընկնող եկամուտների հաշվով:

2.3. Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի համեմատական վերլուծության առանձնահատկությունները

Փոքր և միջին ձեռնարկությունները հաճախ գնահատվում են որպես բարգաւաճող տնտեսությունների տնտեսական զբաղվածության ողնաշար, ինչպես նաև՝ որպես նորարարության և հավելյալ արժեքի ստեղծող արտադրության շարժիչ ուժ:¹¹²

Փոքր և միջին ձեռնարկատիրությունը մի շարք երկրներում ավելի հայտնի է «փոքր բիզնես» անվանումով: Առանց փոքր բիզնեսի այս երկրների տնտեսությունները չեն կարող գործել ու զարգանալ: Այս առումով բացառություն չեն կազմում նաև երիտասարդ շուկայական տնտեսություն ունեցող երկրները՝ հանձինս Հայաստանի Հանրապետության: Փոքր բիզնեսը շուկայական տնտեսությունում հանդիսանում է առաջատար ճյուղ, որը կանխորոշում է տնտեսական աճի տեմպերը, ՀՆԱ-ի կառուցվածքն ու որակը, ընդ որում զարգացած շուկայական տնտեսություն ունեցող երկրներում փոքր բիզնեսի կողմից է արտադրվում ՀՆԱ-ի 60-70%-ը:¹¹³

Այդ է պատճառը, որ գրեթե բոլոր զարգացած պետություններում իշխանությունը հանձնս իրենց կառավարությունների, աջակցություն են ցուցաբերում փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտների ստեղծմանն ու կայացմանը:

Համաշխարհային տնտեսությունում գոյություն ունեն մեծ թվով փոքր ֆիրմաներ, ընկերություններ և ձեռնարկություններ (օրինակ՝ Հնդկաստանում փոքր բիզնեսի ձեռնարկությունների քանակը գերազանցում է 12 միլիոնը, Ճապոնիայում՝ 9 միլիոնը), որոնք ապահովում են երկրի ՀՆԱ-ի և զբաղվածության աճի մակարդակը: Մասնավորապես, ԱՄՆ-ում փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտները ապահովում են ՀՆԱ-ի աճի շուրջ կեսը: Բացի այդ, հենց նրանք են, որ օպերատիվ կերպով հարմարվում են տնտեսությունում տեղի ունեցող կառուցվածքային փոփոխություններին և արդյունքում ապահովում են շուկայական տնտեսության անհրաժեշտ ճկունությունը: Փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտները էական դեր են խաղում նաև տնտեսությունում առողջ մրցակցային մթնոլորտի

¹¹² ՓՄՁ աջակցության ռազմավարություն /2015-2017թթ./ Երևան, 2014թ. դեկտեմբեր, էջ 8
<http://www.rdfund.org/sites/default/files/SME%20strategy%202015%20-%202017.pdf>

¹¹³ Предпринимательство: учеб. / под редакцией М.Г. Лапусты. – М.: ИНФРА-М, 2009, էջ 124

ձևավորմանը, որը հատկապես բարձր մոնոպոլիզացված տնտեսություններում ունի անզնահատելի նշանակություն:¹¹⁴

Աշխարհի շատ երկրներում անկախ դրանց զարգացվածության մակարդակից, ձեռնարկությունների հիմնական մասը կազմում են փոքր ձեռնարկությունները:

Աղյուսակ 15. Փոքր ձեռնարկությունների բաժինը առանձին երկրների տնտեսություններում*

Երկիրը	Տարին	Բաժինը,%		
		ձեռնարկությունների մեջ	զբաղվածության մեջ	թողարկված համախառն արտադրությունում
Ավստրալիա	2014	92.0	35.7	23.1
Ավստրիա	2013	75.5	20.2	14.5
Բելգիա	2012	97.2	38.4	50.3
Բուլղարիա	2015	97.5	18.9	21.8
ՄԲ	2012	98.5	53.1	46.5
Հունգարիա	2014	96.8	53.1	46.5
Վրաստան	2014	82.0	26.0	42.0
Դանիա	2013	98.3	55.4	46.5
Իսրայել	2014	93.9	39.4	-
Հնդկաստան	2015	76.2	17.3	13.4
Ինդոնեզիա	2013	98.7	73.2	28.4
Իսպանիա	2014	99.4	67.5	-
Իտալիա	2015	99.2	63.4	53.9
Ղազախստան	2015	87.6	23.9	25.9
Չինաստան	2015	58.9	6.0	5.2
Կոլումբիա	2014	93.4	40.5	27.4
Կորեա	2014	98.5	55.3	25.2
Լատվիա	2015	98.3	41.1	39.8
Լիտվա	2011	98.0	43.1	41.8
Նիդեռլանդներ	2014	96.7	49.7	46.5
Նորվեգիա	2014	81.5	54.8	50.5
Պորտուգալիա	2015	99.0	48.7	43.7
Թուրքիա	2015	86.7	28.3	25.7
Ճապոնիա	2015	98.1	66.5	-

*Աղբյուրը՝ www.business.com/corporations

¹¹⁴ Самарина В.П. Основы предпринимательства: учеб.пособие / В.П. Самарина. – М.: КНОРУС,2009, էջ 85

Տնտեսությունում փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտների ձևավորումն ու զարգացումը հնարավոր չէ իրականացնել առանց համապատասխան նպատակաուղղված պետական քաղաքականության իրագործման: Դրա վառ ապացույցն է այն, որ զարգացած շուկայական տնտեսությամբ շուկայական երկրներում իրականացվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրությանն ուղղված պետական քաղաքականություն: Օրինակ Գերմանիայում փոքր և միջին գործարարությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտներին տրամադրվող նպաստները կազմում են տարեկան մոտ 4 մլրդ եվրո: Ճապոնիայում, որտեղ նույնպես մեծ թիվ են կազմում փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտները, հատուկ առանձնացված են այն փոքր ձեռնարկությունները, որոնք շուկայական տնտեսությունում առանց պետական աջակցության չեն կարող զարգանալ:¹¹⁵ Այսպես, համաձայն ԱՄՆ-ի փոքր բիզնեսի վարչության տվյալների՝ տնտեսությունում գործում են ավելի քան 22 մլն նման ձեռնարկություններ, որոնք աշխատանքով ապահովում են ներքին աշխատուժի մոտ 53%-ը, ՀՆԱ-ի մոտ 50%-ը և ստեղծվում են մեծ թվով աշխատատեղեր:¹¹⁶

Գործարարության զարգացումը տարբեր երկրներում ունենում է զարգացման տարբեր դրսևորումներ: Սակայն պետք է փաստել, որ այն զարգացման միտումները, որը բնորոշ է Հայաստանի Հանրապետությանը, բնորոշ է նաև նախկին խորհրդային միության երկրներին:

Իրականացված վերլուծության արդյունքների և դուրս բերված ցուցանիշների հիման վրա հնարավոր է դարձել ձևավորել ՀՀ-ում ՓՄՁ ոլորտի վերաբերյալ ամբողջական պատկեր: Ներկայացված տեղեկատվությունը ավելի ամբողջական է դառնում ՀՀ-ում և մի շարք զարգացող ու զարգացած երկրներում փոքր և միջին բիզնեսի ոլորտը կամ որ նույնն է՝ ՓՄՁ ոլորտը բնութագրող հիմնական ցուցանիշների համադրման և վերլուծության արդյունքում:

ՀՀ-ում ՓՄՁ ոլորտի ամբողջական պատկերի և տարածաշրջանի և աշխարհի այլ երկրների տնտեսություններում ընթացող տրանսֆորմացիոն գործընթացների

¹¹⁵ Туренко Т.А. Малое предпринимательство и его роль в устойчивом развитии экономики/Т.А. Туренко //Известия иркутской государственной экономической академии. – 2010. – №5. էջ.223-227

¹¹⁶ Чепуренко А.Ю. Мальный бизнес в рыночной среде /А. Ю. Чепуренко. – М.: Издательский дом Международного университета в Москве, 2009, էջ 165

համադրումը և համապատասխան զուգահեռների անցկացումը շատ կարևոր է: ՓՄՁ ոլորտը նշանակալի դեր ունի ինչպես զարգացող, այնպես էլ զարգացած երկրների տնտեսություններում, ինչի մասին են վկայում ստորև ներկայացված համեմատական վերլուծության արդյունքները:

Տնտեսապես զարգացած երկրներում ՓՄՁ սուբյեկտները կազմում են տնտեսվարող սուբյեկտների ընդհանուր թվաքանակի 97-99%-ը: ԱՄՆ-ում փոքր բիզնեսի (ՓՄՁ) տեսակարար կշիռը կազմակերպությունների ընդհանուր թվաքանակում կազմում է 99.7%¹¹⁷, ՀՆԱ-ի մեջ՝ 52%, իսկ զբաղվածների ընդհանուր թվաքանակում՝ 53%: Համաձայն Տնտեսական Համագործակցության և Զարգացման Կազմակերպության (OECD) տվյալների Ֆրանսիայում և Իսպանիայում կազմակերպությունների ընդհանուր թվաքանակում ՓՄՁ սուբյեկտները կազմում են 99.8%, Ճապոնիայում՝ 99.7%, Շվեյցարիայում՝ 99 %:

Ինչ վերաբերում է անցումային և/կամ զարգացող տնտեսությամբ երկրներին, ինչպես տարածաշրջանում¹¹⁸, այնպես էլ աշխարհում, ապա դրանց համեմատությունը Հայաստանի հետ՝ ՓՄՁ ոլորտը բնութագրող հիմնական ցուցանիշների կտրվածքով, տալիս է բավականին հետաքրքիր պատկեր:

Իրականացված դիտարկումների արդյունքում համեմատական վերլուծության համար ընտրվել են հետևյալ երկրները. Ադրբեջան, Վրաստան, Սլովակիա, Սլովենիա, Լատվիա, Լիտվա, Էստոնիա, Բուլղարիա, Խորվաթիա, Ռումինիա, Չեխիա և Հունգարիա: Նշված երկրների ընտրությունը պայմանավորված է աշխարհագրական դիրքով¹¹⁹ և այս կամ այն կերպ Հայաստանի հետ համադրելի տնտեսական զարգացման միտումներ, տարածք, բնակչության թվաքանակ ունենալով, ինչպես նաև մի շարք այլ ածանցյալ հանգամանքներից ելնելով:

¹¹⁷ Տես՝ Small Business in Japan “White paper on small and medium enterprises in Japan” MITI, 2015

¹¹⁸ Հարավ կովկասյան տարածաշրջան

¹¹⁹ Ադրբեջան, Վրաստան

Աղյուսակ 16. ՓՄՁ ոլորտը բնութագրող հիմնական ցուցանիշները Հայաստանում և մի շարք անցումային և /կամ զարգացող տնտեսությամբ երկրներում 2015թ..*

Երկիր	Մասնավոր հատվածի տեսակարար կշիռը տնտեսությունում	ՓՄՁ ոլորտի տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ (%)	ՓՄՁ սուբյեկտներում զբաղվածների տեսակարար կշիռը զբաղվածների ընդհանուր թվաքանակում (%)	1 շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի մեծությունը	ՓՄՁ զարգացման ինդեքս (ՀՆԱ-ի նկատմամբ մեկ շնչին ընկնող եկամուտների հաշվով)
Սլովենիա	74	56.5	62.6	26.779	6630.0
Էստոնիա	87	73.7	55.6	17.223	5646.0
Լիտվա	76	63.0	71.2	14.096	4662.2
Լատվիա	63	58.4	69.4	14.909	4209.2
Սլովակիա	82	45.3	66.0	17.565	4201.3
Իսրայել	84	56.0	65.0	15.636	3984.0
Հունգարիա	88	56.8	56.8	15.409	2583.7
Ռումինիա	75	21.2	42.2	9.300	751.9
Բուլղարիա	76	43.5	42.8	6.546	621.5
Ադրբեջան	77	34.6	34.8	5.330	619.8
Վրաստան	80	34.8	38.6	4.012	601.4
Հայաստան	86	47.5	54.8	3860.4	600.0

* Աղբյուրը՝ Փոքր և միջին ձեռնարկատիրությունը բնութագրող հիմնական ցուցանիշները Հայաստանում 2002-2015թթ. http://www.smednc.am/am/content/sme_state_support/

Հաշվի առնելով այն փաստը, որ հայկական ՓՄՁ սուբյեկտներում աշխատողների թվաքանակը, ինչպես նաև մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն բավականին փոքր է Եվրամիության երկրների համեմատությամբ, ՓՄՁ զարգացման ինդեքսը բացարձակ արժեքով նույնպես փոքր է ստացվում զարգացող և անցումային տնտեսությամբ այլ երկրների համեմատությամբ:

Այս պնդումը ճիշտ է նաև Ադրբեջանի և Վրաստանի դեպքերում: Չնայած դրան, Հայաստանում այս ցուցանիշը շարունակականորեն աճում է, ինչը վկայում է երկրում նպատակադրված ազգային ՓՄՁ քաղաքականության մասին:

«Doing Business» 2016-ը Համաշխարհային Բանկի խմբի կողմից մշակվող և հրապարակվող տարեկան հաշվետվությունների շարքի տասներեքերորդ հրատարակությունն է: Համաշխարհային բանկն այս հետազոտությունն իրականացնում է տարբեր երկրներում ձեռնարկատիրական գործունեությանը

խոչընդոտող կամ աջակցող կանոնակարգերի գնահատման նպատակով¹²⁰: «Doing Business»-ը ներկայացնում է բիզնեսի կանոնակարգման և սեփականության իրավունքները բնութագրող որակական ցուցանիշներ, որոնք կարելի է համեմատել 181 երկրների համար: Ծրագրի նպատակն է համեմատել տարբեր երկրների տնտեսությունները ձեռնարկատիրական գործունեության իրականացման դյուրինության տեսանկյունից: Այս ուսումնասիրության մեջ լավագույնն է հանդիսանում այն երկրի տնտեսությունը, որը գտնվում է առաջին տեղում: Ձեռնարկատիրական գործունեության իրականացման դյուրինության բարձր ինդեքսը նշանակում է, որ կանոնակարգող միջավայրը նպաստավոր է գործարարության և ձեռնարկատիրության իրականացման համար: Այս ինդեքսը միջինացնում է երկրի դիրքն ըստ 10 թեմաների՝ բաղկացած մի շարք ցուցանիշներից, որոնք էլ իրենց հերթին ամեն թեմային տալիս է հավասար տեսակարար կշիռներ:

Հայաստանը զբաղեցնում է 35-րդ տեղը 189 դիտարկվող տնտեսությունների շարքում: Վրաստանը այս շարքում զբաղեցնում է 24-րդ տեղը, իսկ Ադրբեջանը՝ 63-րդն է: Այլ երկրների հետ համեմատած, 189 տնտեսությունների շարքում, Ռումինիան 37-րդն է, Թուրքիան 55-րդը, Ռուսաստանը 120-րդը, իսկ առաջին եռյակը գլխավորում են Սինգապուրը, Նոր Զելանդիան և Դանիան:¹²¹ Ձեռնարկատիրական գործունեության իրականացման դյուրինության համեմատականը չի հանդիսանում բացարձակ ցուցանիշ, քանի որ վերջինիս գնահատման համար հաշվի են առնվում ձեռնարկատիրական գործունեության իրականացման համար կարևոր հանդիսացող ոչ բոլոր գործոնները: Այնուամենայնիվ, երկրի դիրքի բարելավումը նշանակում է, որ տվյալ երկրի կառավարությունը նպաստում է բիզնեսի վարման համար ավելի նպաստավոր միջավայրի ձևավորմանը:

¹²⁰ Տվյալները վերցված են «Doing Business 2016» հաշվետվությունից, և ընդգրկում են 2015թ. հունվարից մինչև 2016թ. հունվարն ընկած ժամանակահատվածը:

<http://www.doingbusiness.org/~media/GIAWB/Doing%20Business/Documents/Annual-Reports/English/DB16-Full-Report.pdf>

¹²¹<http://www.doingbusiness.org/~media/GIAWB/Doing%20Business/Documents/Annual-Reports/English/DB16-Full-Report.pdf>

Աղյուսակ 17.
Ձեռնարկատիրական գործունեության իրականացման ոլորտում
Հայաստանի դիրքը 2014 և 2015թթ. ըստ «Doing Business»-ի*

Դասակարգում	Doing Business 2015	Doing Business 2014
Ձեռնարկատիրական գործունեության իրականացման դյուրինություն	35	41
Գործարարության հիմնում	99	66
Շինարարության թույլտվությունների ստացում	5	47
Աշխատուժի ներգրավում	54	52
Սեփականության գրանցում	5	2
Վարկերի ստացում	14	25
Ներդրողների պաշտպանություն	42	88
Հարկերի վճարում	49	75
Արտաքին առևտուր	41	68
Պայմանագրային պարտավորությունների կատարում	28	63
Գործարարության լուծարում	71	47

*Աղբյուրը՝ «Doing Business 2016» հաշվետվություն, որն ընդգրկում է 2015թ. հունվարից մինչև 2016թ. հունվարն ընկած ժամանակահատվածը:

Համաձայն «Forbes» ամսագրի կողմից ներկայացվող բիզնեսի համար նպաստավոր երկրների ցանկի, Հայաստանը հանդիսանում է լավագույն երկիրը Անկախ Պետությունների Համագործակցությունում (ԱՊՀ): Հայաստանը այստեղ զբաղեցնում է 66-րդ տեղը 121 երկրների շարքում՝ զիջելով ԱՊՀ և տարածաշրջանային մի շարք երկրների: Օրինակ՝ Վրաստանը 43-րդ տեղում է, Լիտվան՝ 17-րդ, Ադրբեջանը՝ 58-րդ, իսկ Ռուսաստանը՝ 81-րդ¹²²: Համեմատությունը իրականացվում է ելնելով երկրի ՀՆԱ-ի աճի, գնաճի և գործազրկության մակարդակներից, հարկային և մաքսային համակարգերի վիճակից:

¹²² http://www.forbes.com/best-countries-for-business/#/tab:overall_page:9

Ինչպես արդեն նշել ենք, աշխարհի շատ զարգացած երկրներում փոքր և միջին ձեռնարկատիրությունը համարվում է տնտեսության կարևոր հիմքերից մեկը: Այդ տեսանկյունից Forbes ամսագիրն իրականացրեց հերթական հետազոտությունը՝ փոքր և միջին ձեռնարկատիրության առավել շահութաբեր և հեռանկարային ոլորտների վերաբերյալ, հիմնված ավելի քան 300 հազար փոքր և միջին ձեռնարկությունների տվյալների վրա: Ստացված արդյունքները շատ տպավորիչ են:

1. Մասնավոր աուդիտորներ, շահութաբերությունը՝ 16,5%
2. Մանուալ թերապևտներ, շահութաբերությունը՝ 15,3%
3. Մասնագիտացված կլինիկաներ՝ շահութաբերությունը՝ 15,0%
4. Հաշվապահական ծառայություններ՝ շահութաբերությունը՝ 14,9%
5. Մասնավոր ատամնաբույժեր՝ շահութաբերությունը՝ 14,7%
6. Հարկային ծառայություններ՝ շահութաբերությունը՝ 14,7%
7. Ատամնաբույժ-ատամնատեխնիկ՝ շահութաբերությունը՝ 14,4%
8. Դատապաշտպանական գրասենյակներ՝ շահութաբերությունը՝ 13,4%
9. Մանրաձախ վարկավորում՝ շահութաբերությունը՝ 13,3%
10. Մասնավոր կառավարիչներ՝ շահութաբերությունը՝ 12,2%:¹²³

¹²³ http://www.aif.ru/money/business/top-20_samyh_pribylnyh_vidov_malogo_biznesa

Գլուխ 3. Փոքր և միջին ձեռնարկատիրության կառավարման արդյունավետության բարձրացման արդի գերակայությունները ՀՀ-ում

3.1. Փոքր և միջին ձեռնարկատիրության կարգավորման կատարելագործման հիմնուղիները ՀՀ-ում և միջազգային պրակտիկայում

Պետության դերի, նրա գործառույթների, պետության կողմից տնտեսության պետական կարգավորման ձևերի և մեթոդների վերաբերյալ առկա են բազմաթիվ հետազոտություններ: Ակնհայտ է, որ պետության կարգավորիչ դերի պահանջ գոյություն ունի մեր կյանքի գրեթե բոլոր բնագավառներում: Սակայն ասվածը պետք է դրսևորվի պետության, որպես իր սեփականության արդյունավետ տիրոջ ու կառավարողի, գործառույթի իրականացման ժամանակ, շուկայական մրցակցության և բազմակացութաձև սեփականության պայմաններում, որտեղ ոչ պետական սեփականությունը թողարկվող արտադրանքի ծավալում գերակշիռ մասնաբաժին ունի:

Տնտեսության պետական կարգավորման հիմնախնդիրը արտադրության մասնակիցների (տնտեսավարող սուբյեկտների) գործողությունների կորրեկցացումն է: Ցանկացած երկրի տնտեսական ծաղկումը պարտական է արտադրողների ջանքերի համաձայնեցված գործողություններին, այն դեպքում, երբ ճգնաժամը նրանց միջև եղած հակասությունների հետևանք է:¹²⁴

Տնտեսագետների մեջ մինչև վերջին ժամանակներս այդ հիմնախնդրի լուծման վերաբերյալ գոյություն ունեին երկու միմյանց հակադիր մոտեցումներ:

Համաձայն առաջինի՝ հասարակական արտադրության առավելագույն արդյունավետության կարելի է հասնել դրա յուրաքանչյուր մասնակցին անսահմանափակ տնտեսական ազատություն տալով:¹²⁵ Սակայն տնտեսության այդպիսի կառավար-

¹²⁴ Круглова Н. Ю. Основы бизнеса (предпринимательства): учебник / Н.Ю. Круглова. – М.: КНОРУС, 2010, էջ 38

¹²⁵ Набатников В.М. Организация предпринимательской деятельности. Учебное пособие/В.М. Набатников. – Ростов-на Д.: Феникс, 2011, էջ 118-119

ման ձևին յուրահատուկ են տնտեսական ժգնաժամերը, միջկազմակերպական կոնֆլիկտները և սոցիալական հակասությունները:

Հակադիր տեսակետի կողմնակիցները գտնում են, որ արտադրության և գործարարության մասնակիցների գործողությունները պետք է ենթարկվեն հասարակական իշխանության գլխավոր ինստիտուտի՝ պետության կողմից իրականացվող կոշտ սոցիալական կարգավորման, որը տիրապետում է արտատնտեսական հարկադրանքի իրավունքին և ուժին:¹²⁶

Հասկանալի է, որ արտադրության վարչական կազմակերպումը օբյեկտիվորեն ժխտում է շուկան, որը հնարավոր է միայն արտադրողների տնտեսական ինքնուրույնության պայմաններում: Տնտեսության կարգավորման երկրորդ մոտեցման դեպքում նկատվում է ավելի մեծ թերություններ, օրինակ՝ խրոնիկական պակասուրդ, որը խարխլում է տնտեսության հիմքերը, ոչնչացնում և արմատախիլ է անում տնտեսական մրցակցությունը և ստեղծագործ աշխատանքի նախաձեռնությունը:

Տնտեսության, այդ թվում նաև՝ գործարարության պետական կարգավորման անհրաժեշտությունը զգացվել է դեռևս հին ժամանակներում, սակայն առաջին անգամ դրա անհրաժեշտությունը համապարփակ կերպով հիմնավորեց Ջ. Քեյնսը՝ դասական տնտեսագիտության հիմնարար դրույթների քննադատության ճանապարհով: Դա այն ժամանակն էր, երբ 20-րդ դարի 30-ական թվականների կործանիչ ուժի՝ Մեծ Ճգնաժամի ներգործության արդյունքում շատ տնտեսագետներ կասկածի տակ առան մինչ այդ գերիշխող դասական տնտեսագիտության տեսության հիմնադրույթները, քանի որ ակնհայտ դարձավ, որ դրանց շրջանակներում հնարավոր չէ պարզաբանել տնտեսության անկումը և Ջ. Քեյնսը իր «Զբաղվածության, տոկոսի և փողի ընդհանուր տեսություն» աշխատությունում ուղղակիորեն հայտարարեց, որ շուկայական տնտեսության ավտոմատ կարգավորիչը Ադամ Սմիթի պատկերավոր արտահայտությամբ, «անտեսանելի ձեռքն է», որն ուղղորդում է առանձին անհատների գործունեությունը դեպի հասարակական հուն և ստիպում է նրանց ծառայել հասարակական շահերին:¹²⁷

¹²⁶ Набатников В.М. Организация предпринимательской деятельности. Учебное пособие/В.М. Набатников. – Ростов-на Д.: Феникс, 2011, էջ 122-123

¹²⁷ Кейнс Дж. М. Общая теория занятости, процента и денег. М., Гелиос АРВ, 2002, էջ 206-208

Ջ. Քեյնսը իր փաստարկներից ելնելով եզրակացրեց, որ տնտեսակարգի ամբողջական փլուզումից խուսափելու միակ հնարավոր միջոցը «տնտեսությանը պետական միջամտությունն է»: Քեյնսը, ի տարբերություն տնտեսագիտության դասական տեսության ներկայացուցիչների, ազգային եկամտի մեծացման հարցում նախապատվությունը տալիս էր ոչ թե ամբողջական առաջարկին, այլ ամբողջական պահանջարկին, այսինքն՝ վճարունակ պահանջարկի և արտադրության ծավալների համապատասխանությանը՝ Քեյնսյան խաչին: Քեյնսը ամբողջական պահանջարկի մեծացման լծակներ էր հանարում պետական ծախսերը, փոխատվական տոկոսն ու հարկերը:¹²⁸

Հետագայում բավականին զարգացումներ տեղի ունեցան և քեյնսյան տեսության հիման վրա աստիճանաբար ձևավորվեցին տնտեսական ակտիվության ընկալումները և ծնունդ առավ տնտեսության պետական կարգավորման նոր դասական տեսությունը, որն ունի երկու ուղղություն՝ առաջարկի տնտեսության տեսություն և մոնետարիզմ:

Ազատ մրցակցության և բնական առավելության վրա հիմնված նոր դասական տեսության առաջարկի տնտեսության ուղղությունը ձևավորվել է 20-րդ դարի 70-ական թվականներին Ռ. Լուկասի և այլ հեղինակների «Ռացիոնալ սպասումների» տեսության մշակումները: Այս տեսությունը ելնում է պահանջարկի վրա ֆինանսական և դրամավարկային քաղաքականության անբավարար ազդեցությունից և անհրաժեշտ պայման է համարվում առաջարկի վրա ազդող նպատակաուղղված գործունեությունը: Առաջարկի խթանման տիպիկ միջոց է եկամտահարկի կրճատումը, որն իջեցնում է արտադրական ծախսերը, հնարավորություն է տալիս նպաստելու աշխատավարձի բարձրացմանը: 1980-ական թվականներին այս տեսությունը զարգացվեց ԱՄՆ-ում Մ. Բերնսի, Գ. Սթայնի և Ա. Լաֆֆերի կողմից, որոնք տնտեսական աճի կարևորագույն պայման առանձնացրեցին խնայողությունները և կուտակումները:¹²⁹

Նոր դասական տեսության մյուս ուղղությունը մոնետարիզմի տեսությունն է, որը մշակվել է Չիկագոյի համալսարանի պրոֆեսոր Մ. Ֆրիդմենի կողմից: Այս

¹²⁸ Кейнс Дж. М. Общая теория занятости, процента и денег. М., Гелиос АРВ, 2002, էջ 145-150

¹²⁹ Ядгаров Я.С. История экономических учений. 4-е изд., перераб. и доп. - М.: М, 2009, էջ 102

ուղղություն ներկայացուցիչները կարևորում էին պետության կարգավորիչ դերը: Բայց ի տարբերություն քեյնսյան տեսության, մոնետարիզմի տեսությունը պետության կարգավորիչ դերը սահմանափակում է միայն այն գործունեությամբ, որը բացի նրանից, ոչ ոք չի կարող իրագործել: Նրանց կողմից որպես այդպիսի գործունեություն է դիտարկվում շրջանառության մեջ փողի զանգվածի կարգավորումը: Ընդ որում՝ մոնետարիստները շրջանառության մեջ փողի զանգվածի կարգավորման գործառույթը պետությանն են վերապահում այն պատճառով, որ պետությունը յուրաքանչյուր տարի ավելացնում է իր ծախսերը՝ առաջ բերելով գնաճի լրացուցիչ աճ, որի արդյունքում շրջանառությունում առաջանում է փողի ավելցուկային ծավալ: Համաձայն մոնետարիզմի տեսության՝ փողի ավելցուկային ծավալը շրջանառությունից կարող է հանել միայն պետությունը եթե ոչ փոխառությունների, ապա հարկերի օգնությամբ: Առաջարկի տեսության ներկայացուցիչների նման՝ մոնետարիստները նույնպես կողմնակից են հարկադրույքների նվազեցմանը, ընկերություններին ու շուկայում սպառողական պահանջարկը ձևավորող բնակչությանը հարկային արտոնությունների տրամադրմանը:¹³⁰

Փաստորեն, տնտեսության պետական կարգավորման բոլոր տեսությունները հարկային քաղաքականությունը քննարկում են տնտեսական աճի տեսանկյունից: Այսպիսով, տնտեսական բարդ փոխհարաբերությունների ներքին օրինաչափությունների բազմակողմանի վերլուծությունների արդյունքում տնտեսության պետական կարգավորման ձևավորված տեսությունների ողջ տրամաբանությունը հանգեցվում է այն ճշմարտությանը, որ շուկայական մոդելի արդյունավետությունը մեծացնելու և շուկայական իշխանության չարաշահումները սանձելու համար անհրաժեշտ է մի շարք լծակների օգտագործման միջոցով ազդել դրանց վրա, ինչը նշանակում է, որ գործարարության և ձեռնարկատիրության պետական կարգավորումը դառնում է անխուսափելի:

Ժամանակակից պայմաններում փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության բացակայությունը էապես խոչընդոտում է պետության հետագա

¹³⁰ Ядгаров Я.С. История экономических учений. 4-е изд., перераб. и доп. - М.: М, 2009, էջ 124-128

զարգացման ընթացքը: Սակայն, միևնույն ժամանակ՝ պետական չափից ավելի շատ միջամտությունը վերոհիշյալ գործընթացին ևս դրական միտումներ չի հաղորդում:

Աշխարհի տարբեր երկրներում ՓՄՁ պետական կարգավորման և օժանդակության քաղաքականությունը մեծապես պայմանավորված է մի շարք գործոններով, ինչպես օրինակ՝ տվյալ երկրի արտադրողական ռեսուրսների առկայությամբ, տնտեսական գործընթացներին ՓՄՁ-ի իրական մասնակցության աստիճանով, ՓՄՁ-ի գործնականով և այլն: ՓՄՁ պետական կարգավորման լավագույն փորձը ներկայումս առկա է ԱՄՆ-ում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Ճապոնիայում:¹³¹ Դա պայմանավորված է, նախևառաջ՝

✚ հստակ օրենսդրական բազայի առկայությամբ:

Օրինակ ԱՄՆ-ում վերջին 40 տարվա ընթացքում ընդունվել են ՓՄՁ աջակցության 8 օրենք, իսկ նախասկզբնական օրենքներն ընդունվել են դեռևս 20-րդ դարի 50-ական թվականներին՝ «Փոքր գործարարության մասին օրենք» /1953թ./, «Փոքր տնտեսության ներդրումների մասին օրենք» /1958թ./ և այլն: Ճապոնիայում ՓՄՁ հիմնական օրենքն ընդունվել է 1963թ., իսկ Գերմանիայում՝ 1957թ.:

✚ պետության հզոր ֆինանսական աջակցության կառուցակարգերի առկայությամբ:

Այսպես օրինակ՝ 2014թ. ՓՄՁ պահպանության պետական ծախսերը ԱՄՆ-ում կազմել են ավելի քան 38,8 մլրդ ԱՄՆ դոլար, Ճապոնիայում՝ 41.4 մլրդ ԱՄՆ դոլար, Գերմանիայում՝ 78,6 մլրդ ԱՄՆ դոլար, Ֆրանսիայում՝ 34,6 մլրդ ԱՄՆ դոլար:¹³²

ՀՀ-ում ՓՄՁ զարգացման քաղաքականությունն ուղղված է տնտեսական, սոցիալական և քաղաքական զարգացման գործում ՓՄՁ ոլորտի ներուժի լիարժեք օգտագործմանն ու նրա դերի բարձրացմանը: Այս քաղաքականության հիմնարար փաստաթղթերից է հանդիսանում ՀՀ կառավարության կողմից 2000թ. օգոստոսին ընդունված «Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման քաղաքականության և ռազմավարության հիմնադրույթները», որտեղ ներկայացված են ՓՄՁ զարգացման պետական քաղաքականության տնտեսական, սոցիալական և քաղաքական նպատակներն ու նրանց իրագործման հիմնական ուղղությունները:

¹³¹ Предпринимательство: учеб. / под редакцией В.Я. Горфинкеля, Г.Б. Поляка, В.А. Швандара. – М.: ЮНИТИ-ДАНА, 2011, էջ 344

¹³² http://tourlib.net/books_tourism/borodina1.htm

Վերոհիշյալ փաստաթղթի ընդունումը նախապայմաններ ստեղծեց «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի ընդունման համար, որն առաջին անգամ սահմանեց Հայաստանի Հանրապետությունում ՓՄՁ սուբյեկտների չափորոշիչները և ՓՄՁ պետական աջակցության հիմնական ուղղությունները:

2001թ. ի վեր երկրում մշակվում և իրականացվում են ՓՄՁ պետական աջակցության տարեկան ծրագրեր, որոնք նպատակաուղղված են իրականացնելու «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով ամրագրված ՓՄՁ ոլորտի պետական աջակցության հիմնական ուղղությունները:

ՓՄՁ զարգացման քաղաքականության և ռազմավարության մշակման գործառույթները վերապահված են ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը, որը հանդիսանում է նաև ՓՄՁ ոլորտի պետական աջակցության ծրագրերի մշակման համար պատասխանատու կառույց:

ՓՄՁ պետական աջակցության 2002թ. ծրագրի շրջանակներում, որպես ծրագրային միջոցառում, ՀՀ կառավարության 19.03.2002թ. N282 որոշմամբ հիմնադրվեց «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամը (Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ), որը հանդիսանում է Հայաստանում ՓՄՁ ոլորտի պետական քաղաքականություն և ոլորտի զարգացմանն ուղղված ծրագրեր իրականացնող հիմնական կառույցը:

Հայաստանում ՓՄՁ աջակցության ժամանակակից ենթակառուցվածքները և գործուն մեխանիզմներն անհրաժեշտ նախապայմաններ են ստեղծել ՓՄՁ հեռանկարային զարգացման համար՝ ուղղված գիտատար և նորարարական արտադրությունների աջակցմանը, տեխնոլոգիաների փոխանցման համար նպաստավոր պայմանների ձևավորմանը և ՓՄՁ սուբյեկտների արտաքին տնտեսական գործունեության ընդլայնմանը:¹³³

Ելնելով հանրապետությունում արդեն իսկ ձևավորված պրակտիկայից, ՓՄՁ պետական կարգավորման կատարելագործման նպատակով առանձնացնենք այն

¹³³ http://smednc.am/am/content/sme_state_support/

առանքային միտումներն ու կառուցակարգերը, որոնք էապես կարող են նպաստել ՓՄՁ ոլորտի հետագա զարգացմանն ու բարգավաճմանը:

1. Ձեռնարկատիրական գործունեության նկատմամբ վարչակազմակերպական ներգործության թուլացում և տնտեսական ազատության տրամադրում:

Փորձենք այս առաջարկությունը հիմնավորել միջազգային գործնականով: Այսպես, ոչ վաղ անցյալում ԱՄՆ փոքր ձեռնարկությունների կտրուկ աճը նախորդեց պետական միջամտության կրճատումը: Այսօր առավելապես հեշտացվել է նոր փոքր ձեռնարկությունների գրանցման գործընթացը, որը տևում է ընդամենը 1 օր՝ 5-10 ԱՄՆ դոլար արժողությամբ պարտադիր վճարումներով:¹³⁴

Ֆրանսիայում առ այսօր հաջողությամբ գործում է վարչապետի վերահսկողության ներքո գտնվող ՓՄՁ ստեղծման ու գրանցման դյուրինացմանը նպաստող օրենքների նախագծերի մշակման Հանձնաժողովը:¹³⁵

Ավստրալիայում, ի տարբերություն այլ երկրների, ՓՄՁ ոլորտի կարգավորման գործընթացում հաջողությամբ գործում է «քիչ կարգավորել» կարգախոսը:

Գերմանիայում պետությունը կարող է միջամտել ՓՄՁ գործունեությանը միայն այն դեպքում, եթե մասնավոր հատվածն ի վիճակի չէ արդյունավետորեն լուծել այդ ոլորտում առկա հիմնախնդիրները:¹³⁶

Այս տեսանկյունից՝ ՀՀ-ում ՓՄՁ գործունեության նկատմամբ վարչակազմակերպական ներգործության թուլացումն ու տնտեսավարող սուբյեկտներին տնտեսական ազատության տրամադրումը էապես կնպաստի ոլորտի հետագա բարգավաճմանը:

2. Ձեռնարկատիրական գործունեության օժանդակության բազմատեսակացումը (դիվերսիֆիկացումը):

Մինչև այս գործընթացի կարևորության հիմնավորումը՝ անդրադառնանք միջազգային պրակտիկային:

Հարկային քաղաքականությունը՝ որպես ՓՄՁ գործունեության խթանման գործոն, արդյունավետորեն գործում է Ֆրանսիայում, Մեծ Բրիտանիայում և Գերմանիայում: Փոքր և միջին ձեռնարկություններին ֆինանսական օգնությունը տրամա-

¹³⁴ Индивидуальный предприниматель: практическое руководство. Под общей ред. Ю.Л.Фадеева. – М.: Эксмо, 2015, էջ 86

¹³⁵ <http://i-riviera.com/content/166/>

¹³⁶ Индивидуальный предприниматель: практическое руководство. Под общей ред. Ю.Л.Фадеева. – М.: Эксмо, 2015, էջ 92-93

դրվում է սուբսիդիաների, ինչպես նաև երաշխիքային փոխաստվությունների և դոտացիաների տեսքով:

ԱՄՆ-ում լայն տարածում է ստացել, այսպես կոչված, «բիզնես ինկուբատորները» և տեխնոպարկերը, որոնք առաջին հերթին օժանդակում են նոր ձեռնարկությունների ստեղծմանը: Եվ, ընդհանուր առմամբ, ԱՄՆ-ում ողջունվում է ձեռնարկատիրական գործունեության պետական կարգավորումը միայն այն դեպքում, եթե դա համապատասխանում է հասարակության, այլ ոչ թե՛ առանձին անհատների շահերին:¹³⁷

Նշենք, որ միջազգային հարթակում լայնորեն ընդունված է, որ ՓՄՁ-ների խթանումը առանցքային նշանակություն ունի մրցունակության բարձրացման և նոր արժեքի ստեղծման առումով, ինչպես նաև ազգային և տեղական մրցակցային առավելությունների զարգացման առումով: Այնուամենայնիվ, վերջին երկու տասնամյակում ՀՀ տնտեսավարման պրակտիկայում պարզ դարձավ նաև այն, որ միայն ՓՄՁ քաղաքականությունների մշակումը բավարար չէ երկրի կամ մարզի մրցունակության ամրապնդման համար: Ավելին՝ ՓՄՁ-ների տարբերակված առողջ խառնուրդը, կլաստերային և նորարարության խթանման գործունեությունը, ընտրովի արդյունաբերական քաղաքականության նախաձեռնությունները, ներքևից վերև և վերևից ներքև մոտեցումները, ինչպես նաև մրցունակության հնարավորություն ընձեռող գործոնները, ինչպիսիք են կազմակերպչական և կառուցվածքային նախադրյալները, անհրաժեշտ են կայուն աճ և հավելյալ արժեքով արտադրություն ունենալու համար:

Այդ իսկ պատճառով ՓՄՁ գործունեության օժանդակության նպատակով ՀՀ-ում անհրաժեշտ է իրականացնել՝

- հարկային արտոնությունների տրամադրում,
- միջնաժամկետ և երկարաժամկետ վարկավորման արտոնյալ պայմաններ,
- վարկերի ապահովագրության պարզեցված համակարգ՝ սկսնակ գործարարների և ձեռնարկատերերի համար,

¹³⁷ Индивидуальный предприниматель: практическое руководство. Под общей ред. Ю.Л.Фадеева. – М.: Эксмо, 2015, էջ 100

● բարենպաստ իրավական միջավայրի ձևավորում և այլն:

«Փոքրը գեղեցիկ է» սահմանումը դարձավ տարածված արտահայտություն՝ ընդգծելով ՓՄՁ-ների ճկուն հնարավորությունները՝ հարմարվելու նոր շուկաներին և արագ փոխելու արտադրական գործընթացները:¹³⁸

3. Ձեռնարկատիրական գործունեության կարգավորման պետական որոշ գործառույթների տրամադրում ինքնակարգավորվող կազմակերպություններին:

Այսպես, ուսումնասիրելով անցյալի միջազգային փորձը, դառնում է ակնհայտ, որ այս ընթացակարգը շատ կարևոր է հատկապես ժամանակակից տնտեսավարման պրակտիկայում: ԱՄՆ-ում դեռևս 1889թ. Կոնգրեսի կողմից ստեղծվեց առաջին ինքնակարգավորվող կազմակերպությունը՝ Միջհամայնքային առևտրական հանձնաժողովը: Երկրների մեծ մասում ներկայումս գործում են ՓՄՁ ոլորտը կարգավորող մի շարք ինքնակարգավորող կազմակերպություններ, որոնք հանդես են գալիս որպես միջնորդ ՓՄՁ և պետական կառույցների միջև:

Հայաստանում ՓՄՁ-ի զարգացման և աջակցության ուղղությամբ իրականացվող պետական քաղաքականության էական ձեռքբերումներից է երկրում ՓՄՁ-ի զարգացման ու պետական աջակցության ծրագրերն իրականացնող հիմնական կառույցի՝ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի ստեղծումն ու կայացումը՝ Երևան քաղաքում գործող կենտրոնական գրասենյակով և Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում գործող մարզային մասնաճյուղերով (առանձին մարզերում՝ նաև ներկայացուցչություններով): Սակայն անհրաժեշտ է էապես մեծացնել այս կառույցի կազմակերպական լիազորությունների շրջանակը, իսկ որպես կառույցի առաքելություն՝ անհրաժեշտ է սահմանել գործարար միջավայրի բարելավմանը զուգընթաց գործող և սկսնակ ՓՄՁ-ի սուբյեկտների ձեռներեցությամբ զբաղվելու հնարավորությունների ընդլայնումը, աջակցության նոր կառուցակարգերի կիրառմամբ ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության գործող համակարգից աջակցության նոր համակարգին անցման նախապատրաստումը և իրականացումը, ինչը կնպաստի ՓՄՁ-ի սուբյեկտների պետական աջակցության արդյունավետության բարձրացմանը:

¹³⁸ <http://www.rdfund.org/sites/default/files/SME%20strategy%202015%20-%202017.pdf>

4. **Սպառողների իրավունքների և շահերի պաշտպանության համակարգի կատարելագործման անհրաժեշտությունը:**

Սպառողների իրավունքների և շահերի պաշտպանության համակարգն իր մեջ ներառում է ոչ միայն դատական ինստիտուտները, այլ նաև վարչական և հասարակական կազմակերպությունները, որոնք էապես օժանդակում են սպառողներին իրենց իրավունքների պաշտպանության տեսանկյունից:

Սպառողների իրավունքների պաշտպանությունը համակարգ է, որում պետական և հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող գործողությունները միտված են սպառողի և տնտեսվարող սուբյեկտի միջև իրավահարաբերությունների կարգավորմանը: 1962 թ.-ի մարտի 15-ին ԱՄՆ նախագահ Ջոն Բենեդիկտ ընդունեց օրինագիծ սպառողների իրավունքների մասին, որով սպառողի տեղեկացված լինելու և ազատ ընտրության իրավունքից զատ սահմանվեց նաև սպառողի լսելի լինելու իրավունքը և, ԱՄՆ Կոնգրեսի իր ելույթում առաջին անգամ բնորոշելով «սպառող» հասկացությունը, սահմանեց սպառողի 6 հիմնական իրավունքները՝

- Տեղեկացված լինելու իրավունք
- Անվտանգության իրավունք
- Ընտրության իրավունք
- Լսելի լինելու իրավունք
- Վնասի փոխհատուցման իրավունք
- Սպառողական ոլորտում կրթություն ստանալու իրավունք:¹³⁹

Հետագայում հենց այդ օրը՝ մարտի 15-ը, ընդունվեց որպես սպառողների իրավունքների պաշտպանության միջազգային օր: Ավելի ուշ, երբ ձևավորվեց սպառողների միությունների համաշխարհային կազմակերպությունը (Consumer International — CI), սպառողների իրավունքների ցանկը համալրվեց ևս երկուսով՝

- Հիմնական պահանջմունքների բավարարման իրավունք
- Առողջ շրջակա միջավայր ունենալու իրավունք:

¹³⁹ Предпринимательство: учеб. / под редакцией В.Я. Горфинкеля, Г.Б. Поляка, В.А. Швандара. – М.: ЮНИТИ-ДАНА, 2011, էջ 84

ՀՀ սպառողների իրավունքների պաշտպանությունն իրավական ուժ ստացավ 2001 թ. հունիսի 26-ին՝ Սպառողների իրավունքների պաշտպանության մասին ՀՀ օրենքի ընդունմամբ, չնայած նրան, որ դեռևս 1998 թ. ընդունված Քաղաքացիական օրենսգրքում առկա էին սպառողների իրավունքների պաշտպանությանն ուղղված որոշակի տարրեր: Այդ օրենքով սահմանվեցին և տարանջատվեցին ինչպես սպառողի իրավունքները, այնպես էլ նրանց պետական և հասարակական պաշտպանությունն ու ոլորտը վերահսկող պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների լիազորություններն ու պարտականությունները: Այսօր ՀՀ-ում գործում են սպառողների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ավելի քան 1 տասնյակ հասարակական կազմակերպություններ:¹⁴⁰

5. Գործարարության կորպորատիվ կուլտուրայի և էթիկայի կանոնների պահպանումը:

Երկրների մեծ մասում ներկայումս հաջողությամբ գործում են կորպորատիվ փիլիսոփայության և գործարար էթիկայի կանոններ ու սկզբունքներ և գնալով մեծանում է ձեռնարկատիրության սոցիալական պատասխանատվության ոլորտը:¹⁴¹ ՀՀ ՓՄՁ ղեկավարությունը պետք է քաջ գիտակցի, որ ուժը ծնում է պատասխանատվություն, և եթե ձեռնարկատիրությունը կամավոր հիմունքներով իր վրա չվերցնի սոցիալական որոշ պարտավորություններ, ապա նրանք դա կկատարեն հարկադրված՝ պետության և հասարակության կողմից:

¹⁴⁰ ՀՀ օրենքը Սպառողների իրավունքների պաշտպանության մասին /2001թ. հունիսի 26/:

¹⁴¹ Индивидуальный предприниматель: практическое руководство. Под общей ред. Ю.Л.Фадеева. – М.: Эксмо, 2010, էջ 84

3.2. Փոքր և միջին ձեռնարկատիրության արտահանման խրախուսման քաղաքականության բարելավման ուղիները

Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրատնտեսական քաղաքականությունը ձևավորվել և իրականացվում է ազատական սկզբունքների հիման վրա: Հայաստանը ընդգրկվել է տնտեսական ազատության բարձր մակարդակ ցուցաբերող երկրների ցանկի մեջ և 2011թ.-ին, առաջ մղվելով Ֆրանսիայից, զբաղեցրել է 38-րդ տեղը՝ համաձայն Wall Street Journal-ի և Heritage հիմնադրամի կողմից կատարված տարեկան ուսումնասիրության արդյունքների:¹⁴²

Արտաքին առևտրատնտեսական քաղաքականության գլխավոր և նախապատվելի ուղղություններն են՝ համաշխարհային տնտեսության մեջ Հայաստանի Հանրապետության ինտեգրումը, արտահանման խթանումը, ներդրումների ներգրավումը, արտաքին տնտեսական գործունեության զարգացման համար բարենպաստ միջավայրի ստեղծումը, առևտրային հաշվեկշռի բացասական մնացորդի կրճատումը, այլ երկրների հետ միջպետական տնտեսական համագործակցության ընդլայնումը, արտաքին առևտրատնտեսական գործունեության արդյունավետությունը բարձրացնող համապատասխան ենթակառուցվածքների զարգացումը և այլն:

Համաշխարհային տնտեսության մեջ ինտեգրման գործընթացի արագացման տեսանկյունից Հայաստանի Հանրապետության համար կարևորվում է բազմակողմ տնտեսական համագործակցության զարգացումը և որակական նոր հիմքերի վրա խորացումը, ինչպես ԱՊՀ շրջանակներում առանց հանումների ազատ առևտրի գոտու և ընդհանուր շուկայի ձևավորման գործում, այնպես էլ՝ դրա շրջանակներից դուրս: ՀՀ արտաքին առևտուրը կարգավորվում է վարչակարգով սահմանված օրենսդրական և նորմատիվ ակտերով, ինչպես նաև ՀՀ երկկողմանի և բազմակողմանի միջպետական և միջկառավարական համաձայնագրերով:

Առևտրի Համաշխարհային կազմակերպությունը միակ գլոբալ միջազգային կազմակերպությունն է, որը զբաղվում է ժողովուրդների միջև առևտրի կանոնների սահմանմամբ, որի նպատակն է օգնել ապրանքներ և ծառայություններ

¹⁴² <http://www.heritage.org/index/ranking>

արտադրողներին, արտահանողներին և ներմուծողներին իրականացնել իրենց բիզնեսը:¹⁴³

2002թ-ի նոյեմբերի 22-ին Աշխատանքային կուսակցությունը հավանություն տվեց Հայաստանի անդամակցության զեկույցին և փոխանցեց Հայաստանի դիմումը ԱՀԿ-ի Գլխավոր խորհուրդ: 2002թ-ի դեկտեմբերի 10-ին Գլխավոր խորհուրդը հաստատեց Հայաստանի ԱՀԿ-ին անդամակցելու դիմումը: Հայաստանը 2003թ-ի փետրվարի 5-ին պաշտոնապես դարձավ ԱՀԿ-ի 145-րդ անդամ:

Հարաբերությունները Եվրոմիության և Հայաստանի հանրապետության միջև, այդ թվում՝ առևտրատնտեսական ՓՄՁ համագործակցությունը կարգավորվում են Գործընկերության և Համագործակցության համաձայնագրով (ԳՀՀ):¹⁴⁴

Եվրոմիությունը և Հայաստանը ստորագրել են Գործընկերության և Համագործակցության համաձայնագիր, որը ուժի մեջ է մտել 1999թ-ի հուլիսի մեկից: Սույն համաձայնագրի ստորագրումը նոր էջ բացեց ԵՄ-Հայաստան համագործակցության համար: Համաձայնագիրը երկու կողմերի ցանկությունն էր հաստատել ավելի սերտ համագործակցություն և իրավական հիմք ստեղծել ամուր ու բազմակողմանի քաղաքական և տնտեսական համագործակցության համար: ԳՀՀ-ի հիմնական թիրախներն են՝

- ապահովել ԵՄ-Հայաստան համագործակցություն՝ զարգացնելով քաղաքական հարաբերությունները,
- ապահովել հարգանքը ժողովրդավարական սկզբունքների, օրենքի գերակայության, մարդու իրավունքների և շուկայական տնտեսության անցման նկատմամբ,
- խթանել երկու կողմերի միջև առևտրային կապերը, ինչպես նաև իրավական, սոցիալական, ֆինանսական, գիտական, քաղաքացիական և մշակութային հարաբերությունները և համագործակցությունը:

Եվրոպական Հարևանության քաղաքականության ներքո Հայաստանը ունի գործողությունների ծրագիր, որը նախատեսված է օգնելու ԵՄ-ի առևտրին և տնտեսությանը ավելի սերտ ինտեգրմանը: Գործողությունների ծրագրի իրականա-

¹⁴³ Предпринимательство: учеб. / под редакцией В.Я. Горфинкеля, Г.Б. Поляка, В.А. Швандара. – М.: ЮНИТИ-ДАНА, 2011, էջ 40

¹⁴⁴ http://archive-am.com/am/a/ada.am/2012-11-07_600070_46//

ցումը պետությանը նաև հնարավորություն կտա աստիճանաբար պատրաստ լինել բանակցել, իրականացնել և ԵՄ-ի հետ պահպանել հավակնոտ խորը և համապարփակ ազատ առևտրի գոտի: Խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի կնքումը պետք է հեշտացնի Հայաստանի մուտքը եվրոպական շուկա և խրախուսի հետագա եվրոպական ներդրումները Հայաստանում, առաջին հերթին՝ ՓՄՁ ոլորտում:

Հայաստանը ազատ առևտրի համաձայնագրեր ունի Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) երկրների հետ, բացառությամբ Ադրբեջանի և Ուզբեկստանի: Հայաստանը ազատ առևտրի ռեժիմով գործում է Բելառուսի, Վրաստանի, Մոլդովայի, Ղազախստանի, Ռուսաստանի Դաշնության, Ուկրաինայի, Տաջիկստանի և Ղրղզստանի Հանրապետության հետ: Այդ համաձայնագրերով նախատեսվում է փոխադարձ չկիրառվող մաքսատուրքերը և հարկերը:

Հայաստանը Ալբանիայի, Բուլղարիայի, Վրաստանի, Հունաստանի, Մոլդովայի, Ռումինիայի, Ռուսաստանի Դաշնության, Սերբիայի, Թուրքիայի և Ռեպուբլիկայի հետ մեկտեղ հանդիսանում է Սևծովյան Տնտեսական Համագործակցության անդամ: ՄԾՏՀ-ն բազմակողմ տնտեսական նախաձեռնության նպատակն է խրախուսել ՓՄՁ համագործակցությունը Սևծովյան տարածաշրջանում:

Բոլոր երեք հարավկովկասյան երկրները օգտվել են ԵՄ-ի Արտոնությունների ընդհանրացված և համալրված համակարգից: Համաձայն 2009թ-ի հունիսի 1-ից մինչ 2011թ-ի դեկտեմբերի 1-ը գործող ԱԸՀՀ կանոնակարգի, բոլորն էլ դասակարգվել են կայուն զարգացման և լավ կառավարման ցուցակում, որը նրանց առաջարկում է շահավետ մուտք գործել ԵՄ շուկա: ԵՄ-ի Արտոնությունների ընդհանրացված և համալրված համակարգը առևտրային պայմանավորվածություն է, որի միջոցով ԵՄ-ն 176 երկրներին և տածաշրջաններին Եվրոմիության շուկա արտոնյալ մուտք է տրամադրում՝ նվազեցնելով իրենց ապրանքների սակագները ԵՄ շուկա մուտք գործելիս: Չկա ոչ մի ակնկալիք կամ պահանջ, որը պետք է հատուցվի: Այն իրականացվում է Խորհրդի կանոնակարգով և կիրառելի է երեք տարի ժամկետով:¹⁴⁵

¹⁴⁵ <http://www.umba.am/hy/page.php?id=24>

Լրացուցիչ սակագների կրճատումներ առաջարկող Կայուն զարգացման և լավ կառավարման համաձայնագրի առանձնահատուկ նպատակն է աջակցել խոցելի զարգացող երկրներին այս ոլորտներում միջազգային կոնվենցիաների վավերացման և իրականացման գործընթացին: Հայաստանը ԱԸՀՀ-ի շահառու է 2009թ-ի հունվարի 1-ից մինչև 2011թ. վերջ: ԱԸՀՀ շահառուները պետք է նաև վավերացնեն և արդյունավտորեն կիրառեն մարդու իրավունքներին, աշխատանքային հիմնական չափանիշներին, կայուն զարգացման և լավ կառավարման բնագավառներին բնորոշ 27 միջազգային կոնվենցիաները:

Որոշ երկրների հետ առևտրային ռեժիմը որոշվում է երկկողմանի միջպետական համաձայնագրերով՝ ելնելով առևտրատնտեսական համագործակցության սկզբունքներից: Երկկողմ համագործակցության ոլորտում կարևորվում է գերակայությունների և երկրների այն նախապատվելի շրջանակի որոշումը, որոնց հետ հաստատված առևտրատնտեսական համագործակցության խորացումը առավել նպաստավոր կլինի Հայաստանի Հանրապետության համար: Դրանք են՝ Եվրոպական Միության երկրները, ԱՊՀ երկրները, ԱՄՆ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրները և այլն:

Այսպես, 1992թ. մայիսի 27-ին Հայաստանի Հանրապետության կառավարության և Եգիպտոսի Արաբական Հանրապետության կառավարության միջև Կահիրեում կնքվել է «Տնտեսական և գիտատեխնիկական համագործակցության մասին» համաձայնագիրը: Համաձայն նշված համաձայնագրի դրույթների՝ ՀՀ և ԵԱՀ միջև տնտեսական և գիտատեխնիկական համագործակցության զարգացման նպատակով 1993թ. մայիսի 24-ի N 222 որոշմամբ ստեղծվեց հայ-եգիպտական միջկառավարական հանձնաժողով, որի նպատակն է արդյունաբերության, գյուղատնտեսության, էներգետիկայի, հեռուստակապի, փոխադրումների, կրթության, սպորտի և այլ ոլորտներում համագործակցության ծրագրերի նախագծերի մշակումը, ինչպես նաև տեղեկատվության և խորհրդատվությունների տրամադրումը, համաձայնագրի դրույթների իրականացման գործընթացի վերահսկումը: Ստորագրվեցին նաև համագործակցության հինգ փաստաթղթեր, այդ թվում՝

- Փոխըմբռնման հուշագիր ԵԱՀ Կենտրոնական բանկի և ՀՀ Կենտրոնական բանկի միջև,
- Փոխըմբռնման հուշագիր Եգիպտոսի առևտրի պալատների միության և ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի միջև,
- Փոխըմբռնման հուշագիր ՀՀ բնապահպանության նախարարության և ԵԱՀ արդյունաբերության եւ տեխնոլոգիական զարգացման նախարարության միջև՝ երկրաբանության ոլորտում գիտական և տեխնիկական համագործակցության մասին,
- և այլն:¹⁴⁶

Տնտեսական համագործակցության հարցերով հայ-բելառուսական միջկառավարական համատեղ հանձնաժողովը հիմնվել է համաձայն «ՀՀ կառավարության եւ Բելառուսի Հանրապետության կառավարության միջև ազատ առևտրի մասին» համաձայնագրի:

Տնտեսական համագործակցության հարցերով հայ-ուկրաինական միջկառավարական համատեղ հանձնաժողովը հիմնվել է համաձայն «ՀՀ կառավարության եւ Ուկրաինայի կառավարության միջև ստորագրված ազատ առևտրի մասին» համաձայնագրի: 2002թ. փետրվարի 25-ին հաստատվել է հայ-ուկրաինական միջկառավարական համատեղ հանձնաժողովի հայկական մասի անհատական նոր կազմը: Դրանից հետո ձեռք են բերվել մի շարք պայմանավորվածություններ համագործակցության ուղղությունների վերաբերյալ: Մասնավորապես, քննարկվել են՝ հայ-ուկրաինական առևտրատնտեսական համագործակցության ներկա վիճակը, ՓՄՁ համագործակցության հնարավորությունները արդյունաբերության, տրանսպորտի, զբոսաշրջության, էներգետիկայի, հարկային և մաքսային, առողջապահության, գիտության և կրթության, մշակույթի բնագավառներում:¹⁴⁷

Հայ-ավստրիական միջկառավարական հանձնաժողովը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության և Ավստրիայի կառավարության միջև 1994թ. ապրիլի 26-ին կնքված երկկողմ արտաքին տնտեսական կապերի մասին Համաձայնագրի

¹⁴⁶ <http://www.concourt.am/armenian/decisions/common/2001/index.htm>

¹⁴⁷ <http://www.mineconomy.am/arm/137/1/news.more.html>

հիման վրա: Հանձնաժողովը քննարկման է ներկայացրել երկկողմ հետաքրքրություն ներկայացնող այնպիսի հարցեր, ինչպիսիք են երկկողմ առևտրի և տնտեսական համագործակցության վիճակը եւ հեռանկարները, ներդրումային համագործակցության հեռանկարները, երկկողմ իրավապայմանագրային բազայի հետագա զարգացումը, ՓՄՁ ոլորտի աջակցումը եւ այլն:¹⁴⁸

Աշխատանքներ են տարվում հանրապետության անմիջական հարևան Իրանի Իսլամական Հանրապետության հետ համագործակցությունը զարգացնելու ուղղությամբ՝ սկսած եռակողմ համագործակցությունից մինչև կողմերի ՓՄՁ սուբյեկտների համար սահմանամերձ առևտրի կազմակերպման համար բարենպաստ միջավայրի ստեղծում:

Վերը նշված երկրները Հայաստանի առևտրային հիմնական գործընկերներն են: Վերջին տարիներին առևտրի ծավալների մակարդակով դրանց մոտեցել են ևս մի քանիսը:

2014թ. մայիսի 29-ին Աստանայում Ռուսաստանի Դաշնության, Բելոռուսի և Ղազախստանի կողմից ստորագրվեց Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագիր, որի շրջանակներում ապահովվում է ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի շարժի ազատությունը, համակարգված միասնական քաղաքականության իրականացումը մի շարք, այդ թվում՝ ՓՄՁ ոլորտներում:¹⁴⁹

2014 թվականի հոկտեմբերի 10-ին ԵԱՏՄ անդամ-պետությունների ղեկավարները մի կողմից և ՀՀ նախագահը՝ մյուս կողմից ստորագրեցին ԵԱՏՄ-ին ՀՀ անդամակցության մասին պայմանագիր: Հայաստանի Հանրապետությունը Եվրասիական Տնտեսական Միությանը 2015 թվականի վերջին անդամակցելուց հետո ներկայացված կլինի ԵԱՏՄ Կոլեգիալ մարմնում երեք անդամներով, որոնք կունենան մեկ ձայն: Հայաստանի ներկայացուցուցիչները ձայն չեն ունենալու: Նման նորմ է պարունակվում հոկտեմբերի 11-ին ԵԱՏՄ կայքում տեղակայված Հայաստանի ԵԱՏՄ-ին անդամակցելու մասին պայմանագրում:¹⁵⁰

Հայաստանի առաջատար գործընկերը շարունակում է մնալ Ռուսաստանը, բայց ի տարբերություն 90-ական թվականների սկզբներին, Հայաստան-Ռուսաստան

¹⁴⁸ <http://www.mfe.am/index.php?hdr=157&lang=1>

¹⁴⁹ <http://www.mineconomy.am/uploads/20142811172603816.pdf>

¹⁵⁰ <https://hy.wikipedia.org/wiki>

ապրանքաշրջանառությունը իջել է նվազագույն մակարդակի: Բացի Թուրքմենստանից, մնացած պետությունների հետ ՀՀ առևտրային հաշվեկշիռը եղել և մնում է բացասական:

Ընդհանուր առմամբ, Հայաստանում արտահանումը ունի աճելու միտում, ինչը վկայում է ներքոհիշյալ աղյուսակը:

Աղյուսակ 18. Արտահանումը ՀՀ-ում, մլն. ԱՄՆ դոլար*

Թվական	բացարձակ արժեք	Նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ (%)
2015	1486.9	96.1
2014	1547.3	104.6
2013	1478.7	107.1
2012	1380.2	103.4
2011	1334.3	128.2
2010	1041.1	146.6
2009	710.2	67.2
2008	1057.2	91.7
2007	1152.3	117
2006	985.1	101.1
2005	973.9	134.7
2004	722.9	105.4
2003	685.6	135.7
2002	505.2	147.8
2001	341.8	113.8
2000	300.5	129.7

*Աղբյուրը՝ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայքէջ՝ <http://armstat.am/am/?nid=126&id=10003>

ՀՀ արտահանմանն ուղղված ՓՄՁ քաղաքականությունն արտահանման զարգացման ներուժ ունեցող ոլորտների միջազգային մրցունակության բարձրացմանն ուղղված հավասարակշռված և փուլային միջոցառումների համախումբ է, որը նպատակադրում է արտահանման աճը և դիվերսիֆիկացիան:¹⁵¹

Հայաստանը փոքր երկիր է, բնականաբար նրա արտադրության ծավալներն էլ են փոքր, հետևաբար արտադրանքի ինքնարժեքը բարձր է՝ հատկապես մանր և միջին բիզնեսի արտադրանքի: Այդ առումով անհրաժեշտ է իրականացնել

¹⁵¹ <http://umba.am/pics/razm.pdf>

մաքսային ավելի ճկուն քաղաքականություն: Մյուս կողմից, կառավարությունը պետք է օժանդակի սննդարդյունաբերական ու գյուղատնտեսական վերամշակող ՓՄՁ օբյեկտների ձևավորմանը՝ տրամադրելով նյութական ու ֆինանսական օգնություն, ներդրումների հոսքն ուղղելով հատկապես այդ ուղղությամբ: Եվ երրորդ՝ պետությունը պետք է ամեն կերպ օժանդակի պատրաստի սննդի, բուսական ու կենդանական ծագման ապրանքների արտահանմանը՝ ընդհուպ մեղմելով դրանցով զբաղվող ընկերությունների հարկային պարտավորությունները, քանի որ դրանք մանր և միջին ձեռնարկատիրության կողմից արտադրվող այն ապրանքախմբերն են, որոնց պոտենցիալը Հայաստանում ապրող բնակչության առումով հսկայական է, և հանրապետությունը դրանց մեծ ավելցուկ ունի ու կարող է դուրս գալ արտաքին շուկա:

ՀՀ արտաքին առևտուրը վերջին 10 տարում էական զարգացում չի ապրել: Այս բոլոր 10 տարիներին ՀՀ-ն վաճառել է հիմնականում թանկարժեք և կիսաթանկարժեք մետաղներ, ադամանդ, ոչ թանկարժեք մետաղներ, մեքենաներ և սարքավորումներ: Համաձայն պաշտոնական վիճակագրության, 7-8 տարի առաջ սկսված կապիտալ ապրանքների և արդյունաբերական պաշարների /և ոչ ապրանքների/ արտահանումը ոչ միայն տարեցտարի չի նվազել, չի փոխարինվել արդյունաբերական պատրաստի արտադրանքի արտահանմամբ, այլև որոշակի տատանումներով շարունակել է աճել: Սա շատ թույլ տնտեսության ու չկայացած արդյունաբերության արդյունք է: Այդ ընթացքում առևտրային բացասական սալդոյի հետևանքով ՀՀ-ից դուրս է բերվել 5 մլրդ. դոլար, ինչը միջին հաշվով կազմում է տարեկան 600-700 հազ. դոլար, որը 1.5-2 անգամ գերազանցում է ՀՀ տարեկան բյուջեն: Որքան էլ ցավալի է, արտաքին առևտրի բացասական հաշվեկշռի ուղիղ կեսը ձևավորվել է վերջին 4 տարիներին:¹⁵²

ՀՀ արտաքին առևտուրը գործում է «հումք՝ սննդի ու առաջին անհրաժեշտության ապրանքների դիմաց» սկզբունքով: Իսկ, ինչպես հայտնի է, հումքի աղբյուրներն անսպառ չեն:

Այս ամենից կարելի է եզրակացնել, որ շատ թույլ են գործում արտահանման աջակցմանն ուղղված կառույցները՝ ի դեմս Զարգացման Հայկական Գործակա-

¹⁵² <http://umba.am/pics/razm.pdf>

լության, որոնք կարող են էականորեն նպաստել արտահանվող ապրանքների ինչպես ծավալների ավելացմանը, այնպես էլ կազմի ու կառուցվածքի փոփոխությանը՝ հնարավորություններ ստեղծելով փոքր և միջին ձեռնարկատիրության կողմից արտադրվող ապրանքները արտահանվող ապրանքների ցանկում ընգրկելու: Այս գործում օգնելու մեծ հնարավորություն ունեն նաև արտասահմանում հայկական դեսպանատները:

Մի շարք վերլուծությունների արդյունքների համաձայն՝ առաջիկա 3 տարում ՀՀ արտաքին առևտրում սպասվում է արտահանման շուրջ 10% և ներմուծման 7.3% աճ: Դա նշանակում է բացասական հաշվեկշռի մեծացում, ինչը տնտեսության պատասխանատուներին պետք է մտածելու տեղիք տա:

Ստեղծված իրավիճակից դուրս գալու ուղին բարեփոխումներն են տնտեսությունում, որոնք պետք է նպատակաուղղվեն ազգային հարստության արդյունավետ տնօրինմանը և օգտագործմանը: Այդ իմաստով, Հայաստանի Հանրապետության նման բաց երկրի համար արտահանման ընդլայնումն ու զարգացումը դառնում է գրեթե այլընտրանք չունեցող շարժիչ ուժ:

Այսպիսով, դեպի զարգացում անցումն ապահովելու, ստեղծված իրավիճակում բեկում մտցնելու ՀՀ կառավարության ծրագրային խնդիրների շարքում արտաքին առևտրի ընդլայնումն ու խթանումը պետք է դիտվի՝ որպես հասարակության սոցիալական առաջընթացի իրական երաշխիք, մակրոտնտեսական կայունացման ու զարգացման բազային պարամետր: Իրականացվող ծրագրերի արդյունքում կավելանա նաև մանր և միջին բիզնեսի արտաքին առևտրում ներգրավվածությունը:

Փոքր և միջին բիզնեսի արտահանման ծավալների ընդլայնման ու խթանման ծրագրի մշակումն ու գործադրումը պահանջում է հետևյալ 3 հիմնախնդիրների լուծումը.

1. ՀՀ փոքր և միջին բիզնեսի արտահանման ներուժի բացահայտումը:

Արտահանման ներուժը պիտի ներառի ապրանքների ու ծառայությունների այն ցանկը, որը հիմնավորվելու է ՀՀ բացարձակ և հարաբերական առավելությունների գերակայություններով, դրանք իրացնելու հնարավորությունների և ուղիների նախանշումով /ըստ տեսականու, ծավալների ժամկետի, իրացման շուկաների գնահատումով և այլն/: Նշենք, որ հանրապետությունում այս ուղղությամբ որոշ

աշխատանքներ տարվում են: Մասնավորապես, Ջարգացման Հայկական Գործակալությունը իրականացնում է «Արտահանման ու զարգացման» ծրագիրը:

2. ՀՀ փոքր և միջին ձեռնարկատիրության արտահանման ներուժի գործադրման խթանումը:

Արտահանման գործընթացին ՀՀ կառավարության աջակցությունը պետք է ներառի ներուժի ինստիտուցիոնալ բարեփոխումներ և ռեսուրսային վերահսկում /ըստ ներագդման բոլոր հնարավոր լծակների ու մեխանիզմի մատնանշման՝ վարկային, հարկային, բանկային, արտոնագրային և այլն/: Ծրագրի մշակումից հետո անհրաժեշտ է ապահովել ծրագրի իրականացման նախադրյալները ստորև բերված խնդիրների ու միջոցառումների տեսքով.

- ✓ արտահանմանը խոչընդոտող վարչարարական ու տեխնիկական արգելքների վերացում. մաքսային արարողակարգի պարզեցում և ստանդարտացման համակարգի բարելավում,
- ✓ արտահանման ընդլայնման և զարգացման ենթակառուցվածքների ձևավորում և գործունեության համակարգում. արտահանման ապահովագրման գործակալության լիազորությունների ընդարձակում, արտաքին շուկաների ուսումնասիրություն, առևտրային պայմանագրերի նախագծերի մշակում, տեղեկատվական ու գովազդային ծառայությունների տրամադրում, էլեկտրոնային առևտրի հայտերի կազմում, միջազգային ցուցահանդեսների ու տոնավաճառների, գործարար համաժողովների կազմակերպում,
- ✓ արտաքին առևտրի ֆինանսավորման ու ապահովագրման համակարգի կատարելագործում,
- ✓ ՀՀ-ում արտահանման-ներմուծման ապահովագրական բանկի /EximBank/ ստեղծում,
- ✓ արտահանման արտադրական ենթակառուցվածքների աշխատանքի՝ այդ թվում լիզինգային գործունեության համակարգի զարգացում, մասնավորապես, տրանսպորտային, կապի, պահեստավորման, փաթեթավորման, սառնարանային, որակի ստուգման և այլ ծառայությունների ստեղծում, կատարելագործում և համակարգում,

- ✓ տեղեկատվական համակարգերի ձևավորում, ինչպես նաև տեխնիկական և խորհրդատվական ծառայությունների տրամադրման համակարգի կատարելագործում. ինտերնետ և այլ տեղեկատվական համակարգերի համատարած ներդրում, խորհրդատվական ընկերությունների աջակցում,
- ✓ մարդկային ռեսուրսների զարգացում. մենեջերների, կոնստրուկտորների, դիզայներների, որակի ապահովման, մարքետինգի և այլ մասնագետների պատրաստում և վերապատրաստում,
- ✓ արտերկրում ՀՀ առևտրային ներկայացուցչության /կցորդների/ ինստիտուտի ստեղծում և այլն:

3. Փոքր և միջին ձեռնարկատիրության արտահանման ընդլայնման և խթանման աշխատանքների կազմակերպումը:

Առաջադրվող խնդիրների համալիր լուծման նպատակով անհրաժեշտ է ստեղծել ծրագրի գիտագործնական ապահովման համապատասխան աշխատանքային խումբ:

Ծրագրի իրագործման վերջնականատակը բարենպաստ մթնոլորտի ստեղծումն է բոլոր տնտեսավարող սուբյեկտների համար, միակ պայմանը՝ արտահանման ուղղվածություն ունեցող արտադրությունների ու ծառայությունների առկայությունն է:

Ընդհանուր առմամբ, ՓՄՁ-ին միջազգային շուկա մուտք գործելու համար անհրաժեշտ է, որ կառավարությունը նախ՝ ներդնի միջազգայնորեն ճանաչված որակի երաշխավորման համակարգը (HACCR - Hazard Analysis & Critical Control):¹⁵³ Նման համակարգի բացակայությունը երկրում, և ապրանքի արտահանման դեպքում որակի նշանի բացակայությունը բերում են համաշխարհային շուկայում տվյալ ապրանքի նկատմամբ անվստահություն և դրան վերաբերվում են՝ որպես անորոշ ծագման արտադրանքի: Կառավարության անելիք այս քայլը պարտադիր անհրաժեշտություն է: Ուստի անհրաժեշտ է ընդունել մի շարք որոշումներ և համակարգը ներդնել Հայաստանում: Այն երկարատև գործընթաց է, որը պահանջում է ֆինանսական ներդրումներ անգամ արտադրողների կողմից: Բայց հիմնական դերը մնում է պետությանը: Այն պետք է լինի ոչ միայն օրենսդրական

¹⁵³ HACCR. A Practical Approach. Authors: Mortimore, Sara, Wallace, Carol

միջոցառում, այլ՝ լուրջ ծրագիր, որի հիմնական ծանրությունը պետք է կրի պետությունը:

Պետությունը պետք է արտոնություն տա և խրախուսի այն փոքր և միջին բիզնեսներին, որոնք փորձում են բարելավել իրենց կառավարման մակարդակը և մոտեցումները: Օրինակ, կառավարման մակարդակի բարելավման համար նախատեսված ծախսերը պիտք է ազատվեն բոլոր տեսակի հարկերից: Այդ ծախսերը պետք է ընդունվեն՝ որպես տնտեսության խրախուսման ծախսեր: Արտահանում իրականացնող փոքր և միջին բիզնեսները, կապված արտաքին շուկայի մարքեթինգի և մի շարք այլ խնդիրների հետ, կատարում են բավական մեծ ծախսեր: Պետությունը պետք է մշակի մի համակարգ արտահանող ընկերություններին ազատելու բոլոր նման ծախսերից: Մինչ արտահանումը կատարվող ծախսերը, որ բավականին մեծ են, աշխարհում մտնում են արտահանվող արտադրանքի ինքնարժեքի մեջ և չեն հարկվում, ինչը համարվում է պետության կողմից իրականացվող արտահանման խրախուսման միջոցառում: Հայաստանում այդ ծախսերը հարկվում են, ինչն ուղղակիորեն նշանակում է «խոչընդոտել արտահանումը»: Եվ եթե այսօր հայաստանյան փոքր և միջին բիզնեսների արտադրանքը որակական առումով լինի ամենալավը աշխարհում, միևնույն է՝ այն համաաշխարհային շուկայում տեղ չի ունենալու, քանի դեռ վերոնշյալ օրենսդրական, ստանդարտացման և կառավարման խնդիրները չեն բերվել միջազգային չափանիշների:¹⁵⁴

Եվ այսպես, ՀՀ արտաքին առևտրի զարգացման ընդհանուր միտումները բնութագրվում են որպես արտաքին առևտրային ներուժի անկազմակերպ և տարերային օգտագործման գործընթաց: Դրա ապացույցն է հանդիսանում արտաքին առևտրի ապրանքային կառուցվածքի վերլուծությունը, որոնք ցույց են տալիս, որ մեր երկրում վերջին տարիներին արտահանման ներուժը կենտրոնացել է հատկապես *ոսկերչության և ակնագործության* ոլորտում, քանի որ օտարերկրյա ներդրումները մեծամասամբ կենտրոնանում են հենց այս ոլորտներում: Սակայն

¹⁵⁴ ՓՄՁ քաղաքականության ինդեքս, Արևելյան գործընկեր երկրներ 2012: /2011-2012թթ. ընթացքում իրականացված «Տնտեսական քաղաքականության իրականացում» ծրագրի արդյունքում 2012թ. հոկտեմբերին հրատարակված աշխատություն., էջ 24

նշենք, որ օտարերկրյա ներդրումների համակենտրոնացումը ոսկերչության արտադրության ոլորտում, ի վերջո նշանակալից դեր չի կարող խաղալ մեր հանրապետության տնտեսական աճի և ազգային եկամտի ֆիզիկական ծավալի ավելացման առումով: Սա հիմնավորվում է այն փաստով, որ բարձրարժեք արտահանումը այս դեպքում չի նշանակում արտադրական հզորությունների ամբողջական օգտագործում: Բացի այդ վերջին տարիներին՝ կապված 2008-2009թթ. համաշխարհային ճգնաժամի հետ, համաշխարհային շուկայում թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի նկատմամբ պահանջարկը անկում է ապրել, և դա բնական երևույթ է: Եթե 2008թ. այս ճյուղը կազմում էր արտահանման 30%-ը, ապա 2010թ. նվազեց՝ հասնելով 14.8%-ի:¹⁵⁵ Միայն արտադրական հզորությունների ամբողջական օգտագործումը կտանի ցանկացած երկրի արտահանման ներուժի մեծացմանը, որի արդյունքում էլ կավելանան ներմուծումը վճարելու համար անհրաժեշտ վալյուտային մուտքերը: Այս տեսանկյունից ՀՀ տնտեսական աճի համար ավելի նախընտրելի է ավելացված մեծ արժեք պարունակող արտադրությունների զարգացումը:

Հանքահումքային ապրանքների արտահանումը պայմանավորված է հանքաքարի, խարամի և մոխիրի արտահանման աճով: Նշենք, որ ՀՀ մասնակցությունը աշխատանքի միջազգային բաժանմանը ունի հումքային ուղղվածություն, ինչը տեղիք է տալիս մասնագետների ոչ միանշանակ գնահատականների: Բանն այն է, որ հումքի գները համաշխարհային շուկայում ենթակա են նշանակալի տատանումների, սակայն մյուս կողմից էլ հումքի արտահանումից կորուստները այնքան մեծ չեն լինում, որ տանեն սոցիալ-տնտեսական ցնցումների, այս դեպքում ուղղակի դանդաղում է տնտեսական աճի տեմպը: Եթե հանքահումքային ապրանքների արտահանումը 2010թ. կազմում էր արտահանման 16.3%-ը, ապա 2015թ.՝ արդեն 17.8%-ը:

Ինչ վերաբերում է *քիմիական արտադրության ապրանքներին*, ապա այս ոլորտում վերջին տարիներին նկատվում է արտադրական ներուժի անկում, որն անվերապահորեն արտացոլվում է արտահանման ծավալների նվազման մեջ: Նույնը կարող ենք ասել նաև մեքենաշինության բնագավառի մասին: Միաժամանակ

¹⁵⁵ http://media.asue.am/upload/amberd_matenagrere/12_Tavadyan_nor_.pdf

չպետք է մոռանանք, որ քիմիական արդյունաբերությունն ու մեքենաշինությունը հանդիսանում են գիտատեխնիկական առաջադիմության կրողները, այս ճյուղերն են ապահովում ցանկացած երկրի գիտատեխնիկական առաջընթացը, ուստի այս ճյուղերի զարգացման մակարդակից է կախված այն, թե բնական հարուստ ռեսուրսներ չունեցող երկրները, ինչպես օրինակ Հայաստանի Հանրապետությունն է, կարող են բավարարել տնտեսության բազմաբնույթ պահանջները, որքանով երկրները կարող են ինքնապահովել արտադրության տեխնիկական և տեխնոլոգիական հագեցվածության մակարդակը՝ հրաժարվելով թանկ ապրանքների ներմուծումից:

Վերոնշյալ ոլորտները ներկայացնող ընկերությունները մտնում են ՀՀ-ի խոշոր բիզնեսների կազմի մեջ: Փոքր և միջին բիզնեսները ՀՀ-ում նշանակալի դեր ունեն և ներկայացնում են արտադրական և վերամշակող ձեռնարկությունները, արհեստները, մանրածախ և մեծածախ առևտուրը, ֆերմերային տնտեսությունները, ծառայությունների և սպասարկման ոլորտը: Քանի որ փոքր և միջին բիզնեսները յուրաքանչյուր երկրի տնտեսական և սոցիալական կայունության հիմնական երաշխիքն են, շատ կարևոր է վերջիններիս զարգացումն ու տարածումը, այդ թվում արտաքին առևտրին վերջիններիս մասնակցության շարունակական աճը: Մանր և միջին բիզնեսի մասնաբաժինը երկրի արտահանման ծավալում նախորդ տարիների համեմատ գրեթե չի փոխվել և, ըստ նախնական գնահատականների, 2011 թվականին կազմել է 17.9 տոկոս, իսկ ներմուծման ծավալում՝ 26.4 տոկոս¹⁵⁶: Անդրադառնանք այն ոլորտներին, որոնցում իրենց դերակատարումն ունեն նաև փոքր և միջին բիզնեսները: Դրանք են *սննդի արդյունաբերության ոլորտը և մանածագործական ապրանքների արտադրության ոլորտը*:

Սննդի արդյունաբերության ոլորտում վերջին տարիներին կատարված ներդրումները տարել են.

- ✓ դրանց արտադրության ծավալների ընդլայնմանը,
- ✓ շուկա են հանվել բարձրորակ և մրցունակ ապրանքների լայն տեսականի:

¹⁵⁶ Տե՛ս՝ ՓՈՔԲ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻՆ ԱՁԱԿՑՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐ

Բնակչության սպառման կառուցվածքում ավելացել են տեղական արտադրության ապրանքները, մասնավորապես՝ տեղական մթերքների, ոգելից և ոչ ոգելից խմիչքների, մրգերի ու բանջարեղենի, հյութերի, հրուշակեղենի, ծխախոտի և այլ մթերքների բաժինը: ՀՀ-ի արտահանման կառուցվածքում բավականին մեծ տեսակարար կշիռ ունի «Պատրաստի սննդի արտադրանքի» արտահանումը : Եթե 2008թ.արտահանվող սննդամթերքը կազմում էր արտահանման 10.9%ը, ապա 2011թ. 15.5%-ը: Սա արդեն վկայում է մեր երկրում սննդի արդյունաբերության ապրանքների համեմատական առավելությունների մասին:

ՀՀ-ի արտահանման կառուցվածքում *մանածագործական ապրանքների* շարքում մեծ տեսակարար կշիռ են զբաղեցնում տրիկոտաժե հագուստն ու հարակից իրերը, տեքստիլ հագուստն ու հարակից իրերը, այլ պատրաստի տեքստիլ իրերը, քիմիական թելերը և այլն:

Բնական է, որ որևէ երկիր չի կարող արտադրել այն բոլոր ապրանքները, որի նկատմամբ պահանջարկ գոյություն ունի տվյալ երկրի ներքին շուկայում և որոնց կարիքը հասարակությունն ունի, սակայն փաստ է, որ Հայաստանը նշված արտադրությունների զարգացման համեմատական առավելություններ ունի, ինչպես նաև պատմական ավանդույթներ:

Այսպիսով, ուսումնասիրելով ՀՀ արտաքին առևտրային շրջանառության վերլուծությունը՝ կարելի է եզրակացնել, որ երկիրը առավել մեծ չափով է մասնակցում միջազգային առևտրին և միջազգային փոխանակությանը, եթե այդ երկրի ներքին շուկայի ապրանքային հագեցվածության մակարդակը բարձր է: Եթե ներքին շուկայի պահանջները բավարարվում են ներմուծվող ապրանքների հաշվին, ապա տվյալ երկրի կախվածությունը համաշխարհայի տնտեսության սուբյեկտ հանդիսացող երկրներից, միջազգային կազմակերպություններից ավելի է մեծանում, որն արդեն իսկ կարող է սպառնալ երկրի տնտեսական անվտանգությանը: Իսկ ՀՀ-ում, չնայած վերջին տարիներին որոշ ներմուծվող ապրանքներ փոխարինվել են տեղական արտադրություն ապրանքներով, այնուհանդերձ, ներմուծվող ապրանքների շուրջ 25-30%-ն ուղղվում է անմիջական սպառմանը: Համաշխարհային շուկայի պահանջներին համապատասխանող ապրանքների առաջարկի ձևավորման ճանապարհով ներմուծման փոխարինման քաղաքականության

արմատավորումն ու արտահանման խթանումը, հատկապես փոքր և միջին բիզնեսի կողմից արտադրվող ապրանքների արտահանման խթանումը, հանդիսանում է ՀՀ տնտեսական աճի նախընտրելի ուղին: Սակայն առանց էական պետական աջակցության, այսօրվա պայմաններում, ՀՀ արտահանումը ո՛չ իր ծավալներով, և ո՛չ էլ կառուցվածքով չի կարող բավարարել գործընկեր երկրների հետ փոխշահավետ համագործակցության զարգացման պահանջները:

Հայաստանի ներքին շուկայի բավականին փոքր լինելու պայմաններում տնտեսության դինամիկ զարգացման հիմքը արտահանման ընդլայնումն է՝ նրա պետական խթանման ու աջակցման ճանապարհով: Եվ քանի որ տնտեսական և սոցիալական տեսանկյունից շատ կարևոր է մանր և միջին բիզնեսի տնտեսությունում ունեցած տեսակարար կշռի ավելացումը, այդ թվում վերջիններիս արտահանման ավելացումը, ապա պետք է շարունակական քայլեր ձեռնարկել փոքր և միջին բիզնեսի արտահանման խրախուսման ուղղությամբ:

Փոքր և միջին բիզնեսի արտահանման խրախուսման և աջակցման հիմնական ուղղությունները պետք է լինեն՝

- ազատական առևտրի ռեժիմի ձևավորումը և պահպանումը,
- արտահանումը արգելակող բոլոր տեսակի նորմատիվ, վարչական, տեխնիկական և այլ արգելքների վերացումը,
- արտահանման խթանման ենթակառուցվածքների ձևավորումը,
- արտերկրում ՀՀ առևտրական ներկայացուցչությունների ձևավորումը և արդյունավետ գործունեության ապահովումը,
- արտաքին շուկաների ուսումնասիրությունը (մարքեթինգ),
- տեղեկատվական համակարգերի ներդրումը և տեղեկատվական ծառայությունների մատուցումը,
- արտահանման ապահովագրական համակարգի ձևավորումը,
- տեխնիկական օգնության տրամադրումը (բիզնես ծրագրերի կազմում, պայմանագրերի, նախագծերի մշակում, օրենսդրական և հարկային համակարգերի տեղեկատվության տրամադրում, էլեկտրոնային առևտրի հայտերի կազմում),
- միջազգային ցուցահանդեսների և տոնավաճառների մասնակցության կազմակերպում և աջակցում,

- միջազգային գործարար համաժողովների (բիզնես ֆորումների) կազմակերպում,
- տնտեսական և իրավական բնույթի ամենատարբեր խորհրդատական ծառայությունների մատուցումը:

Շուկայական տնտեսությանն անցման տարիներին Հայաստանի տնտեսության շատ ճյուղերի ու կազմակերպությունների արտադրանքի արտահանումը կրել է տարերային բնույթ, և թեև Հայաստանի փոքր և միջին բիզնեսի արտահանողները օգտվում են ԱԱՀ-ից և արտահանման մաքսատուրքից ազատման արտոնությունից, այնուամենայնիվ, արտահանման խթանման նպատակային քաղաքականություն չի իրականացվել: Այդ նպատակով անհրաժեշտ է մշակել փոքր և միջին բիզնեսի արտահանման ռազմավարություն և դրա վրա հիմնված փոքր և միջին բիզնեսի արտահանման խրախուսման ծրագիր (ԱԽԾ): Ռազմավարության գլխավոր խնդիրը պետք է լինի Հայաստանի արտահանման ներուժի պահպանումն ու զարգացումը, արտահանման ծավալների ընդլայնումը և արտահանման կառուցվածքի օպտիմալացումը:

ԱԽԾ-ն պետք է նախատեսի միջոցառումներ, որոնք կնպաստեն Հայաստանում արտահանման նպատակային ոլորտների զարգացմանը: Այս միջոցառումները պետք է ունենան առավել հասցեական մոտեցում: Այս առումով նախ պետք է նպաստել, որպեսզի կառավարական և ոչ կառավարական ինստիտուտների կողմից պարբերաբար իրականացվեն.

- Հայաստանի ճյուղային և ռեսուրսային կառուցվածքի հետազոտություններ և ուսումնասիրություններ,
- համաշխարհային շուկայի ճյուղային զարգացման միտումների ուսումնասիրություններ,
- հեռանկարային ճյուղերի գնահատումներ և դրանց զարգացման հիմնախնդիրների վերլուծություններ,
- առանձին ճյուղերի ռազմավարական զարգացման ծրագրերի մշակումներ,
- տնտեսության ցանկալի ճյուղերի զարգացման և խթանման համար ինստիտուցիոնալ հիմքերի մշակումներ,

- ըստ առանձին ճյուղերի ուսումնասիրել ճյուղի արտադրանքը սպառող երկրների տնտեսական հեռանկարները, հումքային շուկաների միտումները և մատակարարող երկրները, մրցակից երկրների ուժեղ և թույլ կողմերը, միջազգային իրավական դաշտի զարգացումները, հնարավոր զարգացումները և այլն

- վերլուծել համաշխարհային քաղաքական և տնտեսական զարգացումները,

- իրազեկել գիտատեխնոլոգիական առաջընթացի և երկրների սոցիալ-մշակութային զարգացումների մասին:

Արտահանման ռազմավարությունը պետք է մշակել և իրականացնել՝ նկատի ունենալով արտահանման պահանջարկը և արտահանման առաջարկը:

Արտահանման պահանջարկի վրա ներգործելու համար պետությունը պետք է իրականացնի առավելապես առևտրային բնույթ կրող միջոցառումներ, ինչպիսիք են, օրինակ՝ արտաքին շուկաների ուսումնասիրությունը և տվյալների տրամադրումը հայրենական արտադրողներին, առևտրային տարբեր խոչընդոտների վերացումը արտաքին շուկաներում և հայրենական արտադրության ապրանքների պահանջարկի խթանումը: Իսկ արտահանման առաջարկի վրա ազդելու համար պետությունը պետք է իրականացնի արտադրության կազմակերպման հետ կապված միջոցառումներ:

Արտահանման ռազմավարությունը և դրա հիման վրա հեռանկարային ծրագրերը մշակելիս արտահանողների շահերը դրանցում արտացոլու նպատակով պետությունը պետք է ստեղծի մասնագետներից կազմված հանձնաժողով՝ արտահանման հետ առնչվող պետական մարմինների և գիտահետազոտական հաստատությունների ներկայացուցիչներից:

ԱԽԾ-ում ընդգրկվող ապրանքների ընտրությունը պետք է հիմնված լինի համեմատական առավելությունների ուսումնասիրության վրա: Այդ նպատակով մեր երկրի ձեռնարկությունների տեխնիկատնտեսական ցուցանիշները պետք է համեմատվեն այլ երկրների նույնատիպ ցուցանիշների հետ: Արդյունաբերության ճյուղերի վերլուխությունից պարզվում է, որ բացի հումքային ռեսուրսներից և էժան աշխատուժից այլ համեմատական առավելություններ դեռևս չեն օգտագործվում, մինչդեռ կան արտադրություններ որոնց մասնագիտացումը կարող է բարելավել ՀՀ արտահանման ապրանքային կառուցվածքը: Նշենք, որ այսօր տնտեսական

զարգացման մրցունակության չափանիշներ և երաշխիքներ չեն համարվում երկրի՝ բնական ռեսուրսներով հարստության աստիճանը կամ կառավարության կողմից ներքին տնտեսության պաշտպանությունը և սուբսիդավորումը¹⁵⁷:

Միջազգային արդի փորձը ցույց է տալիս, որ գիտության, տեղեկատվության, արդյունավետության մրցակցային առավելություններն են երկրի զարգացման իրական երաշխիքները: Սա Հայաստանի համար իրատեսական է և պետք է լինի հիմնաքարային մշակվող քաղաքականությունների համար:

Ծրագրով խթանման ենթակա ապրանքների ընտրությունը նպատակահարմար է կատարել ձեռնարկությունների հետ սերտ համագործակցության միջոցով: Այդ ապրանքներն իրենց չափորոշիչներով և առանձնահատկություններով պետք է համապատասխանեն նպատակային շուկաների պահանջներին: Դրա համար հարկավոր է ընտրել նպատակային շուկաների ներմուծողներին, հստակեցնել վերոնշյալ բոլոր պահանջները և պարզել, թե այդ շուկաներն ինչ հնարավորություններ ունեն մեր ձեռնարկությունների արտադրանքն ընդունելու համար:

Հայաստանի փոքր և միջին բիզնեսի արտահանման ռազմավարությունը գլխավոր արտաքին շուկաների գծով կարելի է ներկայացնել հետևյալ ուղղություններով.

- ԱՊՀ, Արևելյան Եվրոպայի երկրների շուկաներ, հարևան երկրների (Իրան և Թուրքիա) և Մերձավոր Արևելքի երկրների շուկաներ, Արևմտյան Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի երկրների շուկաներ՝ թեթև և սննդի արդյունաբերության արտադրանք:

Սակայն Թուրքիա և Իրան հայրենական ապրանքների արտահանման համար այդ երկրների կառավարությունները դեռևս հնարավորություններ չեն ստեղծել: Իսկ Արևմտյան Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի երկրների շուկաներ ներթափանցելու համար հայկական սիյուրքի ներուժը կարելի է օգտագործել և որպես սպառողներ, և որպես տվյալ երկրի գործարարներ:

Հայաստանում փոքր և միջին բիզնեսի արտահանման խթանման ինստիտուցիոնալ համակարգը, թեև հիմնականում արդեն գոյություն ունի, սակայն

¹⁵⁷ Տե՛ս՝ Michael Porter, “The Competitive Advantage of Nation”, 2008

դեռևս լիովին կազմավորված և կայացած չէ և գործում է ոչ լիարժեք ու արդյունավետ:

Չնայած հանրապետությունում արտաքին առևտրատնտեսական ոլորտին աջակցող որոշ ենթակառուցվածքների ստեղծմանը՝ դեռևս շատ անելիքներ կան փոքր և միջին բիզնեսի արտահանմանն աջակցող մասնագիտացված կառույցների ձևավորման և նրանց արդյունավետ աշխատանքների կազմակերպման առումով: Դրանց խնդիրը պետք է լինի հանրապետության փոքր և միջին բիզնեսների սպասարկումը՝ արտահանման խրախուսման ծառայությունների ողջ փաթեթի տրամադրման եղանակով:

Մեր հանրապետության արտահանման խրախուսմամբ զբաղվում են մի քանի կազմակերպություններ, որոնց գործառույթներում նկատվում են որոշակի կրկնություններ: Ուստի անհրաժեշտ է հստակեցնել ինչպես նրանց գործառույթները և գործունեության դաշտը, այնպես էլ համագործակցության մեխանիզմները:

ՀՀ կառավարության խնդիրներից են փոքր և միջին բիզնեսի արտահանման խրախուսման և ներդրումային քաղաքականության մշակումն ու իրականացումը: Սակայն այն լիարժեք չի կարող իրականացնել իր այս գործառույթը ինստիտուցիոնալ ենթակառուցվածքների խնդիրների և գործառույթների հստակ տարանջատման բացակայության պատճառով:

Արտահանման գործունեության բարելավումը հանդիսանում է Զարգացման հայկական գործակալության (ԶՀԳ) հիմնական նպատակը: Արտահանման խթանման բնագավառում ԶՀԳ-ն ունի մի շարք գործառույթներ, որոնք ուղղված են ինչպես խոշոր բիզնեսին, այնպես էլ փոքր և միջին բիզնեսին: Դրանք են.

- նպատակային ոլորտների և շուկաների որոնում,
- մարքեթինգային ուսումնասիրություններ,
- ցուցահանդեսներին և տոնավաճառներին արտահանողների մասնակցության աջակցություն,
- արտահանողներին օրենսդրության, ինչպես նաև միջազգային համաձայնագրերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում,
- արտահանողներին ֆինանսական աջակցություն ցուցաբերելու հնարավորությունների որոնում:

Այնուամենայնիվ ԶՀԳ-ն նույնպես իր առջև դրված խնդիրները լուծելու գործում բարձրակարգ փորձագետների, ինչպես նաև ֆինանսական միջոցների կարիք ունի, որն էլ թույլ չի տալիս լայնածավալ աշխատանքներ կատարել այս բնագավառում: Բացի այդ ԶՀԳ-ն իր գործառույթներն իրականացնելու նպատակով պետք է հեռանկարային արտաքին շուկաներում ունենա ներկայացուցչությունների և գործակալությունների լայն ցանց:

Փոքր և միջին բիզնեսի արտահանողներին տեխնիկական և տեղեկատվական բնույթի օգնություն ցուցաբերելու համար ԶՀԳ-ն պետք է նպաստի նաև ՀՀ մարզերում արտահանման աջակցման կենտրոնների հիմնմանը և կոորդինացնի նրանց աշխատանքները:

Փոքր և միջին բիզնեսի արտահանման խթանման աշխատանքների օպերատիվությունը բարձրացնելու նպատակով պետք է համագործակցել Հայաստանի տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառի ընկերությունների հետ և ստեղծել էլեկտրոնային ցանց, դրանում ընդգրկելով ինչպես արտահանման խթանմամբ զբաղվող կազմակերպություններին, այնպես էլ արտահանող ընկերություններին:

Այսօր Հայաստանի փոքր և միջին բիզնեսի արտահանողների համար ամենաբարդ հիմնախնդիրներից մեկը ֆինանսների պակասն է: Քանի որ առևտրային բանկերի կողմից վարկավորումը չունի ընդգծված արտահանման ուղղվածություն, ուստի նպատակահարմար է հիմնել արտահանման բանկ և դրա գործունեության հիմքում դնել արտահանման գործարքների վարկավորումը առավել պարզեցված սխեմայով և նվազագույն փաստաթղթաշրջանառությամբ: Նպատակահարմար է, որ այդ բանկը լինի պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերություն, որտեղ պետությունը կարող է բանկի հիմնադիր կապիտալում ներդնել մասնավորեցումից առաջացած միջոցները, միջազգային ֆինանսական կազմակերպություններից, առանձին երկրներից փոխառած միջոցները և դրամաշնորհները: Այդ բանկի վրա պետք է դրվեն հետևյալ գործառույթները.

- արտադրության ֆինանսավորում,
- հումքի և կիսաֆաբրիկատների ձեռք բերման ֆինանսավորում,

- տեխնոլոգիաների ձեռք բերման ֆինանսավորում,
- արտահանման երաշխիքների տրամադրում,
- արտահանման առևտրային և ոչ առևտրային ռիսկերի ապահովագրում,
- արտահանողներին լիզինգային ծառայությունների մատուցում:

Միաժամանակ անհրաժեշտ է ուժեղացնել մյուս առևտրային բանկերի մասնակցությունը՝ մանր և միջին բիզնեսի արտահանման խթանման հարցում:

Արտահանման ժամանակ փոքր և միջին բիզնեսները հանդիպում են առևտրային և ոչ առևտրային ռիսկերի: Այդ առումով արտահանման խոչընդոտ է հանդիսանում արտահանման ապահովագրման համակարգի բացակայությունը: Այն նաև ետ է պահում օտարերկրյա ներդրողներին հայաստանյան շուկայում լուրջ և ծավալուն գործարքների իրականացումից: Ուստի նպատակահարմար է ստեղծել ապահովագրական հիմնադրամներ: Հիմնադրամի ֆինանսավորման աղբյուրները կարող են լինել պետության, միջազգային կազմակերպությունների, դոնոր երկրների, ինչպես նաև արտահանողների տրամադրած միջոցները: Նման հիմնադրամներ կան ինչպես զարգացած, այնպես էլ անցումային տնտեսություն ունեցող երկրներում: Ճապոնիայում ընդհանուր արտահանման գործարքների կազմում պետական ապահովագրությանը բաժին է ընկնում շուրջ 45%-ը, որն ընդգրկում է արժույթային ռիսկերի, ներմուծվող հումքի դիմաց կատարված կանխավճարային մուծումների, օտարերկրյա ներդրումների ապահովագրությունը:

Փոքր և միջին բիզնեսի արտահանողներն ունեն նաև որոշ դժվարություններ՝ կապված այլ երկրների օրենսդրությունների և կարգերի հետ: Այդ նպատակով կարելի է ստեղծել մի կենտրոն, որը պետական մակարդակով կգբաղվի արտահանողների մրցակցային և իրավական բնույթի խնդիրների լուծմամբ: Միաժամանակ պետք է ապահովել արտահանող գործարարների միջև կապը, տեղեկանալ արտահանողների առաջարկություններին, կազմակերպել բաց ֆորումներ:

Հայաստանի փոքր և միջին բիզնեսի արտահանողները հիմնականում չեն տիրապետում զարգացած երկրների որակի ստանդարտներին և տեխնիկական նորմատիվների մասին տեղեկատվությանը: Հաճախ պակասում են որակի ապահովման աշխատանքների պլանավորման, կազմակերպման և կորդինացման

փորձն ու գիտելիքները: Այդ պատճառով գործնականում լինում են դեպքեր, երբ մերժվում է արտահանվող ապրանքների մուտքը երկիր, ապրանքների որակը վերաձևակերպվում է ավելի ցածր կատեգորիայի մեջ, կիրառվում են տուգանքներ, լինում են վեճեր ներմուծողների հետ, վարկի և սպառողների կորուստ:

Արտահանման ընդլայնման համար մեծ նշանակություն ունի նաև կադրային ներուժի ընդլայնումը: Բացի այդ, անհրաժեշտ է նաև կազմակերպել կառավարիչների ուսուցողական նպատակային սեմինարներ և հատուկ գործնական դասընթացներ:

«Կառավարությունը պետք է լայնորեն օգտագործի միջպետական համաձայնագրերի ինստիտուտը՝ ներքին արտադրանքն արտահանելու համար: «Կրկնապատկան ներկայացուցչությունները պետք է առավելագույնս ակտիվացնեն իրենց տնտեսական գործառույթները, որոնք պետք է համակարգեն և ապահովեն հայկական ապրանքների և ծառայությունների առաջխաղացումն իրենց լիազորության երկրում կամ տարածաշրջանում:

Պետությունը պետք է իրականացնի որոշակի գործողություններ և միջոցառումներ՝ արտաքին աշխարհում Հայաստանի ընկալումը որակապես բարելավելու համար:

3.3. Ձեռնարկատիրության ծավալման խթանման գերակայությունները ՀՀ-ում

Շատ կարևոր է փոքր և միջին բիզնեսի դերը տնտեսության զարգացման գործում: Պետությունը, գիտակցելով փոքր և միջին բիզնեսի առավելությունները, մեծ ուշադրություն է դարձնում ոլորտին՝ իրականացնելով բազմաթիվ բարեփոխումներ: Իրականացված բարեփոխումները նպաստում են հանրապետության գործարար միջավայրի բարելավմանը և ներդրումների, արտաքին ֆինանսավորման մակարդակների աճին, ինչպես նաև հնարավորություն են տալիս արձանագրել մակրոտնտեսական զգալի դրական արդյունքներ:

Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, տնտեսական զարգացման կայուն տեմպերի պահպանման համար խիստ կարևոր են այնպիսի գործոններ, ինչպիսիք են կառուցվածքային և ինստիտուցիոնալ բարեփոխումները, որոնց նպատակակետը պետք է լինի տնտեսական գործունեության մրցակցային պայմանների ստեղծումը, գույքային իրավունքների ամրապնդումը, բանկային համակարգի զարգացումը, նորարարությունների կիրառումը, ինչպես նաև միջազգային ինտեգրացիոն համագործակցության խորացումը:¹⁵⁸

Փոքր և միջին ձեռնարկատիրությունը երկրի տնտեսական զարգացման կարևորագույն առաջ մղող ուժերից են: Դրանք խթանում են մասնավոր սեփականությանը, ճկուն են, հեշտությամբ են հարմարվում շուկայական տնտեսության փոփոխություններին, ստեղծում են նոր աշխատատեղեր և կարող են նպաստել արտահանման խթանմանը և առևտրի կազմակերպմանը: Ինչպես զարգացած, այնպես էլ բոլոր զարգացող երկրներում այժմ մեծ ուշադրություն է դարձվում փոքր և միջին բիզնեսի զարգացման հիմնախնդիրներին:¹⁵⁹ Այս երկրների շարքում Հայաստանը բացառություն չի կազմում:

2012թ. դեկտեմբեր ամսին հաստատվել է ՓՄՁ սուբյեկտներին աջակցության ծրագիրը: ՓՄՁ-ին ուղղված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից իրականացվող հետևողական տնտեսական քաղաքականությունն ապահովել է ՓՄՁ-ն բնութագրող հիմնական ցուցանիշների հետևյալ պատկերը.

ՓՄՁ-ն նշանակալի դեր է խաղում երկրի համախառն ներքին արդյունքի ձևավորման գործում: Ըստ գնահատականների 2015 թվականին ՓՄՁ-ի տեսակարար կշիռը երկրի ՀՆԱ-ում կազմել է 42.7 տոկոս: Նախորդ տարվա տվյալներով այդ ցուցանիշը կազմել է 42.5 տոկոս: ՓՄՁ-ի մասնաբաժինը երկրի արտահանման ծավալում նախորդ տարիների համեմատ գրեթե չի փոխվել և, ըստ գնահատականների, 2011 թվականին կազմել է 17.9 տոկոս, իսկ ներմուծման ծավալում՝ 26.4 տոկոս: Հայաստանում ՓՄՁ-ի զարգացման ինդեքսը, որպես ընդհանրական (ազդեցացված) տնտեսական ցուցանիշ, որը հաշվարկվել է ՄԱԿ-ի

¹⁵⁸ Буров, В.Ю. Основы предпринимательства: учебное пособие / В.Ю. Буров. – Чита, 2011, էջ 23

¹⁵⁹ Предпринимательство: учеб. / под редакцией В.Я. Горфинкеля, Г.Б. Поляка, В.А. Швандара. – М.: ЮНИТИ-ДАНА, 2011, էջ 13-14

կողմից սահմանված մեթոդաբանությամբ, 2015 թվականին կազմել է 441.8, ինչը 2002 թվականի համեմատությամբ ավելացել է շուրջ 7.6 անգամ:¹⁶⁰

Հայաստանում ձեռնարկատիրության զարգացման ներկա փուլում առանձնակի կարևորվում է ՓՄՁ-ի սուբյեկտների գործունեության միջազգայնացումը, տեղական ՓՄՁ-ի սուբյեկտների արտահանման ներուժի զարգացումը և արտաքին շուկաներ մուտք գործելու հնարավորությունների ընդլայնումը, ինչը կստեղծի լրացուցիչ հնարավորություններ վերջիններիս համար՝ ապահովելով նշանակալի տնտեսական արդյունք: Միաժամանակ շուկայական տնտեսավարման պայմաններում առանձնակի կարևոր նշանակություն ունի ՓՄՁ-ի սուբյեկտներում ժամանակակից նորագույն տեխնոլոգիաների ներդրումը, որը նպաստում է տեղական արտադրանքի մրցունակության բարձրացմանը, ՓՄՁ-ի սուբյեկտների կողմից գիտատեխնիկական արդյունքների արդյունավետ օգտագործմանն ու նրանց արտահանման ներուժի ընդլայնմանը:

ՓՄՁ-ի սուբյեկտների տեխնոլոգիական հնարավորությունների ընդլայնման նպատակով իրականացվել է **ՓՄՁ-ի սուբյեկտներում ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանն աջակցության ծրագիրը**, որի շրջանակներում ՓՄՁ-ի սուբյեկտներին տեղեկատվություն է տրամադրվել ժամանակակից տեխնոլոգիաների վերաբերյալ և աջակցություն է ցուցաբերվել ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ: Ժամանակակից տեխնոլոգիաներ կիրառող ՓՄՁ-ի սուբյեկտների համար ֆինանսական ռեսուրսների ներգրավման հնարավորությունների ընդլայնման նպատակով 2012 թվականին ֆինանսական աջակցության գործող ծրագրերից (վարկային երաշխավորությունների տրամադրում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից, կապիտալի ֆինանսավորում և ուղղակի վարկավորում «ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից և այլն) բացի՝ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից աշխատանքներ է իրականացվել և շարունակում է 2013թ-ին ֆինանսական աջակցության նոր նպատակային գործիքների մշակման և ներդրման ուղղությամբ:¹⁶¹

¹⁶⁰ ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայքէջ՝ www.armstat.am

¹⁶¹ ՀՀ Կառավարության 2011թ. հունվարի 13-ի թիվ 80-Ն որոշումը փոքր և միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության 2011թ. ծրագիրը հաստատելու մասին՝ <http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=65720>

1) Տեղական արտադրանքի խթանման և տեղական ապրանքանիշերի ձևավորման ծրագիր

Տեղական արտադրանքի խթանման և տեղական ապրանքանիշերի ձևավորման ծրագրի նպատակն է տեղական հումքի, աշխատուժի, ավանդույթների և գիտելիքի վրա հիմնված մրցունակ արտադրության խթանումը, տեղական ապրանքանիշերի ձևավորումը և հետագա առաջնորդումը՝ նորարարական մոտեցումների կիրառմամբ: Տեղական արտադրանքի խթանման և տեղական ապրանքանիշերի ձևավորման ծրագրի էությունը կայանում է նրանում, որ առանձին համայնքները (տարածաշրջանները) իրենց ջանքերը պետք է միավորեն և ուղղեն այն ապրանքների արտադրությանը, որտեղ նրանք ունեն մրցակցային առավելություն՝ պայմանավորված տվյալ տարածաշրջանում ձևավորված ավանդույթներով, ինչպես նաև նոր տեսակի արտադրության համար անհրաժեշտ տեղական ռեսուրսների առկայությամբ:

2012-2013 թվականների սույն միջոցառումների շրջանակներում շարունակվել է «Մեկ գյուղ, մեկ արտադրատեսակ» խորագրով ծրագրի իրագործումը, ինչը նախատեսում է ՀՀ մարզերի ուսումնասիրություն ըստ առանձին տարածաշրջանների՝ ուղղված զարգացման համար առավել հեռանկարային տեղական ավանդական կամ նոր տեսակի ապրանքատեսակների բացահայտմանը, որոնց արտադրության համար տվյալ տարածաշրջանում առկա են համապատասխան ավանդույթներ, հումք, բնակլիմայական պայմաններ, գիտելիք և տվյալ տեսակի արտադրանքի մրցունակության համար անհրաժեշտ այլ գործոններ:¹⁶²

2) ՓՄՁ-ի սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) արտահանմանն աջակցության ծրագիր

2012 թվականին միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների (ծրագրերի) հետ համագործակցության շրջանակներում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից գործընկեր ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցություն է ցուցաբերվել արտահանում սկսելու համար անհրաժեշտ կարողությունների ձևավորման, վերջիններիս

162 2005թ. հունիսին Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (ՃՄՀԳ), ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության և Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի միջև ստորագրվել է եռակողմ արձանագրություն, համաձայն որի Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ն իրականացրել է "Հայաստանի փոքր և միջին ձեռնարկություններում մարդկային ռեսուրսների զարգացման ծրագիրը"

կողմից իրականացվող արտահանման գործունեության զարգացման և ընդլայնման ուղղությամբ:

Այդ նպատակով արտահանման ներուժ ունեցող ՓՄՁ-ի սուբյեկտներին տրամադրվել է տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն արտաքին շուկաներ մուտք գործելու համար անհրաժեշտ փորձարկումների անցկացման, թույլտվությունների, սերտիֆիկատների ձեռքբերման և համապատասխան փաստաթղթերի պատրաստման հարցերում, Եվրամիության երկրներ ապրանք արտահանողներին Արտոնությունների ընդհանրացված համակարգի և նրա ընձեռած հնարավորությունների, միջազգային ցուցահանդեսների և տոնավաճառների վերաբերյալ: ՓՄՁ-ի սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) արտահանմանն աջակցության միջոցառման շրջանակներում համալիր աջակցություն է ցուցաբերվել առանձին ոլորտներում գործող արտահանման մեծ ներուժ ունեցող առաջատար ընկերություններին՝ նրանց արտադրանքն արտաքին շուկաներում ներկայացնելու և արտահանման ծավալներն ընդլայնելու ուղղությամբ: Նախորդ տարի հիշյալ միջոցառման շրջանակներում շարունակվել և ընդլայնվել է համագործակցությունն արտահանումը խթանող տարբեր միջազգային կառույցների (ծրագրերի)՝ Զարգացող երկրներից ներմուծման խթանման կենտրոնի, Միջազգային գործարարության և համագործակցության հոլանդական գործակալության և վերջինիս կողմից իրականացվող «Համագործակցության զարգացում» ծրագրի հետ և այլն՝ դրանցում Հայաստանի ՓՄՁ-ի սուբյեկտներին ներգրավելու նպատակով: Արտահանող ՓՄՁ սուբյեկտներին աջակցություն ցուցաբերելու նպատակով օգտագործվել է նաև ՁԵՑ-ի ընձեռած լայն հնարավորությունները, մասնավորապես, պոտենցյալ գործընկերների որոնման և համագործակցության հաստատման հարցերում:

Ինչպես արդեն նշվեց, ՀՀ-ում ձեռնարկատիրության զարգացման կարևոր խնդիրներից է ՓՄՁ-ի սուբյեկտների գործունեության միջազգայնացումը, որը լրացուցիչ հնարավորություններ կստեղծի տեղական ՓՄՁ-ի սուբյեկտների համար արտաքին շուկաներ մուտք գործելու գործընթացում:¹⁶³ Այս համատեքստում կարևորվում է ձեռնարկությունների եվրոպական ցանցի (ՁԵՑ) գործունեությունը

¹⁶³ <http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=65720>

Հայաստանում:¹⁶⁴ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը 2008 թվականից ի վեր, հանդիսանալով որպես ՁԵՑ-ի հյուրընկալող կառույց, ներկայումս գործում է որպես ՁԵՑ-ի հաղորդակցման կենտրոն Հայաստանում: Հայաստանում ՁԵՑ-ի հաղորդակցման կենտրոնի գործունեությունն ուղղված է հայ գործարարների գործունեության միջազգայնացմանը և եվրոպական շուկա մուտք գործելու հնարավորությունների ընդլայնմանը, նրանց նորարարական կարողությունների զարգացմանը և տեխնոլոգիական կատարելագործմանը:

Հայաստանում ՁԵՑ-ի հաղորդակցման կենտրոնի կողմից 2012 թվականից ի վեր իրականացվել է միջոցառումների լայն շրջանակ, որոնք ուղղվել են ՁԵՑ-ի գործունեության լուսաբանմանն ու հնարավոր շահառուների շրջանում տեղեկատվության տարածմանը, եվրոպական շուկաներ մուտք գործելու օրենսդրական ընթացակարգերի պարզաբանմանը, Հայաստանի ՓՄՁ-ի սուբյեկտների համար ՁԵՑ-ի անդամ երկրների շրջանում գործընկերների որոնմանը և գործարար կապերի հաստատմանը, գործարար տեղեկատվության և տեխնոլոգիաների փոխանցմանը, նորարարությունների խթանմանը և այլն:

Բացի դրանից՝ ՓՄՁ-ի սուբյեկտների, ինչպես նաև այլ շահագրգիռ կազմակերպությունների շրջանում ամսական կտրվածքով տարածվել է Հայաստանում ՁԵՑ-ի հաղորդակցման կենտրոնի էլեկտրոնային տեղեկաթերթը, որտեղ գործարարները կարող են գտնել Հայաստանում գործընկերների որոնման առաջարկներ, ինչպես նաև տեղեկատվություն ՁԵՑ-ի անդամ երկրներում կազմակերպվող ցուցահանդեսների և միջոցառումների մասին և այլ գործարար տեղեկատվություն: Հիշյալ գործարար տեղեկատվությունը հասանելի է նաև Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի ինտերնետային էջից:¹⁶⁵

2012-2015թթ. ընթացքում ՁԵՑ-ի գործարար համագործակցության հիմնապաշարը համալրվել է միջազգային համագործակցության ներուժ ունեցող Հայաստանի ՓՄՁ-ի սուբյեկտների գործարար համագործակցության առաջարկներով: Հայաստանում ՁԵՑ-ի գործունեության ընդլայնման նպատակով աշխատանքներ են

¹⁶⁴ http://www.smednc.am/am/content/general_information/

¹⁶⁵ <http://www.smednc.am/>

իրականացվել միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների (ծրագրերի) հետ՝ համագործակցության հաստատման ուղղությամբ:

Ծանոթանալով ՀՀ-ում իրականացված և այսօր էլ իրականացվող միջոցառումներին՝ ուղղված Հայաստանում բիզնեսի զարգացմանը, կարելի է ասել, որ մեծ աշխատանք է կատարվել շուկայական տնտեսության պայմաններում ձեռնարկատիրական գործունեության համար անհրաժեշտ միջավայրի ապահովման ուղղությամբ: Իհարկե, խնդիրն ամբողջովին լուծված չէ, բայց հիմնականում ստեղծված է ձեռնարկատիրական գործունեությունը կարգավորող իրավական դաշտը, ձեռնարկատիրական գործունեության առանձին տեսակների լիցենզավորման կարգերը:

Եվ չնայած հանրապետությունում արձանագրած տնտեսական հաջողություններին, ներկայումս առկա են մի շարք հիմնախնդիրներ, որոնք լրջորեն խոչընդոտում են գործարարության և մասնավորապես փոքր և միջին բիզնեսի զարգացմանը: Ըստ Համաշխարհային բանկի փորձագետների՝ ՀՀ-ում ցանկացած ոլորտում բիզնեսով զբաղվելը միջին հաշվով ավելի հեշտ է, քան Եվրամիության անդամակցող երեք երկրներում՝ Հունգարիայում, Լեհաստանում, և Սլովենիայում, ԱՊՀ մնացած երկրներում, ինչպես նաև Բուլղարիայում և Ռումինիայում: Հայաստանի բարձր ցուցանիշներն ունեն միայն բալթյան երկրները, Չեխիան և Սլովակիան, որոնք բոլորն էլ բարեփոխումների գծով առաջատարների թվում են: Միաժամանակ դեռ խնդիրներ կան գույքի գրանցման, վարկերի մատչելիության և օրենսդրական դաշտի ձևավորման ուղղությամբ: Բացի այդ, հանրապետությունում ձեռնարկատիրության զարգացման համար էական խոչընդոտ է հանդիսանում ստվերային տնտեսության մեծ ծավալները, ինչը, ըստ էության, այն պատճառով է, որ բիզնեսով զբաղվելու իրական ծախսերն ավելին են, քան կարելի է ենթադրել: Ավելին, եթե անցումային տնտեսությամբ երկրներում ստվերային տնտեսության ծավալները սերտորեն կապված են կոռուպցիայի մակարդակի հետ, ապա ակնհայտ է դառնում, որ բիզնեսով զբաղվելու նպատակահարմարությունը իրականում ավելի ցածր մակարդակի վրա է գտնվում: Ավելին, եթե այդ ցուցանիշները հաշվի չեն առնում, որ հարկային վարչարարության՝ տվյալ պահին հարմարեցված կանոնները կարող են էականորեն բարձրացնել բիզնեսով զբաղվելու իրական ծավալները,

նպաստել նոր բիզնեսի ստեղծմանը և գործողների զարգացմանը, ապա ակնհայտ է դառնում, որ իրավիճակի պատկերը դրանից էականորեն փոխվում է: Ստվերային տնտեսության ծավալները, ըստ էության, լինելով համընթաց անցումային տնտեսությամբ երկրներում կոռուպցիայի մակարդակի հետ, բացասաբար են ազդում գործարար միջավայրի վրա: Այդ առումով ՀՀ-ում գործարար միջավայրի համակողմանի գնահատման ժամանակ պետք է հաշվի առնել ինչպես բիզնեսով զբաղվելու ֆորմալությունը, այնպես էլ ստվերային տնտեսության չափերը:

Ըստ Կայուն Զարգացման Ծրագրի տվյալների՝ վերջին մի քանի տարվա ընթացքում ՀՀ-ում ձևավորվել է բավականին բարենպաստ գործարար միջավայր. Հայաստանը 2009թ. դրությամբ գործարարության միջավայրի ընդհանուր որակով գրավում էր աշխարհում 39-րդ տեղը¹⁶⁶, ԵԿԱ անցումային երկրների մեջ՝ 6-րդ տեղը, իսկ սեփականության իրավունքների գրանցման հեշտության առումով առաջինն էր ԵԿԱ երկրների մեջ և երկրորդը՝ աշխարհում: Բայց շատ ցուցանիշներով զիջում է մնացած երկրներին: Այս միջավայրի ձևավորման համար խիստ կարևոր է պարզել այն ոլորտները, որոնցում առկա են լուրջ խոչընդոտներ տնտեսվարող սուբյեկտների գործունեության համար: Որպես այդպիսիք կարելի է առանձնացնել աշխատանքային շուկան /աշխատանքի ընդունումը և ազատումը/, վարկերի ստացումը և պայմանագրերի կիրարկումը:

Այդուհանդերձ, բիզնեսով զբաղվելուն խոչընդոտող գործոններից շատերը կապված են ֆինանսական շուկաների գործունեության օրենսդրական հիմքերի հետ:

Օրենսդրության անկադրարությունը:

Օրենսդրական բազայի անկատարությունը ստիպում է անընդհատ փոփոխություններ մտցնել փոքր ձեռնարկությունների գործունեության մեջ: Օրինակ՝ հարկերի մասին բոլոր օրենքներում և դրանց կիրառման հրահանգներում մշտապես կատարվում են փոփոխություններ, և ձեռնարկատերերը պետք է ինքնուրույն հետևեն դրանց ու գործունեության ցանկացած պահի իրազեկ լինեն այդ փոփոխություններին: Այսինքն, գործարարներն այսօր լիարժեք տեղեկացված չեն գործարարությանն առնչվող իրավաօրենսդրական ակտերի և դրանցում տեղի ունեցած փոփոխությունների վերաբերյալ: Անհրաժեշտ է ակտիվացնել

¹⁶⁶ Տես՝ Կայուն Զարգացման Ծրագիր, Երևան 2008

աշխատանքները գործարարների շրջանում իրավագիտակցության և օրենքների վերաբերյալ տեղեկացվածության աստիճանի բարձրացման ուղղությամբ:

Հարկային համակարգի խնդիրները:

ՀՀ-ում փոքր և միջին բիզնեսի զարգացման խոչընդոտներից են հարկերը և հարկային վարչարարությունը: Շատ հաճախ հարկային համակարգի որոշ անկատարություններ բացասականորեն են ազդում փոքր գործարարության վրա: Գործող հարկերի տոկոսադրույքները չեն նպաստում ձեռնարկությունների զարգացմանը, ներքին և արտաքին ներդրումների ներգրավմանը փոքր և միջին բիզնեսի ոլորտ: ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների համաձայն, պետբյուջե և տեղական բյուջե վճարվող հարկերի ընդհանուր գումարը հաճախ հասնում է ձեռնարկության հաշվեկշռային շահույթի մոտ 90%-ին, իսկ երբեմն նաև 100%-ին: Այս իրավիճակը ձեռնարկատերերին ստիպում է գտնել հարկերից խուսափելու միջոցներ: Կարևոր են հիմնախնդիրները կապված հարկային տեղեկատվության ապահովման հետ:

Որպեսզի ՀՀ հարկային համակարգը չհանդիսանա արգելակող գործոն ձեռնարկատիրական կառուցվածքի զարգացման համար և չնպաստի ստվերային տնտեսությանը՝ սկսած 2008թ.-ից հարկային վարչարարության բարեփոխումների հիմքում դրվել է հետևյալ նպատակը՝ Փոքր բիզնեսի համար արդյունավետ հարկային բեռի սահմանում «փափուկ» հարկային վարչարարության կիրառմամբ:

Ֆինանսավարկային համակարգի անկատարություն:

Ակնհայտ է, որ փոքր և միջին բիզնեսի զարգացման կարևոր նախադրյալ է ֆինանսական միջոցների, մասնավորապես փոխառու միջոցների մատչելիության ապահովումը: Բանկերը շատ հաճախ խուսափում են փոքր և միջին բիզնեսի վարկավորումից՝ երաշխիքների բացակայության պատճառով: Սակայն գործարար ոլորտի վարկավորումը մեծ նշանակություն ունի տնտեսության զարգացման համար: Բանկերը փոխառուների այս խումբը համարում են համեմատաբար բարձր ռիսկային, անարդյունավետ և տրամադրում են հիմնականում բարձր տոկոսադրույքով կարճաժամկետ վարկեր /պարտադիր գրավի առկայությամբ/: Վարկառուների որակի վերաբերյալ շուկայական տեղեկատվության պակասը, համատեղվելով գրավով ապահովված վարկավորման պատշաճ դաշտի

բացակայության հետ, վարկավորմանը խոչընդոտող հանգամանք են հանդիսանում: Շարժական գույքը չի կարող արդյունավետ կերպով օգտագործվել որպես գրավ՝ վարկերի վերադարձելիությունն ապահովելու նպատակով, քանի որ գրավի բռնագանձումը ժամանակատար և ծախսատար գործընթաց է: Արդյունքում, բանկերն իրենց ռիսկերը փոխհատուցելու համար, ներգրավման և տեղաբաշխման տոկոսադրույքների միջև զգալի տարբերություն են սահմանում, ինչը էականորեն սահմանափակում է ձեռնարկատիրական գործունեությունը և, մասնավորապես, փոքր և միջին բիզնեսի ընդլայնման հնարավորությունները: Այսինքն, վարկային միջոցների անմատչելիությունն պայմանավորված է հետևյալ գործոններով.

- Վարկավորման բարձր տոկոսադրույքներ, միջինում՝ 15-18%,
- Երկարաժամկետ վարկերի սակավություն /5 տարի և ավելի ժամկետով /,
- Բանկերի կողմից վարկի դիմաց գրավի ցածր գնահատում:

Այդ է պատճառը, որ փոքր և միջին բիզնեսի վարկավորումը կատարվում է առավելապես միջազգային ծրագրերի միջոցով: Բայց այս գործընթացն էլ դյուրին չէ, կապված է վարկավորման երկարաժամկետ և բարդեցված գործընթացների հետ:

Տեսակարար ծախսերի բարձր մակարդակ:

Սրանք այն ծախսերն են, որոնք բիզնեսը կրում է՝ կապված վարչական կանոնակարգերի պահանջները բավարարելու հետ: Այդ ծախսերը հսկայական գումարներ են կազմում, և վերջին մի քանի տարվա ընթացքում այդ ուղղությամբ որևէ զգալի դրական տեղաշարժ չի արձանագրվել: Ֆորմալ և ոչ ֆորմալ վճարումների հետ չկապված ժամանակային ու դրամական այս ծախսերը կատարվում են գործող կանոնակարգերի պահանջներին բավարարելու համար:

Լուրջ խոչընդոտ է նաև վարչական կանոնակարգերի կամայական կիրառումը, ինչը կոռուպցիայի հետ մեկտեղ զգալիորեն բարդացնում է ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հնարավորությունը: Կոռուպցիայի բարձր մակարդակի հետևանքով ընկերություններն իրենց գործունեության զգալի մասը կազմակերպում են ստվերային հատվածում՝ ծախսերը հնարավորինս նվազեցնելու նպատակով: Օրենսդրական փոփոխությունները նախքան կիրառության մեջ դրվելը հազվադեպ են ներկայացվում հանրությանը:

ՀՀ-ում, ինչպես Արևելյան Եվրոպայի և ԱՊՀ երկրներում, առկա է ըմպելությունների՝ սեփական տեխնոլոգիական զարգացմանը խթանող միջոցառումների պակաս:

Նշված խնդիրներով հանդերձ, ՀՀ-ում ներկայումս ձևավորվում են փոքր և միջին բիզնեսի օրենսդրափրավական և կազմակերպական որոշակի նախադրյալներ, որոնք, ըստ էության, կարևոր երաշխիքներ են ստեղծում ոլորտի հետագա զարգացման համար: Մասնավորապես ՀՀ կառավարությունը որոշում կայացրեց «ՀՀ հարկային վարչարարության ռազմավարության 2012-2014թթ. ծրագրի» մասին:¹⁶⁷ Այս ծրագրի 7 հիմնական նպատակներից մեկը վերաբերում է հենց փոքր և միջին բիզնեսի ոլորտին, ըստ որի նախատեսվում է փոքր և միջին բիզնեսի համար արդյունավետ հարկային բեռ սահմանել՝ «փափուկ» հարկային վարչարարության կիրառմամբ: Օրենքով սահմանվում է փոքր և միջին բիզնեսի հարկման հարաբերականորեն ցածր, բայց արդարացի բեռ՝ նվազագույնին հասցնելով ու պակասեցնելով հաշվետվություններն ու գրանցումները, սահմանափակելով հարկային մարմինների կողմից իրականացվող ստուգումները: Այս նպատակների ներքո իրականացվում է հետևյալ քաղաքականությունը

1. փոքր և միջին բիզնեսի հարկային հաշվետվությունների և այլ պահանջվող տվյալների քանակության և պարբերականության կրճատում,
2. փաստաթղթաշրջանառությունը ծանր չէ, սակայն գրանցումների ծավալը պետք է էականորեն կարգավորվի,
3. հարկային ծառայությունը պատրաստվում է ներդնել նորաստեղծ փոքր և միջին բիզնեսին աջակցելու ծրագիր,
4. ստուգումների պարբերականությունը աստիճանաբար կրճատվում է:

Փոքր և միջին բիզնեսի կայացման գործում ելակետային ու հիմնարար դեր են խաղում դրանց աջակցող ինստիտուտները կամ ենթակառուցվածքները: Դրանք, ելնելով առաջատար երկրների փորձից, հանդես են գալիս երեք հիմնական ֆունկցիոնալ կամ գործառույթային խմբերով՝

1. փոքր և միջին բիզնեսի սպասարկման և աջակցման մասնագիտացված կազմակերպություններ,

¹⁶⁷ <http://www.gov.am/files/docs/476.pdf>

2. փոքր և միջին բիզնեսի ձևավորման ու ստեղծման կենտրոններ,

3. ձեռնարկատիրության գոտիներ:

Նշվածներից առաջինը կարող են հանդես գալ որպես շուկայական ենթակառուցվածքի ընդհանուր օբյեկտ, իսկ մյուս երկուսը՝ որպես ինչպես մանր և միջին բիզնեսի, այնպես էլ փոքր նորամուծական ձեռնարկատիրության ենթակառուցվածքի օբյեկտ:

Նշենք նաև, որ նման աջակցող ենթակառուցյունները բավականին լուրջ և հիմնարար ազդեցություն են գործում փոքր և միջին բիզնեսի զարգացման ու ընդլայնման վրա, ապահովելով գործունեության արդյունավետությունը: Դրանով են նաև բացատրվում և բնութագրվում մանր և միջին բիզնեսի առավելությունները, այն, որ պետական հովանավորչությունն ակնհայտ է:

Փորձենք առավել մանրամասն բնութագրել այդ գործառույթային խմբերի նշանակությունը այլ ձեռնարկությունների համեմատ՝ մանր և միջին բիզնեսի ուժեղ կողմերը բացահայտելու տեսանկյունից:

Առաջին ֆունկցիոնալ կամ գործառույթային խումբը ներառում է հետևյալ ենթահամակարգերը՝

1. տեղեկատվական ապահովում,
2. փորձագիտություն,
3. ֆինանսա-տնտեսական ապահովում,
4. նախագծվող ապրանքի հավաստագրում,
5. պատենտավորում և լիցենզավորում,
6. կադրերի պատրաստում և վերապատրաստում,
7. լիզինգային կենտրոններ,
8. կոնսուլտացիոն կամ խորհրդատվական ծառայություն մարկետինգի և մենեջմենթի գծով,
9. մասնագիտացված ծառայություններ մատուցող ընկերություններ՝ հաշվապահություն, աուդիտ և այլն:

Երկրորդ և երրորդ գործառույթային խումբը իրենցից ներկայացնում են բիզնես ինկուբատորներ՝ «աճեցման կենտրոններ», ինչպես նաև գիտական կենտրոններ և տեխնոպարկեր:

Ձեռնարկության զարգացման համար այս հույժ կարևոր հնարավորություններից օգտվելու համար բիզնես ինկուբատորների, տեխնոպարկերի, արդյունաբերական գոտիների անհրաժեշտությունն ակնհայտ իրողություն է: Դրանք կոլեկտիվ հնարավորություններ են ընձեռում այն դեպքերում, երբ առանձին փոքր ձեռնարկությունների համար այս կամ այն գործարարության ծավալումը մատչելի չէ: Տվյալ դեպքում այն ուղղված է փոքր և միջին բիզնեսների համախմբմանն այնպիսի գործունեության համար, երբ գործունեության արդյունավետությունը կախված է համագործակցության արդյունքներից և մասշտաբներից:

Փորձենք ներկայացնել բիզնես ինկուբատորների էությունը և նշանակությունը: Բիզնես ինկուբատորներն իրենից ներկայացնում են նոր ստեղծված ձեռնարկությունների մի խումբ, որոնք օգտվում են նույն միջոցներից և կենտրոնացված ծառայություններից, հաշվետվության համակարգից, ապրանք կամ հումք գնելու և մարկետինգի հնարավորություններից: Այսինքն, մասնակից ընկերությունների միացյալ ուժը մանր և միջին բիզնեսներին հնարավորություն է տալիս կիսելու ֆինանսական ծանրությունը այնքան ժամանակ, քանի դեռ ձեռնարկությունները չեն հասունացել ինքնուրույն գործելու համար: Բիզնես ինկուբատորները սովորաբար ստեղծվում և աջակցվում են կառավարության կողմից և ֆինանսավորվում են դրամաշնորհների կամ ցածր տոկոսադրույքներով վարկերի միջոցով: Մյուս կողմից, ինկուբատորները մեծ նշանակություն ունեն տարածաշրջանային զարգացման համար: Համագործակցության նման ձևը նպաստում է նաև ձեռնարկությունների միջև կոոպերացիայի ընդլայնմանը:

Փոքր և միջին բիզնեսների տեխնոլոգիական և նորարարական ու նորամուծական աջակցության ձևերից է տեխնոպարկը: Այն գիտական կենտրոնի շուրջ համախմբված նորաստեղծ նորամուծական ձեռնարկությունների համախումբ է, որն առաջարկում է ժամանակակից բարձրորակ խորհրդատվություն և տեղեկատվություն՝ ուղղված ձեռնարկությունների տեխնոլոգիական զարգացմանը, արտադրանքի որակի կատարելագործմանը, ինչպես նաև տրամադրում է իրացման շուկաների ուսումնասիրություններ իրականացնելու լայն հնարավորություններ: Տեխնոպարկերն ավելի հարմար են արդյունաբերական կամ բարձր տեխնոլոգիական ձեռնարկությունների համար, որտեղ արտադրանքի կամ

արտադրական գործընթացների կատարելագործման համար շատ կարևոր է նոր տեխնոլոգիաների կիրառումը: Դա փոխշահավետ է ինչպես գիտնականների, այնպես էլ ձեռնարկատերերի համար՝ փորձի և հմտությունների փոխանակման առումով, երբ գիտական ծրագրերը կարող են զարգանալ գործարարության մեջ ներդրվելով, իսկ ձեռնարկատերերը կարող են օգտվել գիտական մշակումներից: Այդ մոդելը բավականին արդյունավետ կարող է գործել անցումային տնտեսության երկրներում, հաշվի առնելով վերջինիս գիտական ներուժը և համապատասխան գիտական կենտրոնների առկայությունը:

Տեխնիկական օժանդակությունը, որն իր մեջ ներառում է տեղեկատվական և խորհրդատվական ապահովումը, իրականացվում է ինչպես կառավարման պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների, այնպես էլ առևտրային կազմակերպությունների կողմից: Այս մեխանիզմը մեծ արդյունքներ կարող է տալ, եթե պետական համապատասխան կառույցներ լրջորեն ընդգրկվեն մանր և միջին բիզնեսի աջակցության քաղաքականության իրականացման գործընթացին, քանի որ մանր և միջին բիզնեսների տեղեկատվական ապահովումը նրանց արդյունավետ գործունեության հիմնական երաշխիքներից և կարևոր նախադրյալներից է:

Արագ արձագանքելու համար շուկայի հարափոփոխ պահանջներին, մանր և միջին բիզնեսները, շնորհիվ իրենց բնորոշ տեխնոլոգիական ճկունության և կառավարման համակարգի պարզության, ավելի հեշտությամբ ու ավելի քիչ ներդրումներով կարող են դիվերսիֆիկացիայի ենթարկել (ընդլայնել) իրենց արտադրատեսակները¹⁶⁸:

Կենսունակ փոքր և միջին բիզնեսի հատվածի զարգացման համար նախապայման է բարենպաստ մակրոտնտեսական միջավայրի առկայությունը, վերահսկվող սղաճը, առողջ մրցակցային դաշտի առկայությունը և մի շարք այլ պայմաններ, որոնք բոլորն էլ այս կամ այն չափով փոքր և միջին բիզնեսների մշակվող բիզնես պլանավորման և համընդհանուր պետական համակարգված տնտեսական քաղաքականության արդյունք են:

¹⁶⁸ Տես՝ Серегин А.М. “Эффективность малого бизнеса”, М. “Экономика”, 2010, էջ 118

Փորձը ցույց է տալիս, որ մանր և միջին բիզնեսի գործունեության բարենպաստ միջավայրի կայացման համար անհնար է առանց դրա իրավա-օրենսդրական հիմքի: Դա բացատրվում է այդ երկրներում ձեռնարկատիրական գործունեության ավանդույթների բացակայությամբ և, որպես կանոն, չարաշահումների մեծ չափերով: Պետության առաջնահերթ խնդիրն է ապահովել բարենպաստ իրավա-օրենսդրական դաշտ՝ ձեռնարկատիրության բնականոն զարգացման համար: Իրավա-օրենսդրական դաշտի ձևավորումը պետք է իրականացվի ոլորտի զարգացման պետական քաղաքականության և ռազմավարության հիմքի վրա:

Գոյություն ունեցող բազմաթիվ հիմնախնդիրներից մեկն էլ, որը խոչընդոտում է փոքր և միջին բիզնեսի ոլորտի զարգացմանը, ինֆորմացիոն պակասն է, որը գոյություն ունի հանրապետությունում: Զանգվածային լրատվության միջոցով պետք է տարածվի ամբողջական և հավաստի ինֆորմացիա: Փոքր և միջին բիզնեսի տեղեկատվական ապահովմանը նպաստող առավել արդիական և արդյունավետ միջոցներից է բիզնես-տեղեկատվական, տեղեկատվա-վերլուծական կենտրոնների, մանր և միջին բիզնեսի տեղեկատվական ապահովման համակարգված ցանցի ստեղծումը, որը հնարավորություն կտա ձեռնարկատերերին ամփոփ և ճշգրիտ տեղեկատվություն ստանալ իրենց գործունեությանը առնչվող հարցերի վերաբերյալ: Այս առումով ՀՀ-ում փոքր և միջին բիզնեսի զարգացման կարևոր ուղի է հանդիսանում տարբեր սեփականության ձևեր ունեցող ընկերությունների համար տվյալների բանկի ստեղծումը, որի հիմքը կազմելու են բիզնես-քարտեզները: Վերջինս պարունակում է գործարարությանն առնչվող բազմտեսակ տեղեկություններ, լայն հնարավորություններ է ընձեռում տարածաշրջանային մակարդակում փոքր և միջին բիզնեսի զարգացման և հետևաբար այս գործընթացին ուղեկցող բազմաթիվ այլ սոցիալ-տնտեսական բնույթի հիմնախնդիրների հաղթահարման նպատակին հասնելու համար:

Հիմանխնդիրները հաղթահարելու մյուս ուղին մենեջմենթի և մարքեթինգի մակարդակի բարձրացումը պետք է լինի: Ձեռնարկությունները խիստ կարիք ունեն բարձր որակավորում ունեցող մասնագետների, որոնք կկարողանան ճիշտ և ժամանակին վերլուծելու շուկայում տիրող իրավիճակը, ժամանակին տեղեկություն

տալ ձեռնարկություններին՝ շուկայում տեղի ունեցող փոփոխությունների մասին, իսկ մենեջերները պետք է կարողանան մարքետոլոգների կողմից տրված ինֆորմացիայի հիման վրա իրենց ունեցած ռեսուրսները օգտագործել ի շահ իրենց ձեռնարկությունների: Սակայն փոքր և միջին բիզնեսի ոլորտը ենթադրում է, որ գործարարն ինքը պետք է տիրապետի այդ հմտություններին, այսինքն տեխնիկական բնույթի հիմնախնդիրները լուծելու համար պետք է լրացվի գործարարների համապատասխան գիտելիքների պակասը: Պետք է նշել, որ այդ ուղղությամբ գործունեություն է ծավալում ՓՄՁ ՁԱԿ-ը:

Հաջորդ ուղին, որով կարելի է աջակցել փոքր և միջին բիզնեսի ոլորտին, տարբեր տեսակի իրավական նորմերի հստակեցումն է, որոնք կապված են լիզինգային, ֆակտորինգային, ֆրենչայզինգային գործունեության հետ:

Կարևոր է նաև հարկային և վարկային վարչարարությունը: Պետք է հնարավորինս թեթևացնել փոքր և միջին բիզնեսի հարկային բեռը, որը և հետևողականորեն իրականացվում է վերջին ժամանակներում: Պետք է մեծ ուշադրություն դարձվի վարկային ոլորտին: Վարկերը պետք է հասանելի դառնան փոքր և միջին բիզնեսների համար: Կարևորվում է նաև փոքր և միջին բիզնեսների աջակցությունն առևտրի ոլորտում, այսինքն պետք է հեշտացվի մուտքը դեպի ներքին և արտաքին շուկա: Պետությունը պետք է պարզեցնի նաև արտահանման և ներմուծման կարգավորումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսության թեմայի շրջանակներում կատարված ուսումնասիրությունները հնարավորություն են ընձեռում ներկայացնել ՀՀ-ում փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտում առկա հիմնախնդիրները և ՓՄՁ ոլորտի կառավարման արդյունավետության բարձրացմանն ուղղված հետևյալ հիմնական եզրակացությունները և առաջարկությունները:

✚ Ժամանակակից ձեռնարկատիրությունը բնութագրվում է որպես յուրահատուկ, նորարարական, հակաբյուրոկրատական տնտեսվարության ոճ, որի հիմքում են նոր հնարավորությունների անընդհատ փնտրտուքը, կողմնորոշումը դեպի նորարարությունը, դրված խնդիրների լուծման համար ամենատարբեր աղբյուրներից ռեսուրսների ներգրավման և օգտագործման ունակությունը: Տնտեսավարման ժամանակակից պրակտիկայում ձեռնարկատերերը հանդիսանում են շուկայական տնտեսության առաջատար սուբյեկտներ, որոնք զարգանում են տնտեսական օրենքների գործողության և գործունեության առարկայի ընտրության ազատության, արտադրության գործոնների շուկաների ընտրության և սպառման ազատության հիման վրա: Ձեռնարկատերերի վարքագծի ազատությունը հիմնվում է պետության կողմից նրանց գույքի պաշտպանության, արտադրության բոլոր գործոնների՝ այդ թվում նաև սեփականության բոլոր ձևերի գոյության երաշխիքի հիման վրա: Ցանկացած տնտեսության, և հատկապես անցումային և զարգացող տնտեսություն ունեցող երկրների համար ներկայումս լուրջ և կարևոր հիմնախնդիր է հանդիսանում գործարարության կայացումը ու դրա զարգացումը, որը նաև գտնվում է հասարակության լայն խավերի ուշադրության կենտրոնում: Բարեփոխումների արդյունավետ իրականացումը պետք է դառնա հիմնասյունը, գլխավոր նախապայմանը հասարակական քաղաքական, ինչպես նաև սոցիալ-տնտեսական հարաբերություններում

✚ ՓՄՁ-ները տնտեսավարման միջազգային պրակտիկայում հաճախ դասակարգվում են հետևյալ կերպ.

- բարձր պոտենցիալ ունեցող ձեռնարկություններ՝ գիտելիքահեն ոլորտներում, օրինակ՝ կենսատեխնոլոգիա, SCS և այլն,

- թաքնված չեմպիոններ (օրինակ՝ Գերմանիայում), որպես մասնագիտացված միջին բիզնեսներ՝ արդյունաբերական արտադրանքի արտահանման բարձր ներուժով, օրինակ՝ հաստոցաշինության, էլեկտրատեխնիկական արտադրության կամ ավտոմոբիլային ոլորտում:

- միջին արդյունաբերական ՓՄՁ-ներ, որոնք արտադրում են որոշակի արտադրական ապրանքներ կամ վերջնական արտադրանք տեղական և ազգային շուկայի համար, օրինակ՝ տեքստիլի և կարի ոլորտում, կամ տարբեր արտադրական ոլորտներում:

- տեղական ծառայություններ և արհեստագործական ձեռնարկություններ, օրինակ՝ սուպերմարկետներ, խանութներ, ատաղձագործարաններ և այլն, որոնք բավարարում են տեղական և ազգային սպառողական ապրանքների պահանջարկը:

Հայաստանի Հանրապետությունում ՓՄՁ աջակցության ռազմավարություն. 2015-2017թթ. փաստաթղթում առավել խոշորացված տեսքով ներկայացվում է, որ ՀՀ-ում ՓՄՁ-ն սահմանվում է «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով, համաձայն որի ՓՄՁ սուբյեկտները բաժանվում են գերփոքր, փոքր եւ միջին ձեռնարկատերերի.

- **գերփոքր** են համարվում մինչև 10 աշխատող և մինչև 100 մլն ՀՀ դրամ տարեկան շրջանառություն ունեցող տնտեսվարող սուբյեկտները;

- **փոքր** են համարվում մինչև 50 աշխատող և մինչև 500 մլն ՀՀ դրամ տարեկան շրջանառություն ունեցող տնտեսվարող սուբյեկտները;

- **միջին** են համարվում մինչև 250 աշխատող և մինչև 1 500 մլն ՀՀ դրամ տարեկան շրջանառություն ունեցող տնտեսվարող սուբյեկտները:

Սակայն, ըստ հարկային օրենսդրության գաղափարախոսության և հարկային մարմինների մոտեցումների, փոքր բիզնեսը այն տնտեսվարողներն են, որոնց տարեկան շրջանառությունը չի գերազանցում 58,35 մլն դրամը, միջինը այն տնտեսվարողներն են, որոնց շրջանառությունը չի գերազանցում տարեկան 500 մլն դրամը, իսկ դրանից ավել շրջանառություն ունեցողները համարվում են խոշոր: Իհարկե այս մոտեցումները հարկային օրենսդրության մեջ ամրագրված չեն, բայց

կիրառության մեջ մենք ականատես ենք լինում այս տեսակ դասակարգմանը, որն ականհայտ տարբերվում է «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով սահմանվածից: Եվ իրականում մենք չունենք մեկ միասնական մոտեցում ՓՄՁ-ի ձևակերպման նկատմամբ:

✚ ՀՀ ՓՄՁ SWOT վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ այս ոլորտը հարուստ է բազմաթիվ հնարավորություններով և առավելություններով, սակայն նրա առջև կան նաև անթիվ դժվարություններ և «թակարդներ», այդ իսկ պատճառով փոքր և միջին ձեռնարկատիրության կայունության աստիճանը բարձր չէ, և կարծիք կա, որ փոքր և միջին ձեռնարկատիրության կյանքի միջին տևողությունը 4-5 տարի է: Սակայն միայն փոքր և միջին ձեռնարկությունները կարող են փակել այն բացերը, որոնք չի կարող ծածկել խոշոր գործարարությունը: Դա առաջին հերթին հասարակությանը մատուցվող ծառայություններն են (հանգստի և զբոսաշրջության, կենցաղ-սպասարկման և այլ մանրածախ ոլորտներում) և բիզնես-ծառայությունները (մարքեթինգ, ինժեներինգ և այլն): Երկրորդն այն է, որ առանց բիզնես ծառայությունների շուկայական մեխանիզմը կզրկվեր ձեռնարկությունները սնուցող «մազանոթներից», այդ թվում նաև մեծ ձեռնարկությունները՝ անհրաժեշտ ինֆորմացիայից, կադրերից, այլ ռեսուրսներից: Քանի որ ռեսուրսների բազայում թարմացումը և համալրումը պարբերական բնույթ չի կրում, ձեռնարկությունների համար այդ ամենով զբաղվելը ձեռնտու չի լինի և ավելի մեծ ծախսեր կպահանջի: Այդ բեռն իր վրա է վերցնում փոքր և միջին բիզնեսը: Փոքր և միջին բիզնեսի զարգացումը վկայում է մրցակցության ուժեղացման մասին: Որքան զարգացած է մրցակցությունը, այնքան արդարացի կլինեն գները, այնքան փոքր են պետության կամ օլիգարխների հնարավորությունները թելադրել իրենց պայմանները, այնքան բարձր է տնտեսվարող սուբյեկտի տնտեսվարման ազատության մակարդակը:

✚ Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը էական դեր և նշանակություն ունի ՀՀ տնտեսական զարգացման, կառուցվածքային բարեփոխումների իրականացման և արտահանման խրախուսման գործընթացում, ինչպես նաև արդի տնտեսական ու սոցիալական հիմնախնդիրների լուծման կարևորագույն գործոն է հանդիսանում: Ներկայումս հանրապետությունում փոքր և միջին բիզնեսի կայացման և զարգացման համար ստեղծված են իրավական,

կազմակերպչական և ենթակառուցվածքային մի շարք կարևոր նախադրյալներ, ընդհանուր առմամբ մշակվել են փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մեխանիզմները, ստեղծվել են համապատասխան պետական կառավարման մարմիններ: Իսկ ՀՀ-ում փոքր և միջին բիզնեսի հետագա զարգացման գործնական ուղղություններից մեկը կարող է հանդիսանալ բիզնես ինկուբատորների, տեխնոպարկերի ակտիվ գործունեությունը, որը հնարավորություն կտա ձևավորել տարածաշրջանային շուկայական նոր ենթակառուցվածքներ: Կարծում ենք, որ փոքր և միջին բիզնեսի զարգացման պետական քաղաքականությունից բխող ծրագրերն ու միջոցառումները պետք է ուղղված լինեն տնտեսության արտադրական հատվածի վերակառուցմանը և հզորացմանը, քանի որ արտադրական ոլորտի ընդլայնումն ու զարգացումը կնպաստի փոքր և միջին բիզնեսի քաղաքականության հիմնական նպատակների իրագործմանը, այն է՝ արտադրության ծավալների աճ, առևտրային հաշվեկշռի պակասուրդի կրճատում, տեղական հումքի արդյունավետ օգտագործում, արտահանման ծավալների մեծացում, պարապուրդի մատնված արտադրական հզորությունների վերագործարկում, արտադրական հզորությունների եւ արտադրվող ապրանքների դիվերսիֆիկացիա և այլն: Փոքր և միջին բիզնեսի միջոցով թեթև արդյունաբերության զարգացումը անհրաժեշտ է դիտարկել որպես ներկրվող մի շարք ապրանքների արտադրությունը Հայաստանում կազմակերպելու և հետագայում այդ ապրանքներն արտահանելու մեծ հնարավորություն:

🇦🇹 ՀՀ-ում ՓՄՁ ոլորտի զարգացման նպատակով պետք է ֆինանսական աջակցություն ցուցաբերվի փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին ցածր տոկոսադրույքներով /երկարաժամկետ, արտոնյալ, լիզինգային/ վարկերի և հարկային արտոնությունների տրամադրմամբ, քանի որ ՀՀ-ում փոքր և միջին բիզնեսների մեծ մասը ֆինանսական սեփական աղբյուրների հաշվին ներդրումներ կատարելու հնարավորություն չունեն, իսկ վարկերը տրամադրվում են խիստ սահմանափակ ծավալներով ու բարձր տոկոսադրույքներով, իսկ ֆինանսական միջոցների ներգրավումը արժեթղթերի շուկայի միջոցով գրեթե անհնար է՝ արժեթղթերի երկրորդային շուկայի զարգացման սաղմնային փուլում գտնվելու պատճառով: Կարևոր է նաև գրանցված գյուտերի կիրառման, ինչպես նաև

նորարարությունների, գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների կազմակերպման համար փոքր և միջին ձեռնարկություններին տրամադրել արտոնյալ վարկեր՝ ընդհուպ մինչև առաջին երկու տարվա վարկային տոկոսադրույքի ամբողջական սուբսիդավորման պայմանով:

✚ Շատ կարևոր է իրականացնել փոքր և միջին ձեռնարկատիրության արտաքին առևտրի աջակցության և խրախուսման պետական քաղաքականություն. փոքր և միջին բիզնեսի կողմից արտադրվող ապրանքների արտահանումը խրախուսելու նպատակով ներդնել արտահանման վարկերի համակարգ՝ տարեկան մինչև հինգ տոկոս տոկոսադրույքով՝ հիմնվելով արտահանման մասին պայմանագրի և հաշիվ-ապրանքագրի վրա, պետության կողմից և միջոցներով ապահովել արտահանման պոտենցիալ ունեցող ապրանքատեսակների սերտիֆիկացումը և գովազդը արտաքին շուկաներում, ինչպես նաև յուրաքանչյուր դիվանագիտական ներկայացուցչության աշխատանքի գնահատման կարևորագույն չափորոշիչ սահմանել պատասխանատու տարածաշրջանում կամ երկրում Հայաստանից արտահանման ծավալների ավելացումը, հայկական կազմակերպությունների, հատկապես փոքր և միջին ձեռնարկությունների շահերի պաշտպանությունը, ինչպես նաև տվյալ երկրից դեպի Հայաստան ներդրումների աճը:

✚ Հանրապետությունում ՓՄՁ ոլորտի հետագա զարգացման համար էական նշանակություն ունի հայ ձեռնարկատերերի կազմակերպական և կառավարման գիտելիքների խորացման, մարքեթինգի, առաջավոր տեխնոլոգիաների յուրացման և այլ կարևոր մասնագիտական հմտությունների կատարելագործումը՝ փոքր և միջին բիզնեսների «կլաստերների» և բիզնես-աջակցման ասոցիացիաների, միությունների և այլ կառույցների միջև փոխհամագործակցության միջոցով:

✚ ՓՄՁ գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է կարևորել.

ա/ փոքր ու միջին ձեռնարկությունների չափորոշիչների ճիշտ ընտրությունն ու պետության կողմից այդ ձեռնարկությունների նկատմամբ իրականացվող աջակցության քաղաքականության հստակեցումը,

բ/ Հայաստանի փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի գործունեության ակտիվացումը, հատկապես մարզերում,

գ/ մրցակցային միջավայրի ձևավորումը:

✚ Ըստ ՀՀ մարզերի՝ գործարարության անհավասարաչափ զարգացման հիմնական պատճառներն են հանդիսանում

ա/ բնական ռեսուրսների ու պաշարների խիստ անհավասարաչափ բաշխվածությունը ըստ մարզերի,

բ/ ըստ մարզերի բնակչության խիստ անհավասարաչափ բաշխվածությունը:

գ/ ըստ մարզերի տնտեսության զարգացման մակարդակների զգալի տարբերությունները, որն առկա է տնտեսության գրեթե բոլոր ոլորտներում:

դ/ ըստ մարզերի գործարարության զարգացման մակարդակների համահարթման առումով անհրաժեշտ է կարևորել մարզերի տնտեսական ներուժի ճիշտ գնահատումը:

✚ ՀՀ-ում ՓՄՁ ոլորտի ծրագրային միջոցառումների համակարգն ընդգրկում է ՓՄՁ-ի զարգացման և պետական աջակցության միջոցառումների և ընթացակարգերի համակարգը, որոնցից առավելապես պետք է կարևորել՝

- ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության համապատասխան ենթակառուցվածքների պահպանում և ամրապնդում
- Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն
- Տեղական արտադրանքի խթանում և տեղական ապրանքանիշերի ձևավորում
- ՓՄՁ-ի սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի արտահանմանն աջակցության ծրագիր
- ՓՄՁ-ի սուբյեկտներում ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանն աջակցություն
- ՓՄՁ-ի սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցություն
- ՓՄՁ-ի սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) շուկաներ առաջնորդմանն աջակցություն

- ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն
- ՓՄՁ-ի սուբյեկտների կադրային ներուժի ձևավորում և զարգացում
- Հայաստանում Ձեռնարկությունների եվրոպական ցանցի հաղորդակցման կենտրոնի գործունեության ապահովում
- Միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների հետ ՓՄՁ-ի զարգացման համատեղ (համաֆինանսավորման սկզբունքով) ծրագրերի մշակում և իրականացում:

🚧 ՀՀ-ում փոքր և միջին ձեռնարկատիրության արտահանմանն ուղղված քաղաքականության իրագործման ընթացում անհրաժեշտ է՝

1. համագործակցել մասնավոր հատվածի հետ՝ ոլորտային զարգացման ռազմավարությունների իրականացման նպատակով,
2. նպաստել արտահանման ներուժ ունեցող ընկերությունների, հատկապես՝ ՓՄՁ-ների, ռազմավարությունների և գործառնությունների կատարելագործմանը,
3. բացահայտել արտահանման ներուժ ունեցող նոր ոլորտները և նպաստել այդ ոլորտներում արտահանման կարողությունների ձևավորմանը և զարգացմանը,
4. աջակցել Հայաստանում ավելացված արժեքի ստեղծման հնարավորությունների ընդլայնմանը,
5. ներգրավել անդրազգային ընկերություններ,
6. ուղղորդել և ձևակերպել խնդիրներ գործարար միջավայրի բարեփոխումների համար. որը բաղկացած է երկու խումբ գործոններից.
 - 6.1. Գործարարության կարգավորման դաշտ,
 - 6.2. Ենթակառուցվածքներ,
7. զարգացնել գործարարների աջակցման կառույցների կարողությունները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ

1. ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք, «ՀՀ պաշտոնական տեղեկագիր» 1998թ.
2. ՀՀ օրենքը «Ձեռնարկությունների և ձեռնարկատիրական գործունեության մասին» (Օրինագիծն ընդունված է ՀՀ Գերագույն խորհրդի կողմից 12 փետրվարի 1992թ. Հ.Ն-0511-Ի.)
3. ՀՀ օրենքը «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» (ընդունված ՀՀ Ազգային ժողովի կողմից 05.12.2000թ.)
4. «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին: (Ընդունված ՀՀ Ազգային ժողովի կողմից 05.10.2010թ.)
5. ՀՀ օրենքը «Պետական գույքի մասնավորեցման /սեփականաշնորհման մասին» (ընդունված ՀՀ Ազգային ժողովի կողմից 17.12.1997թ.)
6. ՀՀ օրենքը «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» (ընդունված ՀՀ Ազգային ժողովի կողմից 26.06.2001թ.)
7. ՀՀ օրենքը «Ավելացված արժեքի հարկի մասին» (ընդունված ՀՀ Ազգային ժողովի կողմից 27.07.1997թ.)

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԵՎ ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ ԱԿՏԵՐ

8. Փոքր և միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության 2010թ. ծրագիր /ՀՀ Կառավարության 2010թ. հունվարի 21-ի N 54-Ն որոշում
9. Փոքր և միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության 2011թ. ծրագիր /ՀՀ Կառավարության 2011թ. հունվարի 13-ի N 80-Ն որոշում
10. Փոքր և միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության 2012թ. ծրագիր /ՀՀ Կառավարության 2011թ. դեկտեմբերի 15-ի N 1790-Ն որոշում

11. ՀՀ Կառավարության որոշումը «Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին» 2014թ. ծրագիրը և ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին /26 դեկտեմբերի 2013 թվականի N 1511-Ն/
12. Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր /ՀՀ Կառավարության 2014թ. մարտի 27-ի թիվ 442-Ն որոշում/
13. Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարություն /ՀՀ Կառավարության 2011թ. դեկտեմբերի 15-ի նիստի N49 արձանագրային որոշում/
14. ՓՄՁ աջակցության ռազմավարություն. 2015-2017թթ, 2014թ. դեկտեմբեր
15. ՓՄՁ ոլորտը Հայաստանում 2013-2015թթ. Տեղեկագիր, 2016թ
16. Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի նախագծի ամփոփ նկարագիր / պատրաստվել է ՀՀ ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի աշխատանքային խմբի կողմից/: Երևան, 2014թ.
17. ՀՀ Կառավարության որոշումը Կայուն զարգացման ծրագիրը հաստատելու մասին /30 հոկտեմբերի 2008 թվականի N 1207-Ն/
18. ՓՄՁ քաղաքականության ինդեքս, Արևելյան գործընկեր երկրներ 2012: /2011-2012թթ. ընթացքում իրականացված «Տնտեսական քաղաքականության իրականացում» ծրագրի արդյունքում 2012թ. հոկտեմբերին հրատարակված աշխատություն:
19. Ասիական զարգացման բանկի «Կանանց ձեռներեցության զարգացում» ծրագիրը Հայաստանում:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

20. Բաբայան Է. Մելիքյան Ս. «Ձեռնարկատիրական գործունեության զարգացումը Հայաստանի Հանրապետությունում». Եր, Դանամա, 2006, 345 էջ
21. Բաղդասարյան Ա. «Փոքր և միջին բիզնեսի առանձնահատկությունները և զարգացման հեռանկարները ՀՀ-ում», Տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2007թ, 121 էջ
22. Բոստանջյան Վ., Հովակիմյան Թ., Ղուկասյան Գ. Հայաստանի Հանրապետության պետական պարտքի կառավարման հիմնախնդիրները: ԵՊՀ Տարեգիրք 2013, Տնտեսագիտության ֆակուլտետ, Եր.: ԵՊՀ հրատ. 2014, էջեր 233-244
23. Զալինյան Ռ. «Գործարարության զարգացման կազմակերպատնտեսական հիմնախնդիրները ՀՀ-ում», Տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2006թ, 156 էջ
24. Թամազյան Ա. «Ձեռնարկատիրական գործունեությունը և նրա զարգացման ուղիները ՀՀ-ում», Տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 1993թ., 180 էջ
25. Թորոսյան Թ. Միջազգային տնտեսագիտություն: Մենագրություն, Երրորդ հրատարակություն - Երևան, 2009, 205 էջ
26. Կիրակոսյան Գ., Ղուշյան Հ., Տիգրանյան Ի. Տնտեսագիտական բացատրական բառարան. Եր., «Տնտեսագետ», 1999թ, 464 էջ
27. Հայրապետյան Գ., Առաքելյան Ա., Առևտրի համաշխարհային կազմակերպության անդամակցության ազդեցությունը, Հայաստանի արտաքին առևտրատնտեսական համակարգի վրա, Երևան, 2004 (Բաժին 3, էջ 56-77, Բաժին 6 131-146)
28. Հովհաննիսյան Հ. Փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում: Ը.00.02 - «Տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի համար սեղմագիր: Երևան, 2012թ, 26 էջ
29. Ձեռնարկատիրական գործունեության կազմակերպում /Մ. Մելքումյանի ընդհ. խմբ./ ուս. ձեռնարկ: Երևան, Զանգակ, 2014թ. 512 էջ

30. Մարկոսյան Ա., Նազարյան Գ., Հախվերդյան Դ. Միջազգային տնտեսական հարաբերություններ, ուսումնական ձեռնարկ, Երևան, ԵՊՃՇՀ, 2012, Մաս I, 640 էջ
31. Մարկոսյան Ա. Սեփականության իրավունքի ինստիտուցիոնալ հիմքերի ձևավորման առանձնահատկությունները անցումային տնտեսությամբ երկրներում (ՀՀ օրինակով), Հայաստան, Ֆինասներ և էկոնոմիկա, 2005թ
32. Մելքումյան Մ. Ստվերային տնտեսության կրճատման, հարկային համակարգի բարելավման և ՀՀ պետական բյուջեի ընդլայնման ռեզերվները, ՀՀ էկոնոմիկայի նախարարության տեսական և գիտապրակտիկ հանդես 'էկոնոմիկա', N7-9/97
33. Պետրոսյան Ա. «Փոքր գործարարության կառավարման արդյունավետության բարձրացման ուղիները ՀՀ օրինակով» Տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2006թ, 144էջ
34. Սահակյան Ա. «Փոքր բիզնեսի էությունը և խրախուսման անհրաժեշտությունը շուկայի պայմաններում», Երևան, ՀՀ ՖԷՆ ՏՀԻ հրատարակչություն, 1999թ., 56 էջ
35. Սարիբեկյան Ա., Բեժանյան Ա. Խորհրդատվության և վերապատրաստման դերը ՀՀ ձեռներեցության զարգացման համակարգում: Ե., ԵՊՀ, 142 էջ
36. Агафонов А. Тенденции развития финансовой поддержки малого бизнеса ЭПОС. – 2010. - №4 – с. 23-28
37. Айдинов Х. Процесс приватизации в свете модернизации экономики России / Х.Айдинов, В.Гугняк // Власть. - 2013. - N 11., 34-48 с.
38. Акимов О. Малый и средний бизнес: эволюция понятий, рыночная среда, проблемы развития. М., Финансы и статистика, 2011, - 193 с
39. Анализ процессов приватизации государственной собственности в Российской Федерации за период 1993-2003 гг. Выводы и рекомендации // Российский экономический журнал. - 2005. - N 4.
40. Бахрушина М. Оценка эффективности бизнеса // Экономика и жизнь. 2013.- №11(март), 8-21 с.
41. Береснева А. Роль малого бизнеса в развитии экономики // ЭКО.-2014.-№8 – 28-39 с.
42. Бизнес-планирование и инвестирование: Учебник./ С.И. Головань, М.А. Спиридонов. Ростов н/Д, Феникс, 2008, - с. 302
43. Блауг М. Кантильон, Ричард // 100 великих экономистов до Кейнса = Great Economists before Keynes: An introduction to the lives & works of one hundred great economists of the past. — СПб.: Экономикс, 2008, – 287 с

44. Бухвальд Е., Виленский А. Российская модель взаимодействия малого и крупного предпринимательства // Вопросы экономики.-2006.- №12. – 34-44 с.
45. Вечканов Г. С. Экономическая безопасность: Учебник / Г. С. Вечканов. – СПб.: Питер, 2010. – 384 с.
46. Вечканов Г.С. Экономическая теория: учебное пособие / Г. С. Вечканов, Г.Р. Вечканова – М.: Эксмо, 2010. – 448 с.
47. Высоков В.В. Приватизация в России – путь: к богатству?... к банкротству? ...Ростов на Дону, 1994г – 211 с.
48. Буров В. Ю. Малое предпринимательство в Забайкальском крае / В.Ю. Буров, Н.А. Кручинина – Иркутск, 2011. – 201 с.
49. Буров В. Ю. Малое предпринимательство в России и Байкальском регионе / В.Ю. Буров, В.С. Потаев, А.П. Суходолов. – Иркутск, 2011. – 280 с.
50. Буров, В.Ю. Основы предпринимательства: учебное пособие / В.Ю. Буров. – Чита, 2011. – 441 с.
51. Гайворонская С.А. Методы бизнес-расчётов в среде табличного процессора Excel: Учебное пособие. - Воронеж: ИПЦ ВГУ, 2007, - 75 с.
52. Голяков С.М. Общий и стратегический менеджмент. Бизнес-планирование на малых и средних предприятиях. Вестник Санкт-Петербургского университета. - 2003. Сер. 8. Вып. 4 (№ 32)
53. Гребенюк Н. Законодательное регулирование предпринимательства: итоги и перспективы // Экономика и жизнь. 2015.- № 52(дек.), 8-19 с.
54. Дубровин, И. А. Бизнес-планирование на предприятии [Электронный ресурс] : учебник для бакалавров / И. А. Дубровин. - 2-е изд. - М.: Дашков и К, 2013. - 432 с
55. Европа. Специальный выпуск. 2015. № 13/7
56. Индивидуальный предприниматель: практическое руководство. Под общей ред. Ю.Л.Фадеева. – М. :Эксмо, 2010. – 224 с.
57. История предпринимательства России: курс лекций. С.И. Сметанин. – М.: КНОРУС, 2010. – 192 с.
58. Кейнс Дж. М. Общая теория занятости, процента и денег. М., Гелиос АРВ, 2002, 352 с.
59. Королев В. Предпринимательство дело новое или хорошо забытое? // Знание.-2015.- № 1-2., 5-17 с.
60. Круглова Н. Ю. Основы бизнеса (предпринимательства): учебник / Н.Ю. Круглова. – М.: КНОРУС, 2010. – 544 с.
61. Крутик А.Б. Проблемы и перспективы развития предпринимательства в российской экономике// Проблемы современной экономики. — 2009. – №2
62. Кудашев В. Основы бизнес-планирования / Отв. ред. О. Олийнык. Украинская Консалтинговая Сеть., 2015, - 245 с.

63. Кудров В.М. Актуальные проблемы приватизации в России // Европа и Россия: Опыт экон. преобразований. - М., 2003 - 312 с.
64. Кузнецов Ю.В. Предпринимательство и развитие новых форм организаций. Сборник: Экономическое возрождение России №2 (28). Издательство: АНО «Институт проблем экономического возрождения». 2014, - с 12-19
65. Кузнецов В.В. Методические указания для проведения деловой игры по разработке бизнес-проекта предпринимательской деятельности со студентами направлений: "Менеджмент" и "Коммерция". Ульяновск: УлГТУ, 2000, - 188 с.
66. Лапуста М." Предпринимательство", ИНФРА-М, 2004 г., 533 с.
67. Лапуста М.Г., Старостин Ю.Л. Малое предпринимательство : учебник. М.: ИНФРА-М, 2007, 555 с.
68. Левитас А.Больше денег от вашего бизнеса. Партизанский маркетинг в действии; Издательство: Манн, Иванов и Фербер. 2014 год, - 215 с.
69. Малое и среднее предпринимательство в России. 2009: Стат. сб./ Росстат. — М., 2009. – 151 с.
70. Малое предпринимательство в России: прошлое, настоящее и будущее / Под ред. Е.Г. Ясина, А.Ю. Чепуренко, В.В. Буева. – М.: Фонд «Либеральная миссия», 2003 – 220 с.
71. Маслов Д. Белокопровин Э. Малый бизнес. Стратегии совершенствования на основе управления качеством. М. Изд. ДМК Пресс, 2008, -190 с.
72. Мескон М., Альберт М., Хедоури Ф.. ОСНОВЫ МЕНЕДЖМЕНТА. Перевод с английского. Москва: Издательство "Дело", 1997, 704 с.
73. Мизес Л. «Всеобщее вздорожание жизни в свете теории политической экономии» — Сборник № 4 («Вздорожание жизни») под редакцией М. Туган-Барановского, 1914, – 122 с.
74. Мишин А. Инвестиционная поддержка малого бизнеса // РЭЖ.-1998,- № 5 – 24-35 с.
75. Набатников В.М. Организация предпринимательской деятельности. Учебное пособие/В.М. Набатников. – Ростов-на Д.: Феникс, 2011 – 256 с.
76. Нестеренко Ю.Н. Малый бизнес: тенденции и ориентиры развития в современной России. – М.: Издательский центр РГГУ, 2007 – 387 с.
77. Оноприенко В. И., Мелкие предприятия: Опыт, проблемы: М. Профиздат., 2010 – 355 с.
78. Орлова Е. Бизнес-план основные проблемы и ошибки, возникающие при его написании Серия: Оптимизация бизнес-процессов. Издательство: Омега-Л, 2005 – 277 с.
79. Организация предпринимательской деятельности. Схемы и таблицы. Учебное пособие. В.П. Попков; Е.В. Евстафьева. СПб.: Питер, 2011.- 352 с.
80. Основы финансового менеджмента. Ван Хорн Дж.К., Вахович Дж.М. 12-е изд. - М.: "И.Д. Вильямс", 2008, - 1232 с.

81. Павлов В.А., Попов С.О. Как разработать бизнес-план и оформить документы на получение кредита. Методическое пособие для предпринимателей, действующих в Новгородской области. - Великий Новгород, 2014, - 135 с.
82. Подберезкин А., Стреляев С. и др. Из истории приватизации в России. М., 2014, - 264 с.
83. Поляков П.В., Коробов С.А. Программные инструменты разработки бизнес-планов: система Project Expert: Учебное пособие. - Волгоград: Изд-во ВолГУ, 2004 – 88 с.
84. Предпринимательство: учеб. / под редакцией В.Я. Горфинкеля, Г.Б. Поляка, В.А. Швандара. – М.: ЮНИТИ-ДАНА, 2011 – 581 с.
85. Предпринимательство: учеб. / под редакцией М.Г. Лапусты. – М.: ИНФРА-М, 2009. – 667 с.
86. Приватизация: государство, гражданин и право, под. ред. проф. А. Козырина. М., ЗАО «Библиотечка 2012, - 176 с.
87. Приватизация. Вопросы и ответы. - М., 2001
88. Приватизация: Глобальные тенденции и национальные особенности: сб. ст. / под ред. Виноградова В.А. - М.: Наука, 2006 – 355 с.
89. Пчелинцев О. Приватизация против рынка // Общественные науки и современность. - 1991. - N 4. – 25-32 с.
90. Радченко Я. Проблемы рационального сочетания малых, средних и крупных предприятий в условиях перехода к рыночной экономике // Известия Академии наук СССР.-1991 .-№ 1, 14-22 с.
91. Разумнова И., Мелкие предприятия в промышленности США, Проблемы теории и практики управления: 2001, - 176 с.
92. Рикардо Д. Начала политической экономии и налогового обложения. /научный редактор П. Ключин. М. 2007– 960 с.
93. Самарина В.П. Основы предпринимательства: учеб.пособие / В.П. Самарина. – М.: КНОРУС,2009. – 224 с.
94. Серегин А.М. “Эффективность малого бизнеса”, М. “Экономика”, 2010 – 263 с.
95. Силаев И. Малые предприятия и экономическая политика государства // Проблемы теории и практики управления. 2013 № 3 – с. 10-17
96. Сухопаров А. Приватизация: ожидания и реальность // Диалог. - 2012. - N 4 – 16-31 с.
97. Тарасов Н. Частные пруды / Записал А.Камакин // Итоги. - 2003. - N 40. – 24-44 с.
98. Туренко Т.А. Малое предпринимательство и его роль в устойчивом развитии экономики/Т.А. Туренко//Известия иркутской государственной экономической академии. – 2010. – №5. – С.223-227
99. Угланов А. Приватизация по-русски. Делили по-честному, обманули почти всех // Аргументы и факты. - 2004. - Дек. (N 49).
100. Федорова Л.В. Понятие приватизации недвижимых объектов культурного наследия // Государство и право. - 2011. - N 7. – 54-63 с.

101. Фокс Джеффри Дж. Как делать большие деньги в малом бизнесе. Неочевидные правила, которые должен знать любой владелец малого бизнеса. Издательство: Альпина аблишер. 2008 год, - 176 с.
102. Халтаева С.Р., Яковлева И.А. Бизнес-планирование. Учебное пособие. Улан-Удэ: Изд-во ВСГТУ, 2005, - 422 с.
103. Хизрич Р. Питере М. Предпринимательство. Вып. 1. Пер. с англ./Общ. ред. В.С. Загашвили. - М.: Прогресс, 1992. - 160 с.
104. Черноуцан Е. Государство и приватизация крупных компаний в отраслях высоких технологий // Мировая экономика и междунар. отношения - 2002. - N 10. – 27-41 с.
105. Чепуренко А.Ю. Малый бизнес в рыночной среде /А. Ю. Чепуренко. – М.: Издательский дом Международного университета в Москве, 2009. – 324 с.
106. Шапиро Л.Д. Методическое пособие по составлению бизнес-планов с использованием программного продукта "Project Expert". Томск, 2015, - 344 с,
107. Шумпетер И. "Теория экономического развития", М. "Прогресс", 1982. — 455 с.
108. Экономический словарь /Отв. ред. А.И. Архипов. – М.; ТК Велби, Изд-во Проспект, 2011. – 486 с.
109. Ядгаров Я.С. История экономических учений. 4-е изд., перераб. и доп. - М.: М, 2009, - 455 с.
110. As It the Mattered: Translating Social and Economic Theory into Human Behavior // N.R. Goodwin (ed.). Ann Arbor (Mich.), 2012
111. George Arthur Akerlof. Economics and Sociology: Redefining Their Boundaries : Conversations with Economists and Sociologists. Princeton University Press. p. 61. ISBN 9780691003764. Retrieved 2014-10-25
112. HACCR. A Practical Approach. Authors: Mortimore, Sara, Wallace, Carol
113. Jayson Demers. 7 Dark Truths About Enterpreunership. Founder and CEO, Audience Bloom. 2016. <http://www.entrepreneur.com/article/245640>
114. Michael Porter, "The Competitive Adventage of Nation", 2008
115. Small Business in Japan "White paper on small and medium enterprises in Japan" MITI, 2015
116. US Small Business Administration, Japan Industrial census – DG XXIII / Eurostat – Decision 2014
117. US Small Business Administration, Japan Industrial census – DG XXIII / Eurostat – Decision, 2013
118. www.gov.am
119. www.mfe.gov.am
120. www.armstat.am
121. www.parliament.am

122. http://ec.europa.eu/eurostat/statistics-explained/index.php/Resource_productivity_statistics
123. http://ec.europa.eu/eurostat/statistics-explained/index.php/File:Enterprise_size_class_analysis_of_key_indicators_non-financial_business_economy_EU-27_2009.PNG
124. <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1952&lang=arm>
125. www.rdfund.org/sites/default/files/SME%20strategy%202015%20-%202017.pdf
126. <http://www.legislation.gov.uk/ukpga/2015/26/contents/enacted>
127. <http://www.mineconomy.am/arm/38/gortsaruyt.html>
128. <http://www.smednc.am/files/pdfs/attachments/original/4a5020242d.pdf>
129. <http://www.rdfund.org/sites/default/files/SME%20strategy%202015%20-%202017.pdf>
130. http://www.smednc.am/am/content/sme_state_support/
131. <http://newsarmenia.am/am/news/economy/-Hayastani-tntesutyuny-2015-t-in-/>
132. <http://www.heritage.org/index/country/armenia>
133. <http://www.rdfund.org/sites/default/files/SME%20strategy%202015%20-%202017.pdf>
134. http://www.doingbusiness.org/~/_media/GIAWB/Doing%20Business/Documents/Annual-Reports/English/DB16-Full-Report.pdf
135. http://www.forbes.com/best-countries-for-business/#/tab:overall_page:9
136. http://www.aif.ru/money/business/top-20_samyh_pribylnyh_vidov_malogo_biznesa
137. http://archive-am.com/am/a/ada.am/2012-11-07_600070_46//